



**«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների
գործարանի ընդլայնման**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ԿՐԱ ԱՁԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան 2023թ.

Յեղիակ

Ծառուրյան Քընսալթինգ



<https://tsaturyanconsulting.am/>
Mob; (+374) 94 800 877; E-mail;
info@tsaturyanconsulting.am

<<12>> Հունիսի 2023թ.

Ալափմետ ՓԲԸ-ի

Տնօրեն



Արմեն Մելիքյան

Շրջակա միջավայրի և սոցիալական

ռիսկերի գնահատող



Արայիկ Ծառուրյան

Բովանդակություն

1. Ներածություն	4
2. Գործունեության իրավական հիմքերը	6
3. Նախագծի այլընտրանքները, այդ թվում՝ գրոյական տարբերակը	19
4. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	21
<i>Ազդակիր համայնք</i>	30
5. Բնական պայմաններ	36
6. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը	55
Անհատական Ջրօգտագործման և Ջրահեռացման Նորմաների Հաշվարկ	58
Կազմակերպության բնութագիրը, որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր	82
Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը	91
Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները	91
Հողի որակի նորմեր	98
Թափոնների կառավարում	98
7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր	105
8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում	109
9. Անբարենպաստ օդերեվիթաբանական պայմաններում եվ վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները	112
10. Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ	114
11. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը կամ նվազեցմանը ուղղված միջոցառումների ծրագիր	115
Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր	116
Օգտագործված գրականության ցանկ	119
Հավելված 1	120
Հավելված 2	124
Հավելված 3	125
Հավելված 4	126
Հավելված 5	126
Հավելված 6	127
Հավելված 7	130
Հավելված 8	131
Հավելված 9	133

1. Ներածություն

Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Նախագծով իրականացվելիք աշխատանքների արդյունքում նախատեսվող շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակված է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին օրենքի հիման վրա:

Հաշվետվությունը ներառում է տվյալներ, հիմնավորումներ և հաշվարկներ, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության ազդեցության փորձաքննության իրականացման համար:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (այսուհետ՝ ՇՄԱԳ) նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կանխատեսվող էկոլոգիական ազդեցությունը (շրջակա միջավայրը աղտոտող վնասակար նյութերը, թափոնները և այլ գործոններ), վերլուծել և գնահատել այն և ցույց տալ, որ նախատեսված են դրա կանխարգելմանը, չեզոքացմանը և կամ նվազեցմանը ուղղված անհրաժեշտ միջոցառումներ:

Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունների կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, դրանց նկարագրիրը, որը հիմք կհանդիսանա շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառմանն ուղղված պարտադիր միջոցառումների մշակման և կիրառման համար:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի համաձայն:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի /Այսուհետ՝ Օրենք/ 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են մինչև հիմնադրությային փաստաթղթի ընդունումը և (կամ) նախատեսվող գործունեության իրականացումը: Փորձաքննության իրականացման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գնահատումը և փորձաքննությունն իրականացվում են՝ հիմք ընդունելով նախատեսվող գործունեության տեսակը, չափերն ու տեղադրությունը և դրանցով պայմանավորված՝ հնարավոր գումարային, ամբողջական ազդեցության աստիճանը:

Փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝

1) նախնական փուլ, որի ընթացքում ուսումնասիրվում է նախնական գնահատման հայտը.

2) հիմնական փուլ, որի ընթացքում փորձաքննվում է հիմնական գնահատման հաշվետվությունը:

Համաձայն Օրենքի հայտը՝ ձեռնարկողի կամ նրա պատվերով կազմած ծանուցման փաթեթ է որը ներառում է հիմնադրությային փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին:

Փորձաքննության նախնական փուլն իրականացվում է ձեռնարկողի կողմից նախնական գնահատման հայտը լիազոր մարմին ներկայացնելու օրվանից 30 աշխատանքային օրվա ընթացքում:

Փորձաքննության նախնական փուլում՝

1) քննարկվում է ներկայացված նախնական գնահատման հայտի լրակազմությունը.

2) կանխորոշվում են շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի դրույթների և (կամ) նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության շրջանակները, Ա և Բ կատեգորիաների համար սահմանվում են գնահատումների հաշվետվության բովանդակությունն ու դրան վերաբերող պահանջները, որոշվում են գործընթացի մասնակիցների շրջանակները, կազմվում և ձեռնարկողին է տրամադրվում այդ ամենն ամփոփող ազդեցության գնահատման տեխնիկական առաջադրանքը:

Փորձաքննության հիմնական փուլն սկսվում է սույն օրենքով սահմանված տեխնիկական առաջադրանքին համապատասխան կազմված հաշվետվությունը կից փաստաթղթերով ձեռնարկողի կողմից լիազոր մարմին ներկայացնելու պահից:

Փորձաքննության հիմնական փուլի ժամկետները չպետք է գերազանցեն՝

- 1) հիմնադրությամբ փաստաթղթերի դեպքում՝ մինչև 60 աշխատանքային օր.
- 2) նախատեսվող գործունեության Ա կատեգորիայի դեպքում՝ մինչև 60 աշխատանքային օր.
- 3) նախատեսվող գործունեության Բ կատեգորիայի դեպքում՝ մինչև 40 աշխատանքային օր:

Փորձաքննության գործընթացների լիարժեքությունն ապահովելու համար լրացուցիչ աշխատանք կատարելու ու այլ տեղեկատվություն ձեռք բերելու անհրաժեշտության դեպքում լիազորված մարմնի հիմնավորված որոշմամբ փորձաքննության հիմնական փուլի ժամկետը կարող է երկարաձգվել յուրաքանչյուր կատեգորիայի համար, լիազոր մարմնի հիմնավորված որոշմամբ, սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի կեսը չգերազանցող չափով, բայց ոչ ավելի, քան մեկ անգամ, գրավոր տեղեկացնելով ձեռնարկողին:

2. Գործունեության իրավական հիմքերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթեր:

Քաղաքական, օրենսդրական և վարչական շրջանակները

Սույն գլուխը ներկայացնում է «Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծին առնչվող շրջակա միջավայրի վրա ազդեցությունը կարգավորող ազգային և միջազգային իրավական և մեթոդական փաստաթղթերը:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագիծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության /ՇՄԱԳ/ մշակման համար հիմք է հանդիսացել 2014թ.-ի հունիսի 21-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (Այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը: Ըստ Օրենքի 16-րդ հոդվածի նախատեսվող

գործունեության նախագծային փաստաթղթերի փորձաքննությունն իրականացվում է երկու փուլով՝ նախնական և հիմնական: Նախնական փուլում կազմվում է նախատեսվող գործունեության փաստաթղթի գնահատման նախնական հայտը, որի փորձաքննության հիման վրա տրամադրվում է տեխնիկական առաջադրանք, ինչը հիմք է ծառայում ՇՄԱԳ հաշվետվության մշակման համար:

Ներկայացվող ՇՐՁԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ (ՇՄԱԳ) ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ կազմվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված Տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

ՀՀ ազգային օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Ըստ ՀՀ Սահմանադրության (ընդունվել է 1995թ., փոփոխվել 2005 և 2015 թվականներին) 10-րդ հոդվածի «Պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը»:

Հոդված 33.2-ով սահմանված է որ. «Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

1991 թվականից առ այսօր ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ են ընդունվել, որոնք կարգավորում են շրջակա միջավայրի հետ կապված իրավահարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք

Հողօգտագործման և հողի աղտոտման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքով (ընդունված 02.05.2001): Ելնելով օրենսգրքի պահանջներից ՀՀ կառավարության կողմից ընդունվել են «Հողերի ռեկուլտիվացմանը ներկայացվող պահանջների և ռեկուլտիվացման ենթակա՝ խախտված հողերի դասակարգման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (29.05.2006 թիվ 750-Ն), «Հողերն աղտոտումից պահպանելու ընդհանուր պահանջների, հողն աղտոտող վնասակար նյութերի ցանկի և հողերի աղտոտվածության աստիճանի գնահատման տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» (24.08.2006 թիվ 1277-Ն), «Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և հանված բերրի շերտի պահպանմանն ու

օգտագործմանը ներկայացվող պահանջները սահմանելու և ՀՀ կառավարության 2006 թվականի հուլիսի 20-ի թիվ 1026-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին” (02.1.2017 թիվ 1404-Ն) որոշումները:

“Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և ինդեքսավորման կարգը” ընդունվել է ՀՀ բնապահպանության նախարարի 24.12.2012թ. N 365-Ն հրամանով:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծին առնչվող հողատարածքների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն ՀՀ հողային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգիրք

Ջրօգտագործման, ջրահեռացման, մակերեսային և ստորգետնյա ավազանների օգտագործման և պահպանության հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով (ընդունված 04.06.2002) և Հայաստանի Հանրապետության «Հայաստանի Հանրապետության ջրի ազգային ծրագրի մասին» օրենքով:

ՀՀ մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը սահմանվել են ՀՀ կառավարության 27.01.2011թ. N75-Ն որոշմամբ հաստատված “Կախված տեղանքի առանձնահատկություններից՝ յուրաքանչյուր ջրավազանային կառավարման տարածքի ջրի որակի ապահովման նորմերով:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծին առնչվող ջրային ռեսուրսների օգտագործման հարցերը կարգավորվում են համաձայն ջրային օրենսգրքի պահանջների:

Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգիրք

ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պահպանության խնդիրները, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերք օգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության 2011թ. նոյեմբերի

28 ընդերքի մասին օրենսգրքով:

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրք

Սույն օրենսգիրքը ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, այն կարգավորում է կոլեկտիվ եւ անհատական աշխատանքային հարաբերությունները, սահմանում է այդ հարաբերությունների ծագման, փոփոխման եւ դադարման հիմքերն ու իրականացման կարգը, աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավունքներն ու պարտականությունները, պատասխանատվությունը, ինչպես նաեւ աշխատողների անվտանգության ապահովման ու առողջության պահպանման պայմանները:

Աշխատանքային պայմանագիրը համաձայնություն է աշխատողի եւ գործատուի միջեւ, կազմված համաձայն ածխատանքային օրենսգրքի, այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների հիման վրա:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի գործառույթները իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել աշխատանքային օրենսգրքի պահանջներով:

“Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին” Հայաստանի Հանրապետության օրենք (2014)

Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության, համաձայն “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” 2014թ.-ի Հայաստանի Հանրապետության օրենքի: Վերը նշված օրենքի 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները:

Օրենքը դասակարգում է գործունեության տեսակները ըստ ծավալների և ազդեցության մակարդակի՝ “Ա”, “Բ” և “Գ” կատեգորիաների: Կատեգորիաները որոշված են էլնելով գործունեության ծավալներից և շրջակա միջավայրի վրա ազդեցության մակարդակից:

Փորձաքննությունը իրանացվում է երկու փուլով: Առաջին փուլում ներկայացվում է գործունեությունը նկարագրող հակիրճ բացատրագիր (նախնական գնահատման հայտ), կազմակերպվում են առաջին հանրային քննարկումները և բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են բնապահպանության նախարարություն: 30 աշխատանքային օրվա ընթացքում նախարարության կազմում գործող փորձաքննական կենտրոնը ուսումնասիրում է հայտը և կազմակերպում երկրորդ հանրային քննարկումները, որից հետո տրամադրում է տեխնիկական առաջադրանք “Ա” և “Բ” կատեգորիաների համար, իսկ “Գ” կատեգորիայի դեպքում՝ փորձաքննական եզրակացություն:

Երկրորդ փուլում ձեռնարկողը կազմակերպում է երրորդ հանրային լսումները, որտեղ ներկայացնում է գործունեությունը նկարագրող փաստաթուղթը (ծրագիր, նախագիծ) և ՇՄԱԳ հաշվետվությունը, որոնք, լսումների նյութերի հետ մեկտեղ ներկայացվում են փորձաքննական կենտրոն:

“Ա” կատեգորիայի համար փորձաքննության հիմնական փուլը տևում է 60 աշխատանքային օր, իսկ “Բ” կատեգորիայի համար՝ 40 աշխատանքային օր, որի ընթացքում կազմակերպվում են չորրորդ հանրային քննարկումները: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

Ըստ օրենքի հիմնադրությային և նախատեսվող գործունեությունների փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական գործընթացն իրականացվում է 2 փուլով 4 հանրային քննարկումների իրականացմամբ: Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական դրական կամ բացասական եզրակացություն:

ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին՝

ՀՀ օրենք /12.12.1992թ./

Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման իրավական, տնտեսական եւ կազմակերպական հիմքերը, ինչպես նաեւ պետության կողմից նախատեսվող այն երաշխիքները, որոնք բացառում են մարդու օրգանիզմի վրա շրջակա միջավայրի վնասակար եւ վտանգավոր գործոնների ազդեցությունը եւ բարենպաստ պայմաններ ապահովում նրա եւ ապագա սերունդների կենսունակության համար:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի

շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ անձնակազմի սանիտարահամաճարակային անվտանգության խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի:

Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին ՀՀ օրենք /04.03.1996թ./

Սույն օրենքը սահմանում է մարդու առողջության պահպանման սահմանադրական իրավունքի իրականացումն ապահովող բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման, իրավական, տնտեսական և ֆինանսական հիմունքները:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ աշխատողների և մերձակա բնակչության առողջության ապահովման խնդիրները կարգավորվում են սույն օրենքով:

«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք

Օրենքը ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 11-ին: Սույն օրենքը սահմանում է հուշարձանների պահպանության եւ օգտագործման բնագավառի իրավական հիմքերը: Այն կարգավորում է գործունեության ընթացքում ծագող հարաբերությունները:

Հոդված 15-ում ներկայացվում է Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը, այդ թվում հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը, հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը: .

Հոդված 22-ում ներկայացվում է հուշարձաններ ներառող տարածքներում շինարարական և այլ աշխատանքների համար հողի հատկացումները, նախագծերի համաձայնեցումը և այդ աշխատանքների ընթացքում հուշարձանների պահպանության ու անվթարության ապահովումը:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի իրականացման ընթացքում պատմամշակութային արժեքների հետ կապված բոլոր խնդիրները պետք է կարգավորվեն ըստ այս օրենքի և ՀԲ պահանջների:

ՀՀ բուսական աշխարհի մասին օրենք (23.11.1999 թ.)

ՀՀ պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում սահմանում է “Բուսական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 23.11.1999 թ.):

Գործընթացի ավարտին տրվում է փորձաքննական եզրակացություն:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի տարածքներում բնական բուսականության պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Հայաստանի Հանրապետության կենդանական աշխարհի մասին օրենք

ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը սահմանում է “Կենդանական աշխարհի մասին” ՀՀ օրենքը (ընդունված 03.04.2000թ.):

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի տարածքներում վայրի կենդանիների պահպանության, միջոցառումների կատարման հարցերը կարգավորվում են այս օրենքով:

Այս օրենքների պահանջների կատարումը ապահովելու համար ՀՀ կառավարության կողմից 29.01.2010 թ. թիվ 71-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ կենդանիների կարմիր գիրքը և 29.01.2010 թ. թիվ 72-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բույսերի կարմիր գիրքը:

Հայաստանի Հանրապետության թափոնների մասին օրենք

Թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը կարգավորվում են “Թափոնների մասին” ՀՀ օրենքով (ընդունված 24.11.2004):

ՀՀ բնապահպանության նախարարը 25.12.2006 թ. N 430-Ն հրամանով հաստատել է

«Ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկը»:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի

շրջանակներում շինարարական, արտադրական և կենցաղային թափոնների կառավարումը պետք է իրականացվի ըստ սույն օրենքի պահանջների:

Բնապահպանական վերահսկողության մասին ՀՀ օրենք (2005)

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման խնդիրները եւ սահմանում է Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական օրենսդրության նորմերի կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, կարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների եւ բնապահպանական վերահսկողության իրավական ու տնտեսական հիմքերը:

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի շրջանակներում նախատեսվող գործունեությունների աշխատանքների կազմակերպման ժամանակ բնապահպանական օրենսդրության կատարումը վերահսկվելու է բնապահպանական և ընդերքի տեսչական մարմնի կողմից համաձայն սույն օրենքի դրույթների:

ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենք

Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները կարգավորում է «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը (ընդունված 27.11.2006թ.):

«Ալափմետ» ՓԲԸ-ի ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման նախագծի իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի դրույթներով:

«ՀՀ բույսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» ՀՀ

կառավարության 31.07.2014 թ. N 781-Ն որոշումը

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրաման “Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին”

Նշված սանիտարական նորմերով սահմանվել են արտադրական, սպասարկման և այլ տեսակի գործունեության արդյունքում առաջացող աղմուկի ազդեցության մակարդակը և ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 25 հունվարի 2010թ. N 01-Ն հրաման “Հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ N 2.1.7.003-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին”

Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմերը սահմանում են հողի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջները՝ հողի սանիտարական վիճակի հիգիենիկ գնահատականը, հողի որակի հսկողությունը, հողի սանիտարական վիճակի գնահատման հիմնական ցուցանիշները՝ կախված դրանց ֆունկցիոնալ նշանակությունից, հողի աղտոտվածության աստիճանից կախված հողի օգտագործման առաջարկները:

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրաման “Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆ N 2.2.4-009-06 հաստատելու մասին”

Հիգիենիկ նորմերը սահմանում են թրթռման դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման սահմանային թույլատրելի մակարդակները ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման թույլատրելի մակարդակները:

- «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-522-Ն (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.-ին) – կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

- «Ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձեւավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների

տարածքների սահմանման չափորոշիչների մասին ՀՀ կառավարության որոշում (2005թ. հունվարի 20, N 64-Ն),

- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» N1059-Ա:
- ՀՀ կառավարության 2008 թվականի N 967-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 2017 թվականի հունվարի 19-ի N 36-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 08.02.2018 թվականի N 108-Ն որոշում:
- ՀՀ կառավարության 22 դեկտեմբերի 2011 թվականի N 1854-Ա որոշում:
- ՀՀ կառավարության «ՀՀ կառավարության որոշումը հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի N 1622-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և 2001թ. ապրիլի 12-ի N 286-ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը:

Միջազգային համաձայնագրեր

Ի լրումն վերը թվարկված նորմատիվային ակտերի, ստորև բերված են ՀՀ կողմից ստորագրված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները և դրանց կարգավիճակը ՀՀ-ում:

ՀՀ կողմից ստորագրված և վավերացված միջազգային կոնվենցիաները և արձանագրությունները

N	Կոնվենցիա կամ արձանագրություն, անվանումը և վայրը	Ուժի մեջ է	Ստորագրվել է	Վավերացվել է	Ծանոթագրում
	Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես՝ ջրլող թռչունների բնադրավայրերի մասին, (Ռամսար, 1971)	1971	Որպես իրավահաջորդ անդամակցվել է ՀՀ ԱԳՆ պահանջով, 1993 թ.		
	ՄԱԿ-ի «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո դե Ժանեյրո, 1992թ.)	1993	1992	1993	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1993
	ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին»	1994	1992	1993	Վերագրանցվել է,

	շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք, 1992թ.)				ՄԱԿ, 1993
	Կիոտոյի արձանագրություն (Կիոտո, 1997թ.)	2005		2002	
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտվածության մասին» կոնվենցիա (Շեն, 1979թ.)	1983		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	Կայուն օրգանական աղտոտիչների մասին արձանագրություն, (Ստոկհոլմ, 2001)	2004	2001	2003	
	Էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի մասին արձանագրություն, (Gothenburg, 1999)		1999		
	ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային ենթատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիա (Էսպո 1991թ.)	1997		1996	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	«Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» արձանագրություն (Կիև 2003թ.)	2010	2010	2011	
	ՄԱԿ-ի «Անապատացման դեմ պայքարի» կոնվենցիա (Փարիզ, 1994թ.)	1996	1994	1997	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1997
	ՄԱԿ-ի «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել, 1989թ.)	1992		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
	«Օզոնային շերտի պահպանության մասին» կոնվենցիա (Վիեննա, 1985թ.)	1988		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
0	«Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» արձանագրություն (Մոնրեալ 1987թ.)	1989		1999	Վերագրանցվել է, ՄԱԿ, 1999
1	ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության հասանելիության, որոշումների ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուս 1998թ.)	2001	1998	2001	

Համաշխարհային Բանկի Անվտանգության Քաղաքականությունները

Համաշխարհային Բանկի OP/BP 4.01՝ “Բնապահպանական Գնահատում” փաստաթուղթը համարվում է ՀԲ բնապահպանական անվտանգության քաղաքականությունների հովանի: Այդ քաղաքականությունները կարևոր են ապահովելու համար հնարավոր բացասական բնապահպանական և սոցիալական հետևանքների բացահայտումը, նվազեցումը և պատշաճ մեղմումը: Անվտանգության քաղաքականությունները, յուրաքանչյուր քաղաքականության կիրառելիությունը, ինչպես նաև դրանց կարգավիճակը առաջարկվող ծրագրի համար՝ ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

ՀԲ անվտանգության քաղաքականություններ

Գործառնական քաղաքականություն	Կիրառելի է եթե՝	Կարգավիճակ
Բնապահպանական Գնահատում (OP 4.01)	Եթե ծրագիրը կարող է առաջացնել (բացասական) բնապահպանական ռիսկեր և ազդեցություններ իր ազդեցության ոլորտում:	Այո
Անտառներ (OP 4.36)	Անտառային ոլորտի գործունեությունը և Բանկի կողմից ֆինանսավորվող այլ միջամտությունները, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ անտառածածկ տարածքների վրա:	Ոչ
Հարկադիր վերաբնակեցում (OP 4.12)	Ֆիզիկական վերաբնակեցում և հողի կորուստ, որի արդյունքում տեղի է ունեցել. (i) վերաբնակեցում և կացարանի կորուստ, (ii) ակտիվների կամ ակտիվների հասանելիության կորուստ, (iii) հողի օտարում, եկամուտների աղբյուրների կորուստ կամ ապրուստի միջոցների կորուստ, անկախ այն հանգամանքից, տեղափոխվելու են արդյոք տուժած անձինք այլ վայր, թե ոչ:	Ոչ
Բնիկ ժողովուրդներ (OP 4.10)	Եթե ծրագրի տարածքում կան բնիկ ժողովուրդներ, և ակնկալվում է հնարավոր բացասական ազդեցություն բնիկների վրա, և բնիկները նախատեսվող շահառուների թվում են:	Ոչ
Պատվարների անվտանգություն (OP 4.37)	Եթե ծրագիրը ներառում է մեծ պատվարի (15մ կամ ավելի) կամ բարձր վտանգավորություն ունեցող պատվարի կառուցում: Եթե ծրագիրը կախված է գոյություն ունեցող պատվարից, կամ շինարարության փուլում գտնվող պատվարից:	Ոչ

<p>Թունաքիմիկատների կառավարում (OP 4.09)</p>	<p>Եթե նախատեսվում է թունաքիմիկատների ձեռքբերում: Եթե ծրագիրը կարող է այնպիսի ազդեցություն ունենալ թունաքիմիկատների օգտագործման վրա, որ կարող է վնաս պատճառվել, նույնիսկ այն դեպքում, երբ ծրագիրը չի նախատեսում թունաքիմիկատների ձեռքբերում: Դա ներառում է այն ծրագրերը, որոնք կարող են (i) հանգեցնել թունաքիմիկատների օգտագործման էական աճին՝ առողջության և շրջակա միջավայրի համար բխող ռիսկերով, (ii) պահպանել կամ ընդլայնել թունաքիմիկատների կառավարման ներկայիս ոչ կայուն պրակտիկան, որը հիմնված չէ Թունաքիմիկատների ինտեգրված կառավարման (IPM) մոտեցման վրա, և էական ռիսկ է ներկայացնում առողջության և շրջակա միջավայրի համար:</p>	<p>Ոչ</p>
<p>Ֆիզիկական մշակութային ռեսուրսներ (OP 4.11)</p>	<p>Քաղաքականությունը գործարկվում է այն ծրագրերի կողմից, որոնք մշակութային արժեքների վնասման առերևույթ (prima facie) ռիսկ են ներկայացնում (օրինակ՝ ցանկացած ծրագիր, որը ներառում է լայնածավալ հողային աշխատանքներ, հողային զանգվածների տեղափոխում, մակերևույթի բնապահպանական փոփոխություններ կամ ոչնչացում):</p>	<p>Ոչ</p>
<p>Բնական միջավայր (բնակավայր) (OP 4.04)</p>	<p>Քաղաքականությունը գործարկվում է ցանկացած ծրագրի կողմից, որը հնարավոր է, որ առաջացնի բնական միջավայրի զգալի փոփոխություն (կորուստ) կամ դեգրադացիա՝ ուղղակիորեն (շինարարության միջոցով) կամ անուղղակի (ծրագրի կողմից պարտադրվող մարդկային գործունեության միջոցով):</p>	<p>Ոչ</p>
<p>Ծրագրեր վիճարկվող տարածքներում (OP 7.60)</p>	<p>Քաղաքականությունը գործարկվում է այն դեպքում, երբ առաջարկվող ծրագիրը իրականացվելու է «վիճարկելի տարածքում»:</p>	<p>Ոչ</p>
<p>Միջազգային ջրային ուղիների ծրագրեր (OP 7.50)</p>	<p>Եթե ծրագիրը վերաբերում է այնպիսի միջազգային ջրային ուղիներին, ինչպիսիք են. ցանկացած գետ, ջրանցք, կամ համանման ջրային մարմին, որը ձևավորում է սահման երկու կամ ավելի պետությունների միջև, կամ ցանկացած գետ կամ մակերեսային ջրային մարմին, որը հոսում է երկու կամ ավելի պետությունների տարածքով (կամ ցանկացած վտակ կամ մակերեսային ջրային այլ մարմին, որը հանդիսանում է այդ ջրային ուղու բաղադրիչը), ցանկացած ծովախորշ, ծովածոց, նեղուց կամ ջրանցք, որը սահմանակից է երկու կամ ավելի պետությունների, կամ, գտնվում է մեկ պետության տարածքում, և ճանաչվել է որպես բաց ծովի և</p>	<p>Ոչ</p>

	նման ջրերի մեջ հոսող ցանկացած գետի ու այլ պետությունների միջև անհրաժեշտ հաղորդակցության խողովակ:	
--	--	--

3. Նախագծի այլընտրանքները, այդ թվում՝ զրոյական տարբերակը

Զրոյական տարբերակ

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ որևէ փոփոխություն տեղի չի ունենում, այսինքն ընկերությունը շարունակում է գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքի գործարանի գործունեությունը առանց որևէ փոփոխության: Այս դեպքում՝

- Բնապահպանական և սոցիալական ազդեցության հետ կապված ռիսկեր կամ վտանգներ չեն առաջանա,
- Կենսամիջավայրի վրա լրացուցիչ տեխնաձին ներգործություն և ճնշում չի առաջանա:

Մյուս կողմից, զրոյական տարբերակի ընտրության դեպքում չեն իրականանա նաև մի շարք հնարավորություններ, այդ թվում.

- Հանրապետությունում համաձուլվածքների պահանջարկի դեֆիցիտ, ինչը հետագայում կարիք կլինի լրացնել անհամեմատ ավելի թանկարժեք հումքով,
- Նախագծի իրականացման ընթացքում նոր աշխատատեղերի ստեղծման և դրա արդյունքում տեղի բնակչության եկամուտների ավելացման հետ կապված հնարավորությունները,
- Չի ներդրվի տեխնոլոգիական արտադրություն և չեն կատարվի համապատասխան հարկային վճարումներ:

Քննարկվող տարբերակ

Քննարկվող տարբերակներից մեկն է ընդլայնել մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի ստացման արտադրությունը՝ ներկայիս 2400.0տ/տարի հզորությունը, հասցնելով մինչև 4800.0տ/տարի արտադրողականության, տարեկան 330 օր, օրական 24 ժամ աշխատանքային ռեժիմով:

Մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի ստացման արտադրողականության ընդլայնմանը հասնելու համար, ներկայումս գործարանում տեղադրված թվով 2 վառարաններին նախատեսվում է ավելացնել ևս 2-ը՝ դրանց ընդհանուր քանակը հասցնելով 4-ի: Նախատեսվող վառարանները տեղադրվելու են միևնույն արտադրամասում գործող վառարանների կողքին:

Ֆերոհամաձուլվածքների ստացման արտադրությունը բոլոր երեք մետաղների (ֆերոմոլիբդենի, ֆերովոլֆրամի, ֆերովանադիումի) համար լրացուցիչ փոփոխության չի ենթարկվելու, ներկայիս տեխնոլոգիան և սարքավորումները թույլ են տալիս ընդլայնել արտադրողականությունը համապատասխան հումքային բազա ապահովելու դեպքում:

Այս տարբերակի առավելություններն են.

- Արտադրված համաձուլվածքը կարելի է օգտագործել բարձր տեխնոլոգիական հատկանիշներով արտադրանքի պատրաստման համար,
- Առաջարկվող հոսքագծերը համալրված են արտանետումների բազմաստիճան մաքրման հանգույցներով, որը թույլ է տալիս իրականացնել մթնոլորտ արտանետվող վտանգավոր արգասիքների խորը մաքրում,
- Գործունեության արդյունքում լրացուցիչ տարածքների ներգրավում չի նախատեսվում,
- Նախատեսվում է ակտիվ մասնակցություն և ֆինանսական ներդրումներ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերում:

Տարբերակի թերությունները՝

- գործունեությունը կառավարվում են թանկարժեք էլեկտրոնային ավտոմատ համակարգերով,
- տեխնոլոգիական գործընթացների սպասարկումը պահանջում է որակյալ անձնակազմ,
- հոսքագծերը, մանավանդ, կիրառվող թևքային գտիչները, ջրային սկրուբերները պահանջում են հաճախակի ստուգումներ և պարբերական կարգաբերումներ:

Վերլուծելով նշված տարբերակների դրական և բացասական կողմերը, առաջին հերթին բնապահպանական և սոցիալական գործոնները, ընտրվել է գործունեության ընդլայնման տարբերակը:

4. Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

<<Ալափմետ>> ՓԲԸ-ի կողմից Չարենցավան համայնքի, Ալափարս գյուղի՝ ընկերությանը պատկանող, սեփականաշնորհված տարածքում նախատեսվում է իրականացնել գոյություն ունեցող և շահագործվող ֆերոհամաձուլվածքի գործարանի ընդլայնմանն ուղղված գործունեություն:

Նախատեսվող գործունեության նպատակն է ընդլայնել ֆերոհամաձուլվածքի գործարանի մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի, ստացման արտադրությունը՝ 2400.0տ տարեկան արտադրողականությունը հասցնելով մինչև 4800.0տ/տարի, աշխատելով օրական 24 ժամ աշխատակարգով:

«Ալափմետ» ՓԲԸ-ն նշված արտադրողականությանը հասնելու համար, ընկերության ներկայումս մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի, ստացման արտադրությունում գործող թվով երկու վառարաններին նախատեսում է ավելացնել ևս երկուսը՝ դրանց ընդհանուր քանակը հասցնելով չորսի: Նախատեսվող վառարանները տեղադրվելու են գործող վառարաններին զուգահեռ՝ միննույն արտադրամասում: Պահանջվող քանակի հումքը ձեռք է բերվում «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ից՝ գործող համապատասխան պայմանագրի հիման վրա:

Նախատեսվող գործունեության նկարագիր


Ընկերությունը տեղաբաշխված է ՀՀ կոտայքի մարզ, Չարենցավան համայնք, գ.Ալափարս, Չարենցավանի խճուղի, 1-ին փակուղի, 8, հանրապետական նշանակության H7 Կարենիս - Չարենցավան - Ֆանտան ճանապարհի հարևանությամբ Տես հավելված1:

Գործարանի ընդհանուր տարածքը 1.6հա է, որի մեջ ներառվում է երկու արտադրական շինություն, պահեստներ, վարչական շենք, որոնք սեփականության հիմունքով պատկանում են «ԱԼՍՓՄԵՏ» ՓԲԸ-ին՝ համաձայն ՀՀ կադաստրի պետական կոմիտեի թիվ 31072018-07-0074 31 հուլիսի 2018թ տրված թվականին նախորդը՝ 2848226 վկայականի՝ տրված 16.12.2011: Հողամասի գործառնական նշանակությունը, ըստ կադաստրի վկայականի՝ արդյունաբերական օբյեկտներ:

2013թ ընկերությունը գործարքել է Ֆերոհամաձուլվածքների արտադրությունը 2000-2400տ/տարեկան արտադրողականությամբ որը ներկայացվել է բնապահպանական փորձաքննության, և 14.06.2013 թվականին ստացվել է բնապահպանության նախարարության թիվ ԲՓ-59 փորձաքննական դրական եզրակացությունը:

Արտադրական շղթան ընդլայնելու նպատակով ընկերությունը 2014 թվականին գործարանի տարածքում տեղադրել է մոլիբդենի խտանյութի թրծման հոսքագիծ: Ընդլայնման նախագիծը նույնպես ներկայացվել է բնապահպանական փորձաքննության, որի արդյունքում 2014 թվականի ապրիլի 22-ին ընկերությունը ստացել է ֆերոհամաձուլվածքների գործարանի ընդլայնման աշխատանքային նախագծի վերաբերյալ ԲՓ-28 փորձաքննական եզրակացությունը: 2014 թվականի կեսից ընկերությունը իրականացրել է սարքավորումների մոնտաժման, կարգաբերման և շահագործման աշխատանքներ, սակայն հումքի բացակայության պատճառով գործարանը ամբողջ հզորությամբ չի շահագործվել: Ներկայում հումքի մատակարարման խնդիրը լուծված է և գործարանը շահագործվում է ամբողջ հզորությամբ: Ընկերությունում աշխատում են 54 աշխատակից, որոնցից 35-ը բանվորներ են:

Ալափմետ ՓԲԸ գլխավոր հատակագիծը;



Նպատակը

Համաձայն նախագիսային փաստաթղթերի նախատեսվում է ընդլայնել մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի արտադրությունը՝ ներկայիս 2400.0տ/տարի, հասցնելով մինչև 4800.0տ/տարի արտադրողականության, աշխատելով օրական 24 ժամ աշխատակարգով:


Մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի ստացման արտադրողականության ընդլայնմանը հասնելու համար, ներկայումս գործարանում տեղադրված թվով 2 վառարաններին նախատեսվում է ավելացնել ևս 2-ը՝ դրանց ընդհանուր քանակը հասցնելով 4-ի: Նախատեսվող վառարանները տեղադրվելու են միննույն արտադրամասում գործող վառարանների կողքին /տես ստորև հատակագիծը/:

Ֆերոհամաձուլվածքների ստացման արտադրությունը բոլոր երեք մետաղների (Mo, W, V) համար լրացուցիչ փոփոխության չի ենթարկվելու, ներկայիս տեխնոլոգիան և սարքավորումները թույլ են տալիս ընդլայնել արտադրողականությունը համապատասխան

հումքային բազա ապահովելու դեպքում: Պլանային հնարավոր արտադրական ծավալները 1800տ-100տ-100տ, գումարային 2000տ տարեկան:

Պահանջվող քանակի հումքը ձեռք է բերվում «Զանգեզուրի պղնձամուլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից՝ համապատասխան պայմանագրի հիման վրա, իսկ պահանջարկը չբավարարելու դեպքում նաև արտերկրից՝ օրենքով սահմանված կարգով:

Առկա և նախատեսվող վառարարների դիքը գլխավոր հատակագծում;



Օգտագործվող հումք

Նախատեսվող գործունեության համար հիմնական հումք է հանդիսանում մոլիբդենի խտանյութը: Ելնելով ծագման վայրից և հարստացման տեխնոլոգիայից, մոլիբդենի խտանյութը ունի հետևյալ քիմիական բաղադրությունը:

Մոլիբդենի խտանյութի քիմիական բաղադրությունը, %

MoS ₂	SiO ₂	Al ₂ O ₃	Fe	K ₂ O, Na ₂ O, CaO	Cu
87-90	4-11	1	2.5-2.8	2-2.5	1

Հիդրոլոգիական մշակման ժամանակ օգտագործվում են՝

H_2SO_4 ՝ հիդրոմետալուրգիական կլանում,

$NaCl$ ՝ լուծելիության աստիճանի բարձրացում,

$NaCO_3$ ՝ պղնձի կարբոնատի ստացում:

Տեխնոլոգիական գործընթացները

Մոլիբդենի խտանյութի թրծում (բովում)

Տեխնոլոգիական պրոցեսը ներառում է մոլիբդենի խտանյութի թրծումը հորիզոնական պտտվող խողովակային վառարաններում: Ներկայումս գործարանում տեղադրված են թվով 2 վառարան, ընդլայնումից հետո նախատեսվում է դրանց քանակն ավելացնել ևս 2-ով՝ ընդհանուր վառարանների քանակը հասցնելով 4-ի: Նախատեսվող վառարանները տեղադրվելու են գործող վառարանների կողքին՝ միևնույն արտադրամասում:


Տեղադրվող БП-1200 վառարանների տեխնիկական բնութագրերն են.

Թմբուկային պտտվող վառարան БП-1200-ը նախատեսված է մոլիբդենի խտանյութի թրծման համար: Չոնաների տաքացումը իրականացվում է էլկտրական եղանակով: Թրծած մոլիբդենի խտանյութը իրենից ներկայացնում է մոլիբդենի եռօքսիդ, որը հետագայում օգտագործում են ֆերոմոլիբդեն ստանալու համար:

Վառարանի տեխնիկական պարամետրերն են՝

- Էլեկտրական հզորություն - 360 կվտ
- Չոնաների թիվ - 5
- Ջերմաստիճան - 6500C
- Վառարանի երկարություն - 16մ
- Խողովակի տրամագիծը - 1200մմ
- Արտադրողականությունը ըստ MoS₂-ի - 3-5տ/օր
- Ջերմաստիճանի կարգավորումը - ± 100C
- Ծխաքարշի տիպը ДН-10 -20000մ³/ժ
- Ծխնելույզի բարձրությունը - 45մ

Օքսիդացման գործընթացն ուղեկցվում է ջերմության անջատումով, ինչը թույլ է տալիս հիմնականում պրոցեսն իրականացնել անջատված ջերմության հաշվին՝ էլեկտրատաքացուցիչների միջոցով, համաձայն քիմիական ռեակցիայի.



Խտանյութի թրծման ժամանակ առաջացող գազաօդային խառնուրդն, որի ջերմաստիճանը 300-350°C է պարունակում է անօրգանական փոշի, ծծմբական և ծծմբային անհիդրիդներ, նվազագույն քանակությամբ ազոտի և ածխածնի օքսիդներ:

Անօրգանական փոշին կազմում է բեռնավորված հումքի 6-8%-ը և դուրս է գալիս վառարանից գազաօդային խառնուրդի հետ: Մոլիբդենի սուլֆիդը օքսիդացման ընթացքում վերածվում է MoO₃ –ի և ծծմբային անհիդրիդի:

Վառարանից գազաօդային խառնուրդը տեխնոլոգիական շղթայի վերջում տեղադրված ծխաքարշիշի միջոցով տրվում է գազամաքրման և գազահովացման համակարգ, որը բաղկացած է.

ա) նստեցման և սառաեցման խուցից, որտեղ գազաօդային խառնուրդի արագության կտրուկ անկման արդյունքում կատարվում է գազի հովացում և փոշենստեցում՝ խցի հատակին: Փոշենստեցման արդյունավետությունը հազմում է 70%:

Խցից դուրս եկող գազաօդային խառնուրդի ջերմաստիճանը հասնում է 55-60°C և ուղղվում է դեպի թևքային գտիչ (ֆիլտր), որ արդյունավետությունը կազմում է 98-99%:


բ) այնուհետև փոշուց մաքրված գազաօդային խառնուրդը տրվում է ջրային սկրուբեր, որտեղ իրականացվում է SO₃ գազի կլանում ջրի օգնությամբ՝ ծծմբական թթվի թույլ լուծույթի առաջացմամբ, հետևյալ ռեակցիայով.



Առաջացած ծծմբական թթվի թույլ լուծույթի կոնցենտրացիան 5-6% հասնելուց հետո մի մասը՝ ըստ տեխնոլոգիական պահանջի, տրվում է հիդրոմետալուրգիական արտադարամաս՝ մոլիբդենի խտանյութից հիմնականում պղնձի, չնչին մասով ցինկի և կապարի ավելորդ քանակները հեռացնելու նպատակով: Մնացած մասը՝ հագեցվում է մինչև

10-12% և հավաքվում է թթվակայուն հատուկ տարաներում՝ որպես ապրանքային թթու, հետագա օգտագործման կամ առաքման համար:

զ) երկրորդ սկրուբերում օգտագործվում է կրակաթի լուծույթ՝ ծծմբային անհիդրիդի 96% կլանումն ապահովելու նպատակով, հետևյալ ռեակցիայով.



Առաջացած կալցումի հիդրոսուլֆիտի կոնցենտրացիան հասցվում է մինչև 40%՝ ելնելով ցելյուլոզա կամ գիպս արտադրողների պահանջարկից: Պահանջարկի բացակայության դեպքում ավազանի մեջ տրվում է օքսիդիչ (օդի թթվածին), որը կալցումի հիդրոսուլֆիտը օքսիդացնում է մինչև կալցումի սուլֆիտի և նստեցվում է ավազանի հատակին: Բնական չորացումից հետո՝ հաշվի առնելով այն հանգամանքն, որ գազաօդային խարնուրդն ամբողջովին մաքրվում է պինդ մասնիկներից, համապատասխան լցոնիչների հետ խառնելուց հետո ստացվում է շինարարության համար պիտանի որակի գիպս:

Մաքրված գազաօդային խարնուրդն արտանետվում է մթնոլորտ 47մ բարձրությամբ և 800մմ տրամագծով աշտարակային ծխնելույզի միջոցով:

Վառարաններում ստացված տեխնիկական MoO_3 -ի մի մասը՝ մոտ 70%-ը, <2,0մմ չափսերով համապատասխանում է արտադրանքին ներկայացվող պահանջներին, իսկ մնացած 30%-ը համապատասխանեցնելու համար մանրացվում են գնդիկավոր աղացում: Ստացված արտադրանքը տեղափոխվում է ֆերոմոլիբդենի արտադրամաս:

Կրաքարի վերամշակում

Կրակաթի լուծույթ ստանալու նպատակով ընկերությունը մանրեցված կրաքարը թրծում է գազային վառարանում, թրծվելուց հետո ստացված կիրը տեղափոխվում է կրակաթի պատրաստման չան: Կրաքարի թրծումը կատարվում է հակահոսքի միջոցով, որտեղ կատարվում է խոնավության և ածխածնի օքսիդների հեռացում:



Կրաքարի տաքացման համար գազի այրման ընթացքում թրծման վառարանում առաջանում են տաք ծխագազեր և փոշի: Կրաքարի թրծման համար օգտագործվում է գազային թմբուկային պտտվող վառարան БП-5М տիպի:

Մոլիբդենի խտանյութի մաքրում հիդրոմետալուրգիական եղանակով

Ստացված 5-6%-ոց ծծմբական թթվի լուծույթը օգտագործվում է մոլիբդենի ոչ կոնդիցոն խտանյութից պղնձի և այլ խառնուրդների ավելորդ քանակները հեռացնելու համար:

Խառնուրդի լուծվելուց հետո ստացված սուսպենզիան գտվում է վակուում ֆիլտրի միջոցով: Ստացված նստվածքը՝ մոլիբդենի խտանյութը, ուղարկվում է թրծման արտադրամաս, խառնվելով չորացուցիչ տրվող խտանյութի հետ: Լուծույթին ավաելացվում է Na_2CO_3 , որի արդյունքում պղինձը նստեցվում է կարբոնատների ձևով, իսկ չեզոքացված լուծույթը մղվում է ջրային սկրուբեր լրասնուցման՝ օգտագործվող թարմ ջրի պահանջը կրճատելու համար:

Պղնձի կարբոնատը, որը չնչին քանակությամբ կարող է պարունակել կապարի և ցինկի կարբոնատներ, հավաքվում է բաց տարողությունների մեջ և բնական չորացումից հետո վաճառվում է պղնձարջասպ արտադրող կազմակերպություններին:

Ֆերոհամաձուլվածքների արտադրություն

Սիլիկոթերմիկ եղանակով ֆերոհամաձուլվածքների՝ ֆերոմոլիբդենի, ֆերովոլֆրամի, ֆերովանադիումի արտադրության ժամանակ հումքային նյութերի չորացման ընթացքում արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ՝ 8.0մ բարձրությամբ և 0.24մ տրամագծով խողովակից:

Հումքային նյութերի աղացման և խառնման գործողությունների արդյունքում առաջացող անօրգանական փոշին արտանետվում է տեղային օդաքարշ համակարգով: Ֆերոհամաձուլվածքների արտադրությունում ելանյութերը մանրացվում է աղացների օգնությամբ:

Ֆերոհամաձուլվածքների ստացման վառարաններից գազաօդային խառնուրդը ջրային կլանիչներում խառնվելուց հետո արտանետվում են 32.0մ բարձրության և 0.8մ տրամագծով խողովակից: Ֆերոհամաձուլվածքների արտադրությունում առկա է 5 հանքահորային վառարաններն՝ որոնք աշխատում են հաջորդաբար, հալման պրոցեսի ընթացքում առաջացած գազերի հեռացման նպատակով նախատեսված է գլխանոց: Առաջացած գազերը ուղղվում են փոշու մաքրման սարքավորում՝ թաց ցիկլոն, լվացման խույ: Որսված փոշին վերադարձվում է արտադրություն, որի արդյունավետությունը կազմում է 87-90%:

**Ներկայումս ընկերությունում Ֆեռոնոլիթի արտադրամասի սարքավորումների
ցանկը**

N	Սարքավորումների անվանումը	Քանակը
1	Չորանոց /գազային վառարան/	2
2	Գնդիկավոր աղաց	1
3	Պահեստավորման բունկերներ	4
4	Խառնիչներ	2
5	Հալման վառարաններ	5
6	Հովացման ավազան	1
7	Այտավոր ջարդիչներ	2
8	Ջրային սկրուբեր	1
9	Նստեցուցիչ	1
10	Ջրային ավազան	1
11	Օդամղիչներ	2

Ընկերությունում ադմինիստրատիվ շենքի ջեռուցումն ապահովվում է կաթսայատան միջոցով՝ բնական գազի օգնությամբ:

Կաթսայատուն - ադմինիստրատիվ շենքի ջեռուցումն ապահովելու նպատակով կաթսայատանը տեղադրված են 3 հատ գազային ջեռուցման կաթսաներ՝ յուրաքանչյուրը 32,0կՎ հզորությամբ: Արտանետումների բոլոր աղբյուրները հաստատուն են և արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ:

**5. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

Չարենցավան համայնք՝ մակերեսը 245,3կմ², բնակչությունը 39318 մարդ:

Չարենցավան համայնքում ընդգրկվել են հետևյալ բնակավայրերը՝

- Չարենցավան ք.,
- Ալափարս գ.,
- Արզական գ.,
- Բջնի գ.,

- Կարենիս գ.,
- Ֆանտան գ.:

Չարենցավան համայնքը մարզկենտրոնից գտնվում է 20.0կմ, մայրաքաղաքից 38.0կմ հեռավորության վրա: ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թվականի հունիսի 9-ի ընդունված <<Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ Չարենցավան, Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան համայնքների միավորման արդյունքում ձևավորվել է Չարենցավան համայնքը: Չարենցավան համայնքը բազմաբնակավայր համայնք է: Չարենցավան համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերն են՝ Չարենցավան քաղաքը, և Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան գյուղերը: Համայնքի կենտրոնն է հանդիսանում Չարենցավան համայնքը: Նախատեսվող գործունեության հեռավորությունը զգայուն կլանիչներից տես համապատասխան Հավելված 4-ում:

Ալափարս գյուղ	մոտ 2,6 կմ
Չարենցավան քաղաք	մոտ 2,6 կմ
H7Կարենիս - Չարենցավան - Ֆանտան ճանապարհ	մոտ 700 մ
Մոտակա արտադրամաս	մոտ 200 մ

Ազդակիր համայնք

Չարենցավան քաղաքային համայնքի մակերեսը – 557.0հա, Պատմական անվանումները՝ Լուսավան /1947-1967թթ./, հիմնադրման ժամանակաշրջանը - 1947թ.:

Համայնքներին սահմանակից են Ալափարս, Կարենիս, Ֆանտան բնակավայրերը: Օգտակար հանածոներ – չկա: Կրթական, մարզական և մշակութային հաստատություններ - 5 հիմնական դպրոց, 1 ավագ դպրոց, պետական քոլեջ, Գառզուի անվան արվեստի դպրոց, Ա.Խաչատուրյանի անվան երաժշտական դպրոց, քաղաքային գրադարան, Ա.Մանուկյանի անվան մարզադպրոց: Արտադրական ձեռնարկություններ - <<Արմավտո>> ԲԲԸ, <<Հաստոցաշինական գործարան>> ՓԲԸ, <<Բջնի>> հանքային ջրերի գործարան ԲԲԸ, <<Գործիքաշինական գործարան>> ԲԲԸ, <<Ասկե Գրուպ>> ԲԲԸ, <<Չուլակենտրոն>> ԲԲԸ,

<<Հովանի>>

ԲԲԸ

/կարի

ֆարքիկա/

Բնակչության հիմնական զբաղմունքը - առևտուր: Հոգևոր կառույցներ - Սուրբ Փրկիչ եկեղեցի /2000թ. օգոստոս/, պատմամշակութային հուշարձաններ - Գանգրահեր տղայի արձանը:

Չարենցավան համայնքի Ալափարս գյուղ

Բնակչություն՝ 2407 մարդ:

Ընդհանուր տեղեկություններ

Ալափարս-Այլաբերք բնակատեղիում մարդը դեռևս ապրել է Բ.Ա.2-րդ հազարամյակում: Բնակչությունը մոտ 2500 մարդ, տարածքը՝ 32.94կմ²: Ալափարսն ունի 1 տիպային դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն: Մայրաքաղաք Երևանից գտնվում է 30.0կմ հեռավորության վրա, մարզկենտրոն Հրազդանից 20.0կմ հեռավորության վրա, Չարենցավան քաղաքից 5,5կմ հեռավորության վրա: Ալափարսը հարակից է արևելքից՝ քաղաք Չարենցավանին, հյուսիս-արևմուտքից՝ Արզական, Բջնի, հյուսիսից Սուլակ, հյուսիս-արևելքից Ֆանտան, հարավից Կարենիս, հարավ-արևմուտքից Քարաշամբ և Թեղենիք գյուղերին:

Ալափարսում մարդն ապրել է դեռևս երրորդ հազարամյակում, որի վառ ապացույցն է «Սանգյառ» ամրոց-բնակատեղին: Ալափարսը հիմնադրվել է 470 թվականին: 17-րդ դարում գյուղն անայացել է, ապա վերաբնակեցվել 1830թ. Խոյից, Մակուից, Վանից, Ալաշկերտից ներգաղթած հայերով: Առաջինը ժամանել է Խոյեցիների քարավանը 60 տուն 200 շնչով և բնակություն հաստատել գյուղի ներքին թաղամասում, իսկ երկրորդը Մակուի Շահբուլաղ գյուղի քարավանը 40 տուն՝ 150 շունչ և հաստատվել վերին աղբյուրամերձ թաղամասում:

20-րդ դարում Ալափարսի դերը մեծ է եղել Հայաստանի կյանքում: 1950-ական թվականներին շահագործման է հանձնվել Ալափարսի պոմպակայանը, որը ավելի քան կես դար ղեկավարել է Ավետիք Ավետյանը: Ալափարս աղբյուրի քաղցրահամ ջուրը հայտնի է Հայաստանում և արտերկրում «Նոյ» աղբյուրի ջուր անունով:

Ալափարսը հայտնի է միջնադարյան հուշարձաններով, որոնք ունեն երկարամյա պատմություն: Այստեղ են գտնվում Սուրբ Վարդան եկեղեցին կառուցված 5-րդ դարում Գրիգոր իշխանի կողմից, Սուրբ Ծիրանավոր և Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցիները,

Թույլ մանուկ մատուռը: Ալափարսը դպրոց է ունեցել նաև 200 տարի առաջ, այդ դպրոցն են հաճախել շրջանի մոտակա գյուղերի դպրոցահասակ երեխաները:

Ալափարսի դպրոցը հիմնադրվել է 1870–ին: Սկզբում ունեցել է 25 աշակերտ, մեկ ուսուցիչ՝ Քերոբ Ավետիսյան: 1890-ական թվականների սկզբին փակվել է ցարական իշխանության կողմից և վերաբացվել 1907-ին՝ 21 աշակերտով: 1913-ին դարձել է եռամյա (102 աշակերտ, որից 12-ը՝ աղջիկ), 1921-ին՝ քառամյա: Ալափարսի դպրոցի և 1929-ին բացված կոլտնտեսական երիտասարդական (կոլերիտ) դպրոցի հիման վրա 1930-ին ստեղծվում է յոթամյա դպրոց՝ 1935-ից միջնակարգ է: Ալափարսի դպրոցի 1970–1971 ուսումնական տարում ուներ 24 դասարան՝ 658 աշակերտով, 32 ուսուցիչ–ուսուցչուհիներով: 100-ամյակի առթիվ պարգևատրվել է ՀՍՍՀ Գերագույն սովետի պատվոգրով:

Չարենցավան համայնքի Արզական գյուղ

Բնակչություն՝ 2872 մարդ:

Արզական գյուղը ունեցել է Արտավազական, Արտազական, Արտավազդ ապարանք, Արզակյանդ, Արզաքենդ, Արզական անունները: Գյուղի հիմնադրման ակունքները գնում են պատմության խորքերը՝ մինչև մ.թ.ա. 55-34 թթ Արտավազդ 2-րդ արքայի ժամանակաշրջանը, երբ այս տեղանքի բնությամբ հիացած արքան կառուցել է իր ամառանոցը: Այն հետագայում ավերվել է, բայց նրա մերձակայքում կառուցված գյուղը երկար ժամանակ կոչվել է Արտազական, որը տարադարձվելով դարձել է Արզական: Նախկինում եղել է Սյրարատ աշխարհի Նիգ գավառում: Արզականի այժմյան բնակիչների նախնիները 1800-ական թվականներին գաղթել են Մակուից, Խոյից, Բայազետից, մասամբ նաև Մուշից:

Արզականը հանդիսացել է առաջին կարգի աստիճանավոր Երևանցի Ղահրաման Մելիք–Աղամալյանի սեփական կալվածքը: 1862 թվականին Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցը եղել է Արզականում, հանդիպում է ունեցել 1-ին կարգի աստիճանավոր կալվածատեր Ղահրաման Մելիք–Աղամալյանի հետ: Մեսրոպ Արքեպիսկոպոս Սմբատյանցի վկայությամբ Արզաքանը տեղավորված է եղել երկու փոքրիկ ձորակների միջավայրում, այն ժամանակ ունեցել է 37 տնտեսություն: Մեսրոպ Արքեպիսկոպոս

Սմբատյանցը գրում է. «Արժանի իշխանաց արժանավոր բնակարան և ամրոց է եղած ժամանակին Արգաքանը, նորա շրջավայրերը, որը և արժանի է ներկայի կալվածատեր մեծապատիվ իշխանին՝ Ղահրամանյան աղայի Մելիք-Աղամայանցին, որի շնորհիվ եկեղեցին և եկեղեցիական դպրոցը բարեկարգ վիճակի մեջ են եղել»:

Գյուղի բնակչությունը գյուղատնտեսական կուլտուրաներից մշակել է ցորեն, գարի, ծխախոտ, կանեփ, վուշ և բոստանային կուլտուրաներ: Գյուղն ունեցել է հետևյալ արտադրական օբյեկտները, որոնք պատկանել են բնիկ տեղացի հայերին 3 դարբնոց, 3 ջուլհականոց, 1 հյուսնոց, 1 բրդամշակման արհեստանոց, ունեցել է նաև ձիթահան պատրաստի վիճակում, որի արտադրական կարողությունը տարեկան եղել է 500 բատման կտավատի ձեթի արտադրություն: 1831 թվականին գյուղն ունեցել է 7 ջրաղաց, որից միայն երկուսն է եղել սարքին վիճակում, բոլոր ջրաղացներն ունեցել են մեկ աչք: Գյուղն ունեցել է իր սեփական հիդրոէլեկտրակայանը, որը հիմնել է Աշոտ Վարդանյանը: Արգականը տեղակայված է Ծաղկունյաց լեռնաշղթայի ստորոտին, Հրազդան գետի աջակողմյան վտակ Դալար գետի ափին, ձորահովտում՝ մրգատու ծառերի մեջ:

Չարենցավան համայնքի Բջնի գյուղ

Մակերես՝ 42.81կմ², Բնակչություն՝ 2902 մարդ:

Համայնքում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 1 գրադարան: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 1550մ հեռավորությունը մարզկենտրոնից՝ 18.0կմ:

Պատմական ակնարկ

Բջնին Հայաստանի հանագույն բնակավայրերից է: 1-ին անգամ նրա մասին հիշատակում է պատմիչ Ղազար Փարպեցին: Բջնեցի Աթիկ քահանան հայոց սպարապետ Վահան Մամիկոնյանի հավատարիմ զինակիցներից էր: 11-րդ դարում Բջնին իր շրջակայքով անցնում է Պահլավունիների իշխանական տոհմին: Այդ ժամանակ էլ, Հովհաննես-Սմբատ թագավորի հրամանով դառնում է եպիսկոպոսանիստ ավան: 1066թ. կաթողիկոսական ընտրությունները տեղի են ունեցել Բջնիում: 13-րդ դարի սկզբներին Բջնին անցնում է Զաքարյան հայ իշխանների տնօրինությանը: 1387-88 թթ. գյուղը ենթարկվում է Լենկթեմուրի ավերածություններին: 1673 թ. այստեղ իջևանել է Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը: 1770թ. Բջնի է այցելել նաև ճանապարհորդ Տուրնեֆորը: Միջին

դարերում Բջնին հայ գրչության կարևորագույն կենտրոններից էր: Մեզ են հասել 12-17 դդ. այնտեղ ընդօրինականացված հայերեն մի քանի ձեռագրեր: Ըստ տեղեկությունների Բջնիի բերդը կառուցել են Պահլավունիները՝ 11-րդ դարում: Բջնիի միջնադարյան ճարտարապետության զարդը գյուղի կենտրոնում գտնվող սբ. Աստվածածին եկեղեցին է, որը կառուցվել է Գրիգոր Մագիստրոսի պատվերով՝ 1031թ.: Եկեղեցու պատերին կան վիմափոր արձանագրություններ: Վերանորոգվել է 1947 թ.:

Չարենցավան համայնքի Կարենիս գյուղ

Բնակչություն՝ 839 մարդ, գյուղի մակերեսը – 892.0հա, հիմնադրման ժամանակաշրջանը - 20-րդ դար, սահմանակից է Չարենցավան, Ալափարս, Ֆանտան, Նուռնուս, Արզական համայնքին, գյուղի պատմական անվանումներն են Կարենավանք, Կարենիստ, Կարենիս: Բնակչության հիմնական զբաղմունքը - անասնապահություն և գյուղատնտեսություն: Հոգևոր կառույցներ - «Սուրբ Մաթևոս և Անդրեաս Առաքյալների վանական համալիր» (5-րդ դար) և «Սուրբ Մարիամ Աստվածածին եկեղեցի» (5-րդ դար):

Պատմամշակութային հուշարձաններ՝ Հայրենական Մեծ պատերազմում զոհվածների հուշարձան:

Ընդհանուր տեղեկություններ

Պատմական ակնարկ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Կարենիս (նախկինում՝ Գյումուշ) գյուղն, ըստ հնուց եկած ժողովրդական՝ բերնե-բերան փոխանցված պատմության, հիմնել է Կարեն անունով իշխանը, որը մի բարձրավանդակի վրա կառուցել է իր կացարանը՝ «Կարենի բերդը», և որի շուրջը հետագայում տարածվել է գյուղը: Մինչև հիմա ժողովրդի մեջ տարածված է այդ տեղամասը՝ «Բերդի գյուխ» անունով: Գյուղի հիմնադրման ստույգ տարեթիվը հայտնի չէ, սակայն Կարենիսի դարերի խորքից գալը վկայում է V դարին պատկանող «Սուրբ Մարիամ Աստվածածին» միանավ բազիլիկ եկեղեցին, որը գտնվում է գյուղի մեջ՝ ձորի բերանին: Երկրաշարժերի հետևանքով ծածկը քանդվել է, բայց պատերը կանգուն են, իսկ պոկված քարերն ու խաչքարերը գտնվում են եկեղեցու տարածքում: Գյուղն իր ամբողջ պատմության ընթացքում ժամանակ առ ժամանակ բնակեցվել է քրիստոնյաներով և մուսուլմաններով: Այդ են վկայում եկեղեցու շուրջը հայտնաբերված գերեզմանները և անվանումները (օրինակ Գյումուշ, որը

թուրքերենից թարգմանաբար նշանակում է արծաթ): Գյուղը վերջնականապես բնակեցվել է 1917-1920թթ.-ին: Համայնքի բնակչության հիմնական մասը գաղթականներ են՝ արմատներով մշեցիներ:

Գյուղի տարածքում է գտնվում նաև V դարին պատկանող <<Սուրբ Մաթևոս և Անդրեաս Առաքյալների>> վանական համալիրը: Ամբողջ համալիրը փողկապվածության մեջ է գտնվում միմյանց և բնության հետ: Վանքի մեջ, խորանի տակ, կա մի խոռոչ, ուր ժամանակին պահվել են սուրբ մասունքներ՝ Մաթևոս առաքյալի աջը և Անդրիաս Առաքյալի գլուխը: Պահարանը, որտեղ պահվել են մասունքները, կամարաձև է, արծաթապատ, մի երեսը ոսկեգոծ՝ Անդրեաս և Մաթևոս Առաքյալների պատկերներով, եզերքը մանր թանկարժեք քարերով պատած, այժմ պահվում է Սուրբ Էջմիածնի թանգարանում N 33 ցուցանակի տակ: Համալիրը ուսումնասիրվել է 1975 թվականին և դրվել է ցուցանակ՝ /Պաշտպանվում է պետության կողմից/ և մոռացության մատնվել: Իր ճարտարապետական եզակիությամբ և պատմական մեծ արժեք ունեցող այս կառույցը ավիրվում է: Համայնքը իր ուժերով կատարել է որոշակի աշխատանք, սակայն վերականգնման և ամրացնելու համար կառույցը պետական աջակցության և մասնագիտական մոտեցման կարիք ունի: 2001թ.-ից ամեն տարվա սեպտեմբերի վերջին կիրակի օրը Կարենիս համայնքը նշում է Առաքյալների ուխտը <<Մաթևոս և Անդրեաս Առաքյալների>> եկեղեցու բակում: Ամբողջ գյուղը մասնակցում է մատաղի արարողությանը, դիոլ-գուռնան, երգն ու պարը թնդացնում են ամբողջ ձորը: Գյուղում առկա եկեղեցիների, բազմաթիվ խաչքարերի, հեթանոսական ժամանակաշրջանների արձանների և սառնորակ և քաղցրահամ աղբյուրների շնորհիվ կարելի է համայնքում զարգացնել զբոսաշրջությունը: Գյուղը ունի միջնակարգ դպրոց, որի ուսուցչական կազմը հիմնականում տեղացիներ են:

Կարենիս գյուղը գտնվում է Հրազդան գետի ձախ ափին՝ ձորի եզրին, ծովի մակերևույթից 1350-1400մ բարձրության վրա և այդ բարձրության կարծես հսկում է գետի անխռով և միալար հոսքին: Գյուղի կլիման ձմռանը ցրտաշունչ է, ամռանը՝ զով: Հաճախակի են չորային, երաշտի և ցրտահարության տարիներն, որից շատ է տուժվում գյուղատնտեսությամբ զբաղվող գյուղացին: Գյուղի տարեկան միջին ջերմաստիճանը կազմում է 15-17°C, ամենաբարձրը՝ 31-33°C, ամենացածրը՝ 20-25°C: Գյուղը գտնվում է մարզկենտրոնից 25.0կմ հեռավորության վրա:

Չարենցավան համայնքի Ֆանտան գյուղ

Բնակչություն՝ 1071մարդ

Պատմական ակնարկ

Որպես բնակավայր հիմնադրվել է 1828-30թթ.: Բնակչության հիմնական մասը լքված Թեզխարաբ գյուղի բնակիչներն են, մի մասն էլ Արևելյան Հայաստանից գաղթածներ: Գյուղն սահմանակից է Ալափարս, Բջնի, Կապուտան, Կարենիս, Ջրաբեր, Հատիս գյուղերին: Գյուղատնտեսական նշանակության հողերը՝ 42.0հա: Ազգաբնակչությունը հիմնականում զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ:

5. Բնական պայմաններ

Կլիմայական բնութագիր

Կլիման բարեխառն չափավոր ցամաքային է: Ձմեռը ցուրտ է, համեմատաբար խոնավ, հաստատուն ձնածածկույթով: Հունվար ամսվա օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 0-8°C սահմաններում: Գարունը համեմատաբար տևական է, մեղմ բարեխառն: Ամառը տաք է, չափավոր խոնավ, պարզ եղանակների գերակշռությամբ: Հուլիս-օգոստոս ամիսներին օդի միջին ջերմաստիճանը 15°C-ից 18°C, առավելագույնը 35°C: Աշնանը տաք է՝ անհողմ եղանակների գերակշռությամբ: Անսառնամանիք ժամանակամիջոցի տևողությունը շուրջ 200 օր է, 0°C-ից բարձր ջերմաստիճանների տարեկան գումարը մինչև 2700°C: Տարեկան տեղումները 600-700 մմ: Օդի բազմամյա միջին ջերմաստիճանը կազմում է 5°C: Ջերմաստիճանների անցումը 0°C -ից տեղի է ունենում նոյեմբերին և ապրիլին: Նոյեմբեր և ապրիլ ամիսներին ջերմաստիճանը կարող է իջնել 0°C-ց ցածր:

Ձմռանը գերակայում են հարավային, հարավ-արևմտյան և արևելյան քամիներ՝ 1,5-2մ/վրկ արագությամբ: Ամռանը դիտվում են արևելյան և հյուսիս-արևելյան ուղղությամբ ուժեղ քամիներ՝ 2-3,2 մ/վրկ արագությամբ, որոնք առավել ուժեղանում են հուլիսին:

Տարածքում մշակում են հացահատիկային կուլտուրաներ, շաքարի ճակնդեղ, պալարային կուլտուրաներ, նաև պտուղներ: Այս կլիման նպաստավոր է լեռնային հանգստավայրերի և առողջարանների համար:

Համաձայն ՀՀ Քաղաքաշինության Նախարարի ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական Կլիմայաբանություն» շինարարական նորմերի

Աղյուսակ 1.1. Օդի ջերմաստիճան

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրություն ծովի մակարդակից, Մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ֆանտան	1800	-6,2	-4,9	-0,9	5,7	10,7	14,4	17,7	18,1	14,6	8,8	2,4	-3,6	6,4	-23	35

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %															
	ըստ ամիսների													Միջին տարեկան, %	Միջին ամսական ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	ամենացուրտ ամսվա, %		ամենաշոգ ամսվա, %	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	

Ֆանտան	80	77	73	69	69	68	67	64	62	68	76	80	71	77	45
--------	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----	----

Աղյուսակ 1.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի , օդերևութա- բանական կայանի անվանումը	Տեղումների քանակը միջին ամսական , օրական առավելագույն մմ												Ձնածածկույթ			
	ըստ ամիսների												Առավելա- տասնօրյա- ին բարձրու- նը, սմ	Տարվա մեջ ձնածած- կույթով օր երի քանա- կը	Չյան մեջ ջր ի առավել- ագույն քան ակը, մմ	
	Հուն- վար	Փետր - վար	Մար տ	Ապրի լ	Մայի ս	Հունի ս	Հուլի ս	Օգոս - տոս	Սեպ- տեմբ եր	Հոկ- տեմբ եր	Նոյեմ - բեր	Դեկտ եմ- բեր				Տարե - կան
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ֆանտան	42	52	61	90	100	63	42	22	28	63	55	48	666	101	123	307
	31	37	42	48	62	48	47	41	53	64	48	39	64			

Աղյուսակ 1.4. Քամի

Բնակավայրի , օդերևութա- բանական կայանի անվանումը	Միջին տարե կան մթնո- լորտա	Ամիսներ	Կրկնելիությունը, % ըստ Միջին արագությունը, ուղղությունների մ/վ							Անհողմո ւ- թյուններ ի կրկնելիո	Միջին ամսական արագու- թյունը, մ/վ	Միջին տարեկա ն արագու-	Ուժեղ քամի- ներով (≥15մ/վ)	Հաշվա ր- կային արագո ւ-

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	թյունը, օրերի քանակը			
															16	17	18	
	յին ճնշում , (հՊա)		Հյուսիս - սային (Հս)	Հյուսիս - Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ - Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ - Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս - Արեւմտյան (ՀսԱրմ)	Լ- թյունը, %		թյունը, մ/վ	օրերի քանակը	թյունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «ո» տարիների ընթացքում	20	50	100
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Ֆանտան	819,2	հունվար	2	8	4	10	29	40	6	1	41	2,1	2,8	91	2	2	24	
			4,7	4,6	2,5	2,7	3,3	3,9	3,6	3,6								
		ապրիլ	2	19	7	9	23	34	5	1	24	3,0			1	3		
			5,5	5,2	3,1	3,3	3,6	4,2	4,0	4,0								

հուլիս	9	64	12	4	2	6	2	1	15	4,3
	5,9	5,6	4,0	3,5	2,8	3,6	3,1	4,6		
հոկտեմբեր	2	18	6	8	21	37	7	1	33	2,3
	4,1	4,5	2,9	2,7	3,1	3,6	3,6	3,1		

Աղյուսակ 1.5. Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը


վայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C						Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը %		Մթնոլորտային տեղումները և գրունտի սառչման խորությունը		Քամի		
	ամենացուրտ օրվա	ամենացուրտ հնգօրյակի	ամենացուրտ ժամանակաշրջանի միջինը	բացարձակ նվազագույնը	ամենացուրտ ամսվա միջին օրական	Տևողությունը, օր	միջին ամսական	միջին ամսական ժամը 15-ին	Տեղումների քանակը նոյմբերմարտ ամիս-	Գրունտի սառչման առավելագույն խորու-	Գերակշռող ուղղությունը դեկտեմբեր-փետրվար	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղու-	
	ապահովվածությամբ, %					Միջին ջերմաստիճանը							

							տատա- նումը	ժամանա- կաշրջանի միջին օրական ջերմաս- տիճանով՝ ոչ բարձր, °C					ներին, մմ	թյունը, սմ	ամիս- ներին	թյունների հունվարին մ/վ
	0,98	0,92	0,98	0,92				0	8	10						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Ֆանտան	-20	-18	-18	-16	-6,4	-23	7,1	116	190	216	80	77	258	87	ՀվԱրմ	3,9
								-4,2	-1,4	-0,1						

Աղյուսակ 1.6. Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը

Բնակավայրի, օդերևութա- բանական կայանի անվանումը	Օդի ջերմաստիճանը, °C				Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Մթնոլորտային տեղումները, մմ		Քամի, մ/վ		
	Ապահովվածու- թյամբ, %		բացար- ձակ	ամենա- տաք	ամենա- տաք	միջին ամսա- կան	միջին ամսա- կան ժամը 15-ին	Տեղումներ ի քանակ ապրիլ- հոկտեմբե ր ամիսների ն	Տեղումների օրական առավելագույ ն քանակը	Գերակշռող ուղղություն ը հունիս - օգոստոս ամիսների ն	Միջին արագություն - ներից նվազագույնը ըստ ուղղու- թյունների հուլիսին
	0,95	0,99	առավել- լագույն ը	ամսվա միջին առավելա - գույնը	ամսվա միջին օրակա ն տատա- նումը						
Ֆանտան	27	28	35	25,3	12,8	64	45	408	64	ՀսԱրլ	5,6

ՀՀ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Նկ. 3 Կլիմայական շրջանացման սխեմատիկ քարտեզ

Աղյուսակ 2. Կլիմայական շրջանների ֆիզիկաաշխարհագրական բնութագիրը

N	Կլիմայական շրջան	Բարձրությունը ծովի մակար- դակից, մ	Կլիմայական բնութագիր
1	Տաք (S) Ցածրադիր շրջաններ`	մինչև 1200	Ամառ` շոգ, չոր, միջին ջերմաստիճանը հուլիսին` 21°C, հարաբերական խոնավությունը (ժ 15-ին)` 35% ցածր,

	Աշտարակ, Արարատ, Իջևան, Արմավիր, Արտաշատ, Երևան, Կապան, Մեղրի և այլն		բարենպաստ լեռնահովտային քամիներ՝ միջին արագությունը 2,0-3,0 մ/վ Ձմեռ՝ ցուրտ, անհողմ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ց մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 60-70%, քամու միջին արագությունը՝ 2,0-3,0 մ/վ
2	Չափավոր (Չ) Նախալեռնային շրջաններ՝ Վանաձոր, Գորիս, Դիլիջան, Տաշիր, Ստեփանավան, Եղվարդ, Եղեգնաձոր և այլն	1200-1600	Ամառ՝ տաք, խոնավ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C-ից մինչև 20°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին) 45-60%, բարենպաստ քամիներ, միջին արագությունը՝ 2.0-3.0 մ/վ Ձմեռ՝ չափավոր ցուրտ, թույլ քամիներով և օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հունվարին 0°C-ից մինչև մինուս 5°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 50-70%, քամու միջին արագությունը՝ 3.0-5.0 մ/վ
3	Ցուրտ (Ց) Լեռնային շրջաններ՝ Ապարան, Գավառ, Մարտունի, Ֆանտան, Հրազդան, Սևան, Սիսիան, Թալին և այլն	1600 -ից ավելի	Ամառ՝ զով, քամոտ, օպտիմալ խոնավությամբ, միջին ջերմաստիճանը հուլիսին 16°C, հարաբերական խոնավությունը (ժամը 15-ին)՝ 45-60%, քամու միջին արագությունը՝ 3.0-6.0 մ/վ Ձմեռ՝ շատ ցուրտ, քամոտ, խոնավ, միջին ջերմաստիճանը հունվարին՝ մինուս 5°C-ից մինչև մինուս 12°C, հարաբերական

			խոնավությունը (ժամը 15-ին)՝ 70% և ավելի, քամու միջին արագությունը՝ 5.0-7.0 մ/վ
--	--	--	--

N	Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Կլիմայական շրջան
90	Ֆանտան	1800	Ց

Կենսաբազմազանություն

Բուսական և կենդանական աշխարհ

Հիմք ընդունելով այն հանգամանքն, որ «Ալափմետ» ՓԲԸ ընդլայնման՝ մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի ստացման արտադրությունը 2400.0տ/տարի-ից 4800.0տ/տարի արտադրողականության հասցնելու, գործընթացն իրականացվելու է գործող գործարանի տարածքում և նոր տարածքի ներգրավում չի նախատեսվում, ուստի կենդանական և բուսական աշխարհի վրա լրացուցիչ ազդեցություն չի ակնկալվում: Ստորև նեկայացվում է տարածաշրջանի բնորոշ կենսաբազմազանության նկարագիրը:

Չարենցավան համայնքի և շրջակայքի կենսաբազմազանությունը ձևավորվում է դրա աշխարհագրական դիրքով, բնակլիմայական, ռելիեֆային, լանդշաֆտային և այլ պայմանների, ինչպես նաև, կից տարածքների ֆլորիստական և ֆաունիստական ազդեցությունների ներքո:

Չարենցավանի շրջանը գտնվում է իրանական բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանի հյուսիսային մասում, որն արևելյան կողմից սահմանակից է Սևանի բուսաբանա-աշխարհագրական ֆլորիստական շրջանին:

Նկարագրվող տարածքը պատկանում է ցածր լեռնային, չափավոր տաք կլիմայով լանդշաֆտային զոնային, ինչով էլ պայմանավորված են բուսական և կենդանական աշխարհի առանձնահատկությունները:

Եթե բուսական աշխարհի սահմանները ինչ որ չափով որոշվում են և կախված են բնակլիմայական, աշխարհագրական, ձևաբանական, հողածածկույթի և այլ բնական

պայմաններից, ապա կենդանական աշխարհի ներկայացուցիչների տարածման նշված բնական սահմանափակումները ավելի անորոշ են, լայն և դժվար են սահմանագծվում՝ շնորհիվ կենդանիների շարժունակության, միգրացիայի կամ չվի և ապրելակերպի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակավայրերի առատություն):

Լանդշաֆտում տիրապետող են տիպիկ տափաստանային և մարգագետնային բուսատեսակները: Այստեղ հանդիպում են տափաստանային բուսականության շուրջ տասներկու ենթատիպեր, որոնցից ավելի բնորոշ և հաճախ հանդիպող են կծմախոտային, շյուղախոտային, փետրախոտային, սեզային, տարախոտային, հացազգա-տարախոտային տեսակները: Կարելի է հանդիպել բազմաթիվ այլ միջանկյալ լեռնատափաստանային բուսականության ֆորմացիաների, որոնցից հանդիպում են լեռնամարգագետինները: Վերջիններս բնական՝ նախնական վիճակում, այստեղ քիչ են հանդիպում, որովհետև հիմնականում մշակովի հողատարածքների տակ են:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածեցում, անտառահատում, ոռոգում և այլն), որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այնպես էլ քանակը:

Պահպանության կարիք ունեցող ֆլորայի տեսակներ

hh	Բուսատեսակների անվանումը		Պահպանության կարգավիճակը
	Լատիներեն	Հայերեն	
1	<i>Botrichium lunaria</i>	Բոտրիխիում կիսալուսնաձև	1
2	<i>Adiantum capillus veneris</i>	Ադիանթ	1
3	<i>Salvinia natans</i>	Ծովուսպ լողացող	1
4	<i>Juniperus excelsa</i> Bieb. supsp. <i>polikarpus</i>	Գիհի բազմապտուղ	3
5	<i>J. foetidissima</i>	Գիհի գարշահոտ	3
6	<i>Taxus baccata</i>	Կենի հատապտղային, բզենի կարմրածառ	2

7	<i>Acer laetum</i>	Թխկի դուրեկան	1
8	<i>Alissum hayastanum</i>	Վառվռուկ Հայաստանի	2
9	<i>Eryngium wanaturii</i>	Երնջնակ վանատուրի	1
10	<i>Sonchus araraticus</i>	Իշամառուլարարատյան	1

Պահպանության կարիք ունեցող ֆաունայի տեսակները

hh	Կենդանիների անվանումը		Գրանցման Կարմիր գրքի անվանում	
	Լատիներեն	Հայերեն	ՀՀ	ԲՊՄՍ
1	<i>Vormela peregusna</i>	Հարավալեռյան խայտաքիս	2	-
2	<i>Circaetus gollicus Gmelin</i>	Եվրոպական օձակեր	1	-
3	<i>Luscinia svecica occidentalis</i>	Իրանական կապտափող	2	-
4	<i>Lacerta oarva Boulenger</i>	Փոքրասիական մողես	1	-
5	<i>Rhinolophus Mehelyi</i>	Մեհելիի պայտաքիթ	1	-
6	<i>Barbastella leucomelas Gretzschmer</i>	Ասիական լայնականջ չղջիկ	2	-
7	<i>Capra aegagrus erxleben</i>	Բեզդարյան այծ	2	-
8	<i>Mabuya aurata Linneaus</i>	Ոսկեգույն մաբուա	1	-
9	<i>Elaphe hohenakeri strauch</i>	Անդրկովկասյան սահնաօձ	1	-
10	<i>Telescopus fallax iberus eichwaldi</i>	Կովկասյան կատվաօձ	1	-

ՀՀ հատուկ պահպանվող տարածքները

Բնության հատուկ պահպանվող տարածքները պետության կողմից բնության տարբեր տարածքներում որևէ տնտեսական գործունեության սահմանափակումը կամ առհասարակ արգելումն է օրենսդրությամբ, որն ուղղված է կենսաբազմազանությունը և էկոհամակարգերը պահպանելուն:

Բնության հատուկ պահպանվող տարածքների շնորհիվ ապահովվում են եզակի էկոհամակարգերի, հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող, էնդեմիկ, ռելիկտային տեսակների պահպանությունը և վերարտադրությունը բնական միջավայրում:

Բնության հատուկ պահպանվող տարածք կարող են լինել մակերեսային և ստորերկրյա ջրավազները, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի առանձնացված տեղամասերը:

Հայաստանի Հանրապետությունում կա բնության հատուկ պահպանության 4 տեսակ՝

- պետական արգելոցներ,
- ազգային պարկեր,
- պետական արգելավայրեր,
- բնության հուշարձաններ:

Համաձայն «Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և միջոցառումները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 25.09.2014 թ. N- 1059-Ա որոշման ԲՀՊՏ-ների պահպանությունն իրականացնող ՊՈԱԿ-ների կազմում ընդգրկված են հետևյալ ԲՀՊՏ-ները՝ Աղյուսակ 3:


Ընկերությանը պատկանող հողամասի նպատակային նշանակությունը, ըստ կադաստրի վկայականի՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրության նշանակությամբ օբյեկտների է, իսկ նախատեսվող գործունեության հարակից տարածքները գտնվում են մարդու ակտիվ գործունեության ազդեցության շրջանում: Գործունեությանը մոտ, հարակից տարածքներում հատուկ պահպանող տարածքներ չկան:

Աղյուսակ 3; ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ցանկը

ՊՈԱԿ	ԲՀՊՏ-ներ	Տարածքը հա	ՀՀ մարզը
Խոսրովի անտառ պետական արգելոց	«Խոսրովի անտառ» պետական արգելոց	23213.5	Արարատ, Կոտայք
	«Խոսր վիրապ» պետական արգելավայր	50.28	Արարատ
	«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայր	95.9	Արարատ

Զանգեզուր կենսոլորտային համալիր	«Շիկահող» պետական արգելոց	12137.1	Սյունիք
	«Արևիք» ազգային պարկ	31211.19	Սյունիք
	«Բողաքար» արգելավայր	2728	Սյունիք
	«Սոսու պուրակ» արգելավայր	64.2	Սյունիք
	«Զանգեզուր» արգելավայր	25711.6	Սյունիք
	«Խուստուփ» արգելավայր	6946.74	Սյունիք
	«Սև լիճ» արգելավայր	240	Սյունիք
Դիլիջան» ազգային պարկ	«Դիլիջան» ազգային պարկ	33 765	Տավուշ
	«Ախնաբաղի կենու պուրակ» արգելավայր	25	Տավուշ
Սևան ազգային պարկ	«Սևան» ազգային պարկ	147455	Գեղարքունիք
	«Գիհու նոսրանտառային» արգելավայր	3312.0	Գեղարքունիք
Արգելոցապարկային համալիր	«Էրեբունի» պետական արգելոց	118.75	Կոտայք
	«Որդան կարմիր» արգելավայր	219.85	Արմավիր
	«Ջերմուկի ջրաբանական» արգելավայր	17371.76	Վայոց Ձոր
	«Հանքավանի ջրաբանական» արգելավայր	5202.9	Կոտայք
	«Սոճուտ» դենդրոպարկը	35	Լոռի
	Իջևանի դենդրոպարկը	14,6	Տավուշ
	«Վանաձոր» դենդրոպարկը	1,9	Լոռի
	Բերդի «Սորաններ»	62	Տավուշ
	«Զրվեժ» անտառպարկը	423.8	Կոտայք
Զիկատար բնապահպանական կենտրոն	«Զիկատար» արգելավայր	150	Տավուշ
Արփի լիճ ազգային պարկ	«Արփի լիճ» ազգային պարկ	21039.3	Շիրակ

ՀՀ բնության հուշարձանների և պահպանվող տարածքների քարտեզ



Աղյուսակ 4; ՀՀ Կոտայքի մարզի բնության հուշարձաններ Երկրաբանական հուշարձաններ

N	Անվանումը /նկարագիրը/	Տեղադիրքը Կոտայքի մարզ
1	<<Պերլիտ փիղ>> քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2կմ հվ, քահանքի մոտ
2	<<Անանուն>> բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
3	<<Ծակ քար>> բնական թունել	Բջնի գյուղի մոտակայքում, Հրազդան գետի ձախ ափին
4	<<Ավազան>> հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5կմ հս-արլ
5	<<Կարենիս>> հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5կմ հս-արլ
6	<<Գութանասար>> հրաբուխ	Ֆանտան գյուղից 3կմ հվ

7	<<Լեռնահովիտ>> քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5կմ հվ-արլ, <<Թեզխարաբ>> գյուղատեղիի մոտ
---	-------------------------------------	---

Օգտակար հանածոներ

Չարենցավանի քաղաքային համայնքի սահմաններում և հարակից տարածքներում օգտակար հանածոներ չկան: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ Չարենցավանի հիմնադրմանը նախորդող փուլում քաղաքի կառուցման համար տարածքի ընտրությունը հաշվի է առել տվյալ տարածքում օգտակար հանածոների բացակայությունը: Հրազդան քաղաքից մինչև Աբովյան ընկած տարածքում առկա են երկաթի, նեֆելինե սիենիտների, պերլիտի, լիթոիդային պեմզայի, տուֆի, բազալտի և զգալի քանակությամբ այլ օգտակար հանածոների պաշարներ: Սակայն դրանք Չարենցավանից հեռու են:

Չարենցավանից հարավ-արևմուտք 7-րդ կիլոմետրի վրա է գտնվում Սևան-Հրազան կասկադի երրորդ աստիճանը՝ Արգելի նախկինում Գյումուշի հիդրոէլեկտրակայանը, որի դերիվացիոն ջրանցքը Չարենցավանի տարածքով է անցնում և հանդիսանում է քաղաքի կանաչապատ տարածքների ոռոգման սկզբնաղբյուր:

Լեռնագրությունը

Տարածաշրջանը գտնվում է Հրազդան գետի հովտի լայնարձակ ձախափնյա սարահարթում՝ սանդղակաձև թեքված դեպի արևելք, Գեղամա լեռնաշղթայի ջրբաժան գծի կողմը: Իր տեսքով տարածքի ռելիեֆը հրաբխային է, հիմքում շերտավորված կենտրոնական տիպի հրաբուխների ժայթքման նորագույն լավային հոսքերով:

Ըստ ռելիեֆի բնութագրի, տարածքը կարելի է բաժանել 2 մասի՝ հարթավայրային (սարահարթ) և թեքլեռնային (սանդղավանդներ):

Հարթավայրային մասը զբաղեցնում է այն տարածքը, որն անմիջապես հարում է Չարենցավան քաղաքին արևմուտքից ու մասամբ հյուսիսից, իսկ արևելքից՝ Ֆանտան գյուղին: Այն տեղ-տեղ կտրտված է ոչ խորը ձորակներով, գոգահովիտներով, որոնք ունեն առավելապես հյուսիս-արևմտյան ուղղություն (Հրազդան գետի կողմը):

Գոգահովիտների մև մասը չոր է, բայց դրանցից մի քանիսով հոսում են փոքր գետակներ, որոնք սնվում են ոռոգման համակարգի ֆիլտրացիոն ջրերի հաշվին: Նրանց ծախսը զգալիորեն մև անում է մթնոլորտային տեղումների և ձնհալերի ժամանակ:

Տարածքի հարթավայրային մասով անցնում է դերիվացիոն ջրանցքը, որը տարածքի հյուսիս-արևելյան մասում մտնում է թունել: Ջրանցքի ներքևով անցնում է Երևան-Սևան երկաթգծի մայրուղին: Ջրանցքի և երկաթուղու երկայնքով այժմ էլ պահպանվել են շինարարական ածխատանքների հետևանքով առաջացած թափոնները մև կույտեր, նախկին մև գյուղի ջրանցքի շինարարների տների ավերակները և այլն, որոնք ռելիեֆին հաղորդում են զգալի անհարթություն:

Թեքլեռնային մասը ներկայացված է հիմնականում երեք բավականին բարձր սանդղավանդներով: Սանդղավանդները տեղ-տեղ ծածկված են քարակույտերով (չինգիլներով), իսկ տեղ-տեղ նկատվում են ժայռային ապարների ելուստներ: Նրանք բոլորն էլ ձգված են գրեթե միմյանց զուգահեռ հարավ-արևմուտքից մինչև հյուսիս-արևելք:

Ստորին սանդղավանդը գտնվում է տարածքի հյուսիս-արևմտյան մասում, միջինը՝ ձգված է դերիվացիոն ջրանցքի երկայնքով, իսկ վերջինը՝ 1693-1700մ նիշերի վրա է:

Հիդրոգրաֆիա

Շրջանի հիմնական հիդրոգրաֆական զարկերակը հանդիսանում է Հրազդան գետը, որում (նրա միջին հոսանքում) թափվում են Արզական և Թղիտ գետերի առվակները: Ընդհանուր ջրային ավազանի մակերեսը 2650.0կմ² է առանց Սևանա լճի և ունի 141.0կմ երկարություն:

Սևանա լճից մինչև Երևան քաղաքն ամբողջությամբ ձգված Հրազդան գետի ավազանի ձախ մասը շերտավորված է չորրորդականի լավաներով և հրաբխային արտանետումներով (բազալտներ, խարամներ, պեմզաներ և ավազներ):

Գեղամա լեռնաշղթայի ստորերկրյա ջրերը հիմնականում բեռնաթափվում են Հրազդան գետի կիրճում՝ 0.2-2.5մ³/վ ծավալով աղբյուրների տեսքով:

Հրագրան գետի բնական ջրային ռեժիմը բնութագրվում է գարնանային-ամառային ջրառատությամբ, սակավաջրության տևական ժամանակահատվածով, ձմեռային մինիմումով: Հրագրան գետի ռեժիմը լիովին կարգավորված է հիդրոտեխնիկական կառույցների համակարգով:

Շերտագրություն

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են Պլիոցենի հրաբխային գոյացումները, Վերին չորրորդականի մոխրային և լավային գոյացումները, ծածկված ժամանակակից դելյուվիալ-էյուվիալ նստվածքներով: Նրանք ներկայացված են (ներքևից վերև) հետևյալ ապարներով:

Գեոմորֆոլոգիա

Շրջանի մորֆոլոգիայում գուգակցվում են ռելիեֆի հրաբխային, էրոզիոն և գենետիկ տիպերը: Առաջինը հանդիսանում է հիմնական նախաստեղծված, իսկ երկրորդը՝ վերադիր տիպ:

Ռելիեֆի հրաբխային տիպը, որը բնութագրական է Հրագրան գետի միջին հոսանքի ավազանի մև մասին, ուսումնասիրվող շրջանում ներկայացված է Գեղամա լեռնաշղթայից դեպի Հրագրան գետի կիրճը թեքված հյուսիս-արևմտյան լեռնաճյուղի հրաբխային լանջերով:

Այդ լեռնաճյուղերի ծայրամասային՝ արևմտյան մասում գտնվող, ուսումնասիրվող տարածքը բնութագրվում է աստիճանաձև, ուժեղ դենուդացված, պլիոցենային լավաների վաղ հոսքերի փափուկ ձևերով:

Լավային ռելիեֆի սանդղավորությունն առավել վառ արտահայտված է լայնական ուղղությամբ՝ Գեղամա լեռնաշղթայի նախալեռներից մինչև Հրագրան գետի կիրճը:

Հաստաշերտի հզորությունն այստեղ տատանվում է 100-120մ մինչև 500-600մ սահմաններում: Այս հաստաշերտի կազմի մեջ մտնում են նաև Գեղամա լեռնաշղթայի չորրորդականի անդեզիտային և անդեզիտա-բազալտային հոսքերը:

Ռեչիեֆի էրոզիոն տիպին է պատկանում Հրազդան գետի կիրճը, որն ունի ընդհանուր միջօրեական ուղղվածություն և մխրճված է միոցեն-չորրորդականի լավաների, իսկ տեղ-տեղ նրանց տակ փոխված միոցենի ավազաքարա-կավային նստվածքների մեջ:

Կիրճի հունի և հատակի փոքր ոլորաններ նկատվում են առանձին տեղամասերում և պայմանավորված են հիմնականում կիրճի հատակին և լանջերին ապարների ձևափոխումների հետ:

Հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսանկյունից շրջանը համեմատաբար հարուստ է գրունտային ջրերով, որոնք պատկանում են ճեղքային տիպերին: Այս տիպի ջրերի մեջ բացառապես մն նշանակություն ունեն ներլավային և անդրլավային ջրերը, որոնք այստեղ գուգակցված են չորրորդականի և վերին պլիոցենի լավային հոսքերին և կենտրոնացած են, հիմնականում լավաների տակ թաղված հնավուն գետահովիտների ակունքում: Բոլոր այս ջրերը առաձնանում են խմելու համար պիտանիության բարձր որակով, թույլ հանքայնությամբ և 6-8°C կարգի ջերմաստիճանով: Նրանք հզոր աղբյուրների տեսքով մակերևույթ են դուրս գալիս այնտեղ, որտեղ լավային հոսքերի ստորոտը հատվում է ռեչիեֆի ժամանակակից ձևերի մակերեսի դեպրեսիաների հետ:

Ստորերկրյա ջրահոսքերի սնուցումը տեղի է ունենում բազալտային ծածկերում քառսային դասավորված ճաքերի միջոցով:

Ալափարս գյուղից հյուսիս-արևմուտք աղբյուրների խմբերը՝ մինչև 40լ/վ դեբիտով, ծառայում են, որպես ջրամատակարարման աղբյուր Չարենցավանի համար:

Շրջանում նկատվում են նաև կոնտակտային ջրեր դելյուվիալ նստվածքներում՝ նրանց համադրված անդեզիտա-բազալտային լավաներով:

Ֆիզիկա-երկրաբանական պրոցեսներ

Տարածաշրջանում ֆիզիկա-երկրաբանական պրոցեսները տակավին թույլ են զարգացած՝ դիտվում են միայն լոկալ ձորակների ռաջացումներ և մակերևույթային էրոզիա:

Ձորակների ռաջացումները նակտելի են Չարենցավան-Ալափարս ավտոճանապարհի երկայնքով՝ Ալափարս գյուղի հյուսիս-արևելքում: Որպես կանոն, ձորակների

երկարությունը չի գերազանցում 0.3-1.0կմ, խորությունը՝ 1.0-2.5մ, լայնությունը, ըստ վերին մասի՝ 5-8մ:

Վերը նշված տեղերում, հաստատուն հոսքի բացակայության հետևանքով, ձորակների առաջացման պրոցեսները դանդաղ են զարգանում: Ձորակները լցված են պրոյուվիալով՝ ներկայացված փոքր գլաքարերով, մև աբեկորներով, կոպիճով, մանրավազով, վատ հղկված խճով, կավավազա-ավազակավային լցանյութով, բազալտով: Զարգացող ձորակների կողերը հարթ են:

Մակերեսային էրոզիան դիտվում է կիրճերի լանջերին և թմբերին, ունի աննշան տարածում և ներկայացված է շիթային էրոզիայի միջոցով՝ մակերևութային ողողմամբ:

6. Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցությունների բնութագիրը

Զրոգտագործում

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքում: Տարածաշրջանի մակերևութային և ստորերկրա ջրերի որակական և քանակական մոնիթորինգի տվյալները և համապատասխան հիմքերը ներկայացված են ստորև՝ համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրի:

Ընկերությունում ջուրն օգտագործվում է արտադրական, օժանդակ ինչպես նաև խմելու-տնտեսական նպատակներով: Ներկայիս թարմ խմելու որակի ջրի տարեկան ընդհանուր ծախսը կազմում է 6711,2մ³:

Խմելու որակի ջրի մատակարարումը իրականացվում է Վեոլիա Ջուր ՓԲԸ-ն՝ պայմանագրային հիմունքներով, 40.0մմ տրամագծով խողովակով: Ձեռնարկությունում տեխնոլոգիական նպատակով կիրառում է ջրամատակարարման շրջանառու համակարգ:

«ԱԼՍՓՄԵՏ» ՓԲԸ-ի ջրօգտագործման և ջրահեռացման հիմնական ցուցանիշները հաշվարկված է ըստ <<Զրոգտագործման և ջրահեռացման անհատական նորմաներ>>-ի, որը հաստատվել է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կողմից: Աղյուսակ 5

ներկայացվում է ներկայումս Ընկերության կողմից ջրօգտագործման և ջրահեռացման ցուցանիշները:

Աղյուսակ 5; Ալափմետ ՓԲԸ-ի ջրօգտագործման և ջրահեռացման ցուցանիշներ

N	Ջրօգտագործում, մ ³ /տարի						Հեռացվող ջուր, մ ³ /տարի
	Ընդանենը	Խմելու որակի	Տեխնիկ որակի	Շրջանառու	Անվերադարձ օգտագործում	Կորուստ ներ	
1	2	3	4	5	6	7	8
Տեխնոլոգիական կարիքներ							
Խտանյութի թրծում	6948.1	1181.2	-	6948.1	347.4	833.8	-
Ֆեռոսիլիթի ձուլում	14850	1237.5	-	14850	-	1237.5	-
Օժանդակ կարիքների համար							
Լաբորատորիա	610.4	610.4	-	-	-	-	610.4
Խմելու-տնտեսական կարիքներ							
Մանիտարակա և կենցաղային	603.2	603.2	-	-	-	-	603.2
Ցնցուղներ	2475	2475	-	-	-	-	2475
Բաց տարածքի ջրում	164.7	164.7	-	-	164.7	-	-
Ոռոգում	439.2	439.2	-	-	439.2	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	26090.6	6711.2	-	21798.1	951.3	2071.3	3688.6

Ջրօգտագործումը ընդլայնումից հետո

Համաձայն Ընկերության կողմից ներկայացված ելակետային տվյալների՝ գործունեության ընդլայնումից հետո, կապված տեխնոլոգիական պրոցեսից, աշխատանքային ռեժիմից, աշխատանքային օրերի քանակից, ինչպես նաև գործունեությամբ զբաղված աշխատողների թվաքանակից ելնելով նախատեսվող թարմ խմելու որակի ջրի տարեկան ընդհանուր ծախսը ընդլայնումից հետո կկազմի 8769.2մ³:

Գործունեության ընդլայնման արդյունքում պահանջվող ջրօգտագործման տարեկան ընդհանուր ծախսի վերաբերյալ տվյալները ներկայացվում են ստորև՝ հաշվարկային համապատասխան հիմնավորումներով:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և տեղանքի ջրային ռեսուրսները հնարավոր աղտոտումից զերծ պահելու համար գործունեության արդյունքում նախատեսված են և իրականացվում են հետևյալ միջոցառումները, որոնք կշարունակեն գործել նաև ընդլայնումից հետո.

- ջրային սկրուբերում ծծմբական անհիդրիդի կլանումը իրականացնել փակ շրջանառու համակարգի օգնությամբ,
- հիմնական սկրուբերում ծծմբային անհիդրիդի կլանումը՝ հիմնային լուծույթի փակ շրջանառու համակարգով,
- հիդրոմետալուրգիայի վակուում գոիչի ջրային զտվածքի ուղղում դեպի ջրային սկրուբերի ավազան՝ կրկնակի օգտագործման նպատակով,
- գիպսի ստացման ժամանակ առաջացած լուծույթի ուղղում դեպի հիմնային սկրուբերի ավազաններ:

Ձեռնարկության անվանումը	ԱԼԱՓՄԵՏ ՓԲԸ
Իրավաբանական հասցեն	ՀՀ, Կոտայքի մարզ, Ալափարս Չարենցավանի խճուղի1,փակուղի 8
Գործունեության վայրը	ՀՀ, Կոտայքի մարզ, Ալափարս Չարենցավանի խճուղի1,փակուղի 8
Ջրառը (տեխնիկական ջուր)	Վեոլիա Ջուր ՓԲԸ, Չարենցավանի քաղաքային ջրագիծ
Ջրառը (խմելու ջուր)	Վեոլիա Ջուր ՓԲԸ, Չարենցավանի քաղաքային ջրագիծ
Ջրահեռացումը, խմելու տնտեսական	Վեոլիա Ջուր ՓԲԸ, Չարենցավանի քաղաքային կոյուղի
Ջրահեռացումը, տեխնոլոգիական	Չի իրականացվում
Աշխատանքային ռեժիմը	24 Ժամ /3 հերթափոխ /
Աշխատանքային օրերի քանակը	330 օր

Աշխատողների թիվը այդ թվում՝	200 մարդ,
վարչական	26 մարդ
լաբորանտ	6 մարդ
հերթափոխի աշխատողներ	166 մարդ
Ցնցուղներ	5
Բաց տարածքների (հարթակներ) մակերեսը ջրցանի	2700 մ ²
Կանաչ տարածքներ	1200 մ ²
Պլանային հզորությունը ըստ հումքի	4800տ մոլիբդենի խտանյութ

Անհատական Ջրօգտագործման և Ջրահեռացման Նորմաների Հաշվարկ

Նորմավորումն ընդգրկում է պլանային միավոր հումքի համար անհատական նորմաների մշակումը և հաստատումը ինչպես նաև դրանց կատարման հսկողությունը:

Ջրօգտագործման անհատական նորմաներն ըստ միավոր հումքի/աշխատանքի հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$H = \frac{W}{Q}$$

որտեղ,

W - օգտագործվող ջրի տարեկան ծավալն է մ³/տարի

Q - տարեկան հումքի քանակը

Ձեռնարկությունը պլանային հզորությունը կազմում է 4800տ մոլիբդենի խտանյութի վերամշակում:

Ալափմետ ՓԲԸ-ի միավոր հումքի համար անհատական ջրօգտագործման նորմաներն ըստ օգտագործման ուղղությունների բաժանվում են

- ✓ Անահատական Տեխնոլոգիական ջրօգտագործման նորմաներ
- ✓ Անահատական Օժանդակ կարիքների ջրօգտագործման նորմեր
- ✓ Անահատական Խմելու-տնտեսական ջրօգտագործման նորմաներ

Անհատական ջրօգտագործման նորման $H_{տն}$ մեկ տոննա վերամշակվող խտանյութի համար հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$H_{ոգտ} = H_{տեխ} + H_{ոժ} + H_{խ.տ}$$

$H_{տեխ}$ -տեխնոլոգիական կարիքների համար անհատական ջրօգտագործման նորմ

$H_{ոժ}$ - օժանդակ կարիքների համար անհատական ջրօգտագործման նորմ

$H_{խ.տ}$ - խմելու-տնտեսական կարիքների համար ջրօգտագործման նորմ


Ալաբամա ՓԲԸ-ի Ջրահեռացման նորմավորումն ընդգրկում է հոսքային ջրերի ջրահեռացման նորմաների մշակումը և հաստատումը: Ջրահեռացման նորման որոշվում է սահմանված որակի հոսքային ջրերի թույլատրելի առավելագույն պլանային քանակի ջրահեռացման, ըստ միավոր հումքի, հետևյալ բանաձևով՝

$$H_{\omega.z} = W_{\omega.z} / Q$$

Տեխնոլոգիական կարիքների համար ջրօգտագործման անհատական նորմաներ

Մոլիբդենի խտանյութի թրծման տեխնոլոգիական գործընթացի ժամանակ ջուր օգտագործվում է ջրային սկրուբերում և հիմնային սկրուբերում՝ շրջանառու համակարգով:

Ըստ ռեգլամենտի առավելագույն արտադրական հզորության պայմաններում՝ 4800 տ/տարի խտանյութի վերամշակման դեպքում, առաջացած ծծմբի եռօքսիդի քանակությունը կազմում է 387.6 տ/տարի: Սկրուբերներում ծծմբի եռօքսիդի կլանման արդյունքում ստանում են ծծմբական թթու:



Ջրի քանակությունը ծծմբական թթվի ստացման համար ըստ ռեակցիայի կկազմի

$$387.6 \times \frac{18}{80} = 87.2 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ստացված ծծմբական թթվի քանակը 474.8 տ/տարի:

Հիդրոմետալուրգիական տեղամասում պահանջվում է 6%-ոց ծծմբական թթվի լուծույթ, որի ստացման համար շրջանառու ջրի պահանջարկը կկազմի

$$W_{\text{թրծ.}}^{\text{ջրային ս.}} = (474.8 \div 6 \times 94) + 87.2 = 7525.7 \text{ մ}^3 / \text{տարի}$$

Ջրային սկրուբերում 6%-ոց ծծմբական թթվի լուծույթ ստանալուց հետո, այն մղվում է հիդրոմետալուրգիական արտադրամաս, որտեղ պղնձի և ուղեկցող մետաղների նստեցումից հետո ջրային լուծույթը մղվում է հիմնային սկրուբեր:


Հիմնային սկրուբերում օգտագործվում է կրակաթի լուծույթ, որի օգնությամբ կլանվում է ծծմբի երկօքսիդի մինչև 91%:

Ըստ ռեգլամենտի առավելագույն արտադրական հզորության պայմաններում՝ 4800 տ/տարի խտանյութի վերամշակման դեպքում, առաջացած ծծմբի երկօքսիդի քանակությունը կազմում է 2790.8 տ/տարի:

Ծծմբի երկօքսիդի տարեկան կլանվող քանակությունը կկազմի

$$C_{SO_2} = 2790.8 \times 0.91 = 2539.6 \text{ տ/տարի}$$

Տեղի ունեցող քիմիական փոխազդեցությունը ունի այս տեսքը



2539.6 տ/տարի ծծմբի երկօքսիդի կլանման կծախսվի 357.1 տ ջուր, 1111.1տ CaO, և կստացվի 4007.8տ կալցիումի հիդրոսուլֆիտ: Ստացվող հիդրոսուլֆիտի լուծույթը 40%-ոց է որի համար պահանջվող ջրի քանակությունը կկազմի

$$4007.8 \div 40 \times 60 = 6011.7 \text{ մ}^3 / \text{տարի}$$

Ընդհամենը, հիմնային սկրուբերի շրջանառու ջրի պահանջարկը կկազմի

$$W_{\text{թրծ.}}^{\text{հիմնային ս.}} = 6011.7 + 357.1 = 6368.8 \text{ մ}^3 / \text{տարի}$$

Ստացված 40%-ոց հիդրոսուլֆիտի լուծույթը առանձնացվում է, օքսիդիչների

օգնությամբ հիդրոսուլֆիտը վերածվում է սուլֆատի: Կալցիումի սուլֆատը նստեցվում է իսկ պարզվածքը ուղղվում է կրակաթի լուծույթի ստացման համար նախատեսված տարողությունների մեջ:

Այսպիսով թրծման տեղամասում տարեկան տեխնոլոգիական ջրօգտագործումը կկազմի

$$W_{\text{թրծ}} = W_{\text{թրծ. ջրային ս.}} + W_{\text{թրծ. հիմնային ս.}} = 7525.7 + 6368.8 = \mathbf{13,894.5 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Շրջադարձ ջրամատակարարման համակարգի լրասնուցման համար օգտագործվում է թարմ ջուր, որի տարեկան ծավալը հավասար է համակարգի կորուստներին և անվերադարձ օգտագործված ջրի ծավալին: Ջրի շրջանառու համակարգում որը գործում է թրծման տեղամասում (ջրային սկրուբեր, հիմնային սկրուբեր և հիդրոմետալուրգիական տեղամաս) ջրային կորուստները կազմում են շրջանառու ջրի 12%: Իսկ ջրի անվերադարձ օգտագործումը կազմում է շրջանառու ջրի 5%:

Ջրի կորուստների ծավալը կլինի

$$W_{\text{թրծ}}^{\text{կոր}} = 13894.5 * 0.12 = \mathbf{1667.3 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Ջրի անվերադարձ օգտագործումը կլինի

$$W_{\text{թրծ}}^{\text{վ.օ}} = 13894.5 * 0.05 = \mathbf{694.7 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Թարմ ջրի տարեկան ծախսը կլինի

$$W_{\text{թրծ}}^{\text{թարմ}} = 1667.3 + 694.7 = \mathbf{2362 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Անհատական տեխնոլոգիական նորմաներն թրծման տեղամասի համար, ըստ միավոր հումքի կլինեն՝

$$H_{\text{թրծ}} = W_{\text{թրծ}} / Q = 13894.5 / 4800 = \mathbf{2.9 \text{ մ}^3/\text{տ}} \text{ խտանյութի}$$

$$H_{\text{թրծ}}^{\text{թարմ}} = W_{\text{տեխ.վ.}}^{\text{թարմ}} / Q = 2362 / 4800 = \mathbf{0.49 \text{ մ}^3/\text{տ}} \text{ խտանյութի}$$

$$H_{\text{թրծ}}^{\text{կոր}} = W_{\text{տեխ.վ.}}^{\text{կոր}} / Q = 1667.3 / 4800 = \mathbf{0.35 \text{ մ}^3/\text{տ}} \text{ խտանյութի}$$

$$H_{թրծ.}^{U.O} = W_{տեխ.Ա.Օ} / Q = 694.7 / 4800 = 0.14 \text{ մ}^3 / \text{տ խտանյութի}$$

Ֆերոնոլիթի ստացման տեղամասում ջրի տարեկան ծախսը բաղկացած է ձուլվածքի սառեցման համար օգտագործվող ջրի և ձուլման գործընթացից առաջացած գազերի մաքրման համակարգում օգտագործվող ջրի համագումարից՝

$$W_{FeMo} = W_{սառ} + W_{գ.մ.} \text{ մ}^3 / \text{տարի}$$

Ձուլվածքի սառեցման համար օգտագործվում է շրջանառու տեխնիկական ջուր, որի տարեկան ծախսը կկազմի՝

$$W_{սառ} = P \times k \times n \times m \times t$$

P - ջրի ծախսն է, 25 մ³/ժամ

k - բեռնվածության գործակից է, 0.6

n - միատիպ տեխնոլոգիական գործընթացի քանակն է մեկ օրում, 1 հատ

m - մեկ օրում աշխատանքային ժամերի քանակն է, 2 ժամ

t - տարեկան աշխատանքային օրերի քանակն է, 330 օր:

$$W_{սառ} = 25 \times 0.6 \times 1 \times 2 \times 330 = 9900 \text{ մ}^3 / \text{տարի}$$

Շրջանառու ջրամատակարարման համակարգի լրասնուցման համար թարմ ջրի ծախսը կազմում է ջրաօգտագործման 5%-ը, որի տարեկան ծավալը հավասար է համակարգի անվերադարձ կորուստներին, այսինքն գոլորշիացման և օդի հետ ջրի կաթիլների հեռացման՝

$$W_{սառ}^{կոր} = 9900 \times 0.05 = 495 \text{ մ}^3 / \text{տարի}$$

Ձուլման գործընթացի գազերի մաքրման համակարգում օգտագործվում է շրջադարձ տեխնիկական ջուր, որի տարեկան ծախսը կկազմի՝

$$W_{գ.մ.} = P \times k \times n \times m \times t \text{ մ}^3 / \text{տարի}$$

P - ջրի ծախսն է, 30 մ³/ժամ

k - բեռնվածության գործակից է, 0.5

n - միատիպ տեխնոլոգիական գործընթացի քանակն է մեկ օրում, 1 հատ

m - մեկ օրում աշխատանքային ժամերի քանակն է, 1 ժամ

t - տարեկան աշխատանքային օրերի քանակն է, 330 օր

$$W_{q.մ} = 30 \times 0,5 \times 1 \times 1 \times 330 = 4950 \text{ մ}^3/\text{տարի}$$

Շրջանառու ջրամատակարարման համակարգի լրասնուցման համար օգտագործվում է թարմ ջուր, որի տարեկան ծավալը հավասար է համակարգի կորուստներին, այսինքն գոլորշիացման և օդի հետ ջրի կաթիլների հեռացման ծախսին ու կազմում է ջրաօգտագործման 15%-ը՝

$$W_{q.մ}^{կոր} = 4950 \times 0,15 = 742,5 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ֆերոմոլիբդենի տեղամասի տարեկան ջրաօգտագործումը կկազմի՝

$$W_{FeMo} = W_{սառ} + W_{q.մ} = 9900 + 4950 = \mathbf{14850} \text{ մ}^3/\text{տարի}$$

ընդ որում թարմ ջրի տարեկան ծախսը հավասար է՝

$$W_{FeMo}^{թարմ} = 495 + 742,5 = \mathbf{1237,5} \text{ մ}^3/\text{տարի}$$

Ֆերոմոլիբդենի տեղամասի ջրաօգտագործման անհատական նորման պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով հավասար է՝

$$H_{FeMo} = W_{FeMo}/Q = 14850/4800 = \mathbf{3,1} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

այդ թվում թարմ տեխնիկական ջրի օգտագործման անհատական նորման ըստ պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով կազմում է՝

$$H_{FeMo}^{թարմ} = \frac{W_{FeMo}^{թարմ}}{Q} = \frac{1237,5}{4800} = \mathbf{0,26} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Այսպիսով, համաձայն կատարված հաշվարկների, արտադրական (տեխնոլոգիական) տարեկան ջրաօգտագործումը կազմում է՝

$$W_{\text{տեխ}} = W_{\text{թրծ}} + W_{FeMo}^{թարմ} = 13895,5 + 14850 = \mathbf{28,744,5} \text{ մ}^3/\text{տարի}$$

արտադրական (տեխնոլոգիական) ջրաօգտագործման անհատական նորման պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով կկազմի՝

$$H_{\text{տեխ}} = W_{\text{տեխ}} / Q = 28744.5 / 4800 = \mathbf{6 \text{ մ}^3 / \text{տ խտանյութի}}$$

այդ թվում, թարմ ջրի տարեկան ջրաօգտագործումը կազմում է՝

$$W_{\text{տեխ}}^{\text{թարմ}} = W_{\text{թրծ}}^{\text{թարմ}} + W_{\text{FeMo}}^{\text{թարմ}} = 2362 + 1237,5 = \mathbf{3599.5 \text{ մ}^3 / \text{տարի}}$$

ջրաօգտագործման անհատական նորման պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով կկազմի՝

$$H_{\text{տեխ}}^{\text{թարմ}} = \frac{W_{\text{տեխ}}^{\text{թարմ}}}{Q} = \frac{3599.5}{4800} = \mathbf{0.75 \text{ մ}^3 / \text{տ խտանյութի}}$$

այդ թվում, կորուստների ծավալը կլինի

$$W_{\text{տեխ}}^{\text{կոր}} = 1667.3 + 1237.5 = \mathbf{2904.8 \text{ մ}^3 / \text{տարի}}$$

ջրաօգտագործման անհատական նորման պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով կկազմի՝

$$H_{\text{տեխ}}^{\text{կոր}} = \frac{W_{\text{տեխ}}^{\text{կոր}}}{Q} = \frac{2904.8}{4800} = \mathbf{0.61 \text{ մ}^3 / \text{տ խտանյութի}}$$

այդ թվում, անվերադարձ օգտագործման ծավալը կլինի

$$W_{\text{տեխ}}^{\text{Վ.Օ}} = \mathbf{694.7 \text{ մ}^3 / \text{տարի}}$$

ջրաօգտագործման անհատական նորման պլանային մշակվող հումքի (խտանյութ) միավորի հաշվով կկազմի՝

$$H_{\text{տեխ}}^{\text{Վ.Օ}} = \frac{W_{\text{տեխ}}^{\text{Վ.Օ}}}{Q} = \frac{694.7}{4800} = \mathbf{0.14 \text{ մ}^3 / \text{տ խտանյութի}}$$

Օժանդակ կարիքների համար ջրօգտագործման անհատական

Օժանդակ կարիքների համար ջուր օգտագործվում է լաբորատորիայում:

Լաբորատորիայի ջրապահանջ:

Ընկերության լաբորատորիայում իրականացվում են քանակական և որակական անալիզի տարբեր մեթոդներ: Լաբորատորիայում օգտագործվում է խմելու որակի ջուր: Ջրօգտագործման նորմավորման համար, համաձայն ՀՀՇՆ 40-01.01- 2014, քիմիական լաբորատորիայում յուրաքանչյուր լաբորանտի համար ընդհանուր ջրի միջինացված ծախսը մեկ օրվա համար, ներառած նաև տաք ջրի ծախսը, կազմում է 460 լ/օր: Իսկ յուրաքանչյուր սարքավորման համար 0,2լ/ժամ: Ջրօգտագործման ծախսը կլինի՝

$$W_{\text{լաբ.}} = (n_1 \times K_1 + n_2 \times K_2) \times T$$

որտեղ,

n_1 - ծախսվող ջրի չափաբաժինն է քիմիական լաբորատորիայի յուրաքանչյուր աշխատողի համար 460 լ/օր,

K_1 - լաբորատորիայում աշխատողների քանակն է՝ 6 մարդ

n_2 - ծախսվող ջրի չափաբաժինն է լաբորատոր սարքավորումների համար՝ 4,8 լ/օր

K_2 - սարքավորումների քանակն է՝ 2 հատ

T - տարվա աշխատանքային օրերի քանակն է՝ 330 օր

$$W_{\text{լաբ.}} = (460 \times 6 + 4.8 \times 2) \times 330 = \mathbf{914 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Օժանդակ կարիքների համար ջրի տարեկան պահանջարկը կկազմի

$$W_{\text{օժ}} = \mathbf{914 \text{ մ}^3/\text{տ}}$$

ձեռնարկության անհատական նորման օժանդակ կարիքների համար, ըստ միավոր հումքի կլինեն՝

$$H_{\text{օժ}} = W_{\text{լաբ.}} / Q = 914 / 4800 = \mathbf{0.19 \text{ մ}^3/\text{տ}} \text{ խտանյութի}$$

Խմելու և տնտեսական կարիքների համար ջրօգտագործման անհատական նորմեր

Խմելու տնտեսական կարիքների համար ջուրն օգտագործվում է սանիտարահիգիենիկ, ցնցուղների, հարթակների ջրման և կանաչ տարածքների ոռոգման

համար: Ջրի հաշվարկային ծախսը որոշվում է համաձայն ՀՀՇՆ 40-01.01- 2014
չափաքանակների:

Սանիտարա-կենցաղային կարիքներ

Ձեռնարկությունում սանիտարա-կենցաղային կարիքների համար օգտագործվում
է խմելու որակի ջուր:

Աշխատողների կենցաղային կարիքները հոգալու համար տարեկան պահանջվող
ջրի ծավալը հաշվում են հետևյալ բանաձևով՝

$$W_{u.կ.} = (n_1 \times K_1 + n_2 \times K_2) \times T$$

որտեղ,

n_1 - ծախսվող ջրի առավելագույն օրեկան չափաբաժինն է վարչական
աշխատողների համար 0.016 մ³/օր

K_1 - վարչական աշխատողների քանակն է՝ 26 մարդ

n_2 - ծախսվող ջրի առավելագույն օրեկան չափաբաժինն է արտադրամասերում
աշխատակիցների համար 1 հերթափոխում՝ 0.025 մ³/օր

K_2 - արտադրամասերում աշխատակիցների քանակն է մեկ օրվա ընթացքում 126
մարդ

T - տարվա աշխատանքային օրերի քանակն է՝ 330 օր

Թարմ ջրի տարեկան պահանջը հավասար է՝

$$W_{u.կ.} = (0.016 \times 26 + 0.025 \times 126) \times 330 = 1176.8 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ցնցուղներ

Ընկերությունում տեղադրված է 5 հատ ցնցուղներ: Համաձայն ՀՀՇՆ 40.01.01-2014, մեկ
ցնցուղային ցանցի համար առավելագույն ջրի ծախսի նորմատիվը (n) կազմում է 500 լ
հերթափոխում:

Ցնցուղների տարեկան օգտագործած ջրի ծախսը հաշվում են հետևյալ բանաձևով

$$W_g = K_1 \times n \times K_2 \times T$$

որտեղ,

K_1 - միաժամանակ աշխատող ցնցուղների քանակն է՝ 5 ցնցուղ

n - մեկ ցնցուղի օգտագործած ջրի չափաբաժինն է՝ 0.5 մ³/հերթ.

K_2 - մեկ օրվա հերթափախների քանակն է՝ 3 հերթ.

T - տարվա աշխատանքային օրերի քանակն է՝ 330 օր

Հետևաբար՝ Թարմ ջրի պահանջը տարեկան կազմում է՝

$$W_g = 5 \times 0.5 \times 3 \times 330 = 2475 \text{ մ}^3/\text{տարի}$$

Հարթակների ջրում

ջուրն օգտագործվում է արտադրահրապարակը ջրելու համար (փոշին մեղմելու նպատակով): Օգտագործվում է թարմ խմելու որակի ջուր: Բաց տարածքների ջրման համար տարեկան պահանջվող ջրի քանակը հաշվում են հետևյալ բանաձևով

$$W_{h.g.} = S \times n \times k \times T$$

Որտեղ՝

S ջրվող տարածության մակերեսն է՝ 2700 մ²

n - 1 մ² տարածության ջրման համար պահանջվող ջրի չափաբաժինն է՝ 0,0005 մ³/ մ²

K - օրվա ընթացքում ջրումների քանակն է՝ 1 անգամ

T - տարվա ընթացքում ջրման օրերի քանակն է՝ 122 օր

Հետևաբար,

$$W_{h.g.} = 2700 \times 0.0005 \times 1 \times 122 = 1647 \text{ մ}^3/\text{տարի}$$

Կանաչ տարածքների ոռոգում

Օգտագործվում է թարմ խմելու որակի ջուր: Ոռոգման համար տարեկան պահանջվող ջրի քանակը հաշվում են հետևյալ բանաձևով

$$W_n = S \times n \times k \times T$$

Որտեղ՝

S ջրվող տարածության մակերեսն է՝ 1200 մ²

n - 1 մ² տարածության ջրման համար պահանջվող ջրի չափաբաժինն է՝ 0.003 մ³/ մ²

K - օրվա ընթացքում ջրումների քանակն է՝ 1 անգամ

T - տարվա ընթացքում ջրման օրերի քանակն է՝ 122 օր

Հետևաբար,

$$W_n = 1200 \times 0.003 \times 1 \times 122 = 439.2 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ձեռնարկության խմելու-տնտեսական կարիքների համար օգտագործվող ջրի տարեկան ծախսը կլինի՝

$$W_{\text{խ.տ.}} = W_{\text{ս.կ.}} + W_{\text{գ.}} + W_{\text{հ.ջ.}} + W_n = 1176.8 + 2475 + 164.7 + 439.2 = 4255.7 \text{ մ}^3/\text{տարի}$$

Անվերադարձ օգտագործվում է հարթակների ջրման և ոռոգման նպատակով օգտագործվող ջուրը:

$$W_{\text{խ.տ.}}^{\text{Ա.օ.}} = W_{\text{հ.ջ.}} + W_n = 164.7 + 439.2 = 603.9 \text{ մ}^3/\text{տարի}$$

Ընկերության անհատական նորման խմելու-տնտեսական կարիքների համար, ըստ միավոր հումքի կլինեն՝

$$H_{\text{խ.տ.}} = W_{\text{խ.տ.}} / Q = 3969.2/4800 = 0.89 \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

$$H_{\text{խ.տ.}}^{\text{Ա.օ.}} = W_{\text{խ.տ.}}^{\text{Ա.օ.}} / Q = 603.9/4800 = 0.13 \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Ձեռնարկության ջրօգտագործման ցուցանիշները և անհատական նորմաներ

Ձեռնարկության կողմից օգտագործվող ջրի տարեկան ծախսը կլինի՝

$$W = W_{\text{տեխ.}} + W_{\text{օժ}} + W_{\text{լու.տ.}}$$

$$W = 28744.5 + 914 + 4255.7 = \mathbf{33,914.2 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Ընդ որում շրջանառու ջրի տարեկան ծախսը կլինի՝

$$W_{\text{շրջ}} = W_{\text{թրծ}} + W_{\text{FeMo}} = 13894.5 + 14850 = \mathbf{28,744.5 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Այդ թվում, թարմ ջուր՝ խմելու որակի

$$W_{\text{թարմ}} = W_{\text{տեխ.}}^{\text{թարմ}} + W_{\text{օժ}} + W_{\text{լու.տ.}} = 3599.5 + 914 + 4255.7 = \mathbf{8769.2 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Անվերադարձ օգտագործվող ջուրը

$$W_{\text{Ա.Օ}} = W_{\text{տեխ.}}^{\text{Ա.Օ}} + W_{\text{լու.տ.}}^{\text{Ա.Օ}} = 694.7 + 603.9 = \mathbf{1298.6 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Կորուստները

$$W_{\text{կոր}} = W_{\text{տեխ.}}^{\text{կոր}} = \mathbf{2904.8 \text{ մ}^3/\text{տարի}}$$

Ձեռնարկության ջրօգտագործման անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի խտանյութի), կլինեն՝

$$H_{\text{Ա.Օ.}} = H_{\text{տեխ.}} + H_{\text{լու.տ.}} + H_{\text{օժ}}$$

$$H_{\text{Ա.Օ.}} = 6 + 0.89 + 0.19 = \mathbf{7.08 \text{ մ}^3/\text{տ խտանյութի}}$$

Շրջանառու համակարգի ջրօգտագործման անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի խտանյութի), կլինեն՝

$$H_{\text{շրջ.}} = W_{\text{շրջ.}} / Q = 28744.5 / 4800 = \mathbf{6 \text{ մ}^3/\text{տ խտանյութի}}$$

Թարմ ջրի՝ խմելու որակի, անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի

խտանյութի), կլինեն՝

$$H_{\text{թարմ}} = W_{\text{թարմ}}/Q = 8769.2/4800 = \mathbf{1.83} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Անվերադարձ օգտագործման ջրի անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի խտանյութի), կլինեն՝

$$H_{\text{u.o.}} = W_{\text{u.o.}}/Q = 1298.6/4800 = \mathbf{0.27} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Ջրի կորուստների անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի խտանյութի), կլինեն՝

$$H_{\text{կ}} = W_{\text{կոր}}/Q = 2904.8/4800 = \mathbf{0.61} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Ձեռնարկության ջրահեռացման անհատական նորմաներ

Ընկերությունը արտադրական գործընթացներում օգտագործում է ջրի փակ շրջանաձև համակարգ: Այս համակարգը ապահովում է արտադրական արտահոսքերի բացակայություն:

Ընկերության գործունեության արդյունքում ջրային արտահոսքեր առաջանում են միայն օժանդակ կարիքների և խմելու-տնտեսական նպատակով ջրօգտագործման արդյունքում:

Ջրահեռացման ծավալն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{Ձ.չ}} = W_{\text{օժ}} + (W_{\text{խ.տ.}} - W_{\text{խ.տ.}}^{\text{u.o.}}) = 914 + (4255.7 - 603.9) = \mathbf{4565.8} \text{ մ}^3/\text{տարի}$$

Ձեռնարկության ջրահեռացման անհատական նորման ըստ միավոր հումքի (մոլիբդենի խտանյութի) կլինի

$$\underline{H_{\text{Ձ.չ}}} = 4565.8/4800 = \mathbf{0.95} \text{ մ}^3/\text{տ խտանյութի}$$

Ձեռնարկության ջրօգտագործման *և* ջրահեռացման հիմանական ցուցանիշները տրված են աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6: «ԱԼԱՓՄԵՏ»ՓԲԸ-ի ջրօգտագործման և ջրահեռացման հիմնական ցուցանիշները

	Ջրօգտագործում, մ ³ /տարի						Հեռացվող Ջուր
	Ընդամենը	Խմելու Որակի	Տեխն. որակի	Շրջանառու	Անվերադարձ օգտագործում	կորուստներ	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.
Տեխնոլոգիական կարիքներ							
Խտանութի թրծում	13894.5	2362	-	13894.5	694.7	1667.3	-
Ֆեռոմոլիբդենի ձուլում	14850	1237.5	-	14850	-	1237.5	
Օժանդակ կարիքների համար							
Լաբորատորիա	914	914					914
Խմելու տնտեսական կարիքներ							
Սանիտարա կենցաղային	1176.8	1176.8	-	-	-	-	1176.8
Ցնցուղները	2475	2475	-	-	-	-	2475
Բաց տարածքների ջրում	164.7	164.7	-	-	164.7	-	-
Ոռոգում	439.2	439.2	-	-	439.2	-	-
ԸՆԴԱՄԵՆԸ	33914.2	8769.2	-	28744.5	1298.6	2904.8	4565.8


**Մակերևութային և ստորերկրա ջրերի մոնիթորինգի տվյալները
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք**

Ինչպես արդեն նշվել է Ընկերությունը իր կարիքների համար ջրօտագործումը՝ ջրամատակարարում և ջրահեռացում, իրականացնում է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի օգույթամբ: Բացի այդ կիրառում է ջրի շրջանառու համակարգ բնական ռեսուրսները ռացոնալ օգտագործելու, ինչպես նաև շրջակա ջրայն ռեսուրսները /մակերևութային և ստորերկրիա ջրերը/ հնարավոր աղտոտումից զերծ պահելու նպատակով:


Ստորև ներկայացվում է տարածաշրջանի մակերևութային և ստորերկրա ջրերի որակական և քանակական մոնիթորինգի տվյալները համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրի:

Հրագրանի ՋԿՏ-ը ներառում է Հրագրանի և Քասախի գետավազանները: Այստեղ ջրային ռեսուրսների աղտոտման աղբյուրներ են հանդիսանում հիմնականում կոմունալ- կենցաղային կեղտաջրերը:

2021 թվականին Հրագրանի ՋԿՏ-ում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է 20 դիտակետում, որոնցից 5%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս, 30%-ում՝ 3-րդ դաս, 15%-ում՝ 4-րդ դաս և 50%-ում՝ 5-րդ դաս: Նախորդ տարվա համեմատ 2021 թվականին ջրի որակի էական փոփոխություն չի նկատվել, բացառությամբ Քասախ գետի՝ Ապարանից վերև դիտակետի, որտեղ ջրի որակը 2-րդ դասից դարձել է 3-րդ դաս: Հրագրան գետի Քաղսիից ներքև դիտակետի, որտեղ ջրի որակը 5-րդ դասից դարձել է 4-րդ դաս: Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարուրը, Հրագրանը, Գետաղը և Ծաղկաձորը:



Հրագրանի ՋԿՏ թափվող վնասակար նյութեր, 2020թ.



Աղտոտված գետերից են Քասախը, Գեղարուրը, Հրագրանը, Գետաղը և Ծաղկաձորը:

Ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 27 դիտակետում, որից 13-ում՝ նաև որակի մոնիթորինգ:

2020 թվականին այս ՋԿՏ-ից ջրառը կազմել է 927.2 մլն մ³, որից 39%-ը բաժին է ընկնում մակերևութային, 61%-ը՝ ստորերկրյա ջրերին: Ջրօգտագործումն իրականացվել է հիմնականում ձկնաբուծության (47.8%), ոռոգման (37.4%) և արտադրական (7.9%) նպատակներով:

Մակերևութային ջրեր Հիդրոլոգիական դիտարկումներ

Հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Յոթ հիդրոլոգիական դիտակետերի ջրի միջին տարեկան էլքերի վերաբերյալ տվյալները և նորմերի նկատմամբ շեղումները ներկայացվում են.

Աղյուսակ 12. Հրագդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին տարեկան ելքեր, մ ³ /վ		
		փաստացի	նորմա	%
Հրագդան	Հրագդան	5.05	7.77	65.0
Հրագդան	Արգել	2.96	4.21	70.2
Հրագդան	Երևան	6.23	6.81	91.4
Մարմարիկ	Հանքավան	1.23	1.68	73.3
Մարմարիկ	Աղավնաձոր	3.64	4.79	76.0
Քասախ	Վարդենիս	0.56	1.21	46.1
Քասախ	Աշտարակ	3.38	3.43	98.4

Մակերևութային ջրերի որակ

Հրագդան գետի ջրի որակը Գեղամավան գյուղի մոտ գնահատվել է «միջակ» (3-րդ դաս)՝ պայմանավորված թթվածնի քիմիական պահանջով և ալյումինով: Քաղսի գյուղից ներքև ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված վանադիումով: Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևան քաղաքից ներքև՝


Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս). Արգել գյուղից ներքև և Արգնի ՀԷԿ-ից վերև պայմանավորված վանադիումով, Երևան քաղաքից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ հատվածում՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով, գետաբերանում՝ ամոնիում իոնով և վանադիումով, Գեղանիստ գյուղի մոտ՝ ամոնիում, ֆոսֆատ իոններով և վանադիումով:

Գետառ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում գնահատվել է «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված ամոնիում, ֆոսֆատ իոններով, վանադիումով, ընդհանուր անօրգանական ազոտով և ընդհանուր ֆոսֆորով:


Մարմարիկ գետի ջրի որակը Հանքավան գյուղից վերև հատվածում գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով:

Ծաղկաձոր գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև


գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս)՝ պայմանավորված մանգանով, Ծաղկաձոր քաղաքից ներքև՝ «վատ» (5-րդ դաս)՝ պայմանավորված՝ ամոնիում իոնով և մանգանով:



Գծապատկեր . Հրազդան գետի ջրում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր . Հրազդան գետի ջրում ամոնիում իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր . Հրազդան գետի ջրում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 27 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը, իսկ 13 դիտակետից իրականացվել են նաև նմուշառումներ՝ ջրի որակի ուսումնասիրության նպատակով:



Սուլակ գյուղի N1297 դիտակետում 2021 թվականը ծախսերի բարձր արժեքները նկատվել են մայիս-հունիս, իսկ ցածրը՝ դեկտեմբեր-մարտ ամիսներին և տատանվում են 0.03-0.35 լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 93 %:

Համեմատաբար կայուն ծախսով են բնորոշվում Ապարան քաղաքի N2051 բնաղբյուրը, որտեղ ծախսը 2021 թվականը տատանվել է 4.01 – 6.33 լ/վ սահմաններում՝ կազմելով շուրջ 37%: Համանման պատկեր է նկատվում Կարբի գյուղի N1636 դիտակետում, որտեղ տատանումները կազմում են 34% :

Տարվա ընթացքում աննշան փոփոխություններ են նկատվում նաև ընդհանուր հանքայնացման և ընդհանուր կոշտության մեծություններում: 2017-2021թթ. N 1636 դիտակետում ընդհանուր հանքայնացումը տատանվել է 0.21 - 0.23 գ/լ, իսկ ընդհանուր կոշտությունը՝ 2.0 - 2.15 մգ.համ/լ սահմաններում:


Նշված ջրաղբյուրներում ջրերի որակական և քանակական փոփոխությունները պայմանավորված են միայն բնական պայմաններով:

2021 թվականին Հրազդանի ՋԿՏ-ի 11 դիտակետերից մայիս և նոյեմբեր ամիսներին իրականացվել են նմուշառումներ, որտեղ ջրերի որակի ուսումնասիրության արդյունքում հանքայնացումը գերազանցել է ՍԹԿ-ն NN1519, 2007 և 2053 շատրվանող հորատանցքերում, իսկ նիտրատ իոնի կոնցենտրացիան գերազանցվել է Նիգավան գյուղի N2010 գրունտային ջրհորում:




Հատվածող հորատակերտ
Մակարրակ, մ

Հրազդանի ՋԿՏ



Հատվածող հորատակերտ
Օսկա, 1/4


Հրազդանի ՋԿՏ




Գծապատկեր . Հրազդանի ՋԿՏ-ի շատվածող հորատակերտի օրի ծախսերի փոփոխությունները

Գունատափն օտորներ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր . Հրազդանի ՋԿՏ-ի գունատափն օտորների օրի մակարրակների փոփոխությունները




Գծաաատներ . Հրազդանի ՋԿՏ-ի բնաբյուրերում հանքային ազոտի փոփոխությունը



Գծաաատներ . Հրազդանի ՋԿՏ-ի բնաբյուրերում նիտրատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը / 2021 թվական



Մթնոլորտային արտանետումներ

Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը տեղակայված է ՀՀ կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի Ալափարս բնակավայրի տարածում: Գործունեությունը զգայուն կլանիչներից՝ բնակավայրից, գտնվում է բավարար հեռավորության վրա և ապահովում է նորմերով նախատեսված սանիտարապաշտպանիչ գոտին:

Ընկերությունում գործունեության իրականացման արդյունքում մթնոլորտային արտանետումների աղբյուր են հանդիսանում.

- հիդրոմետալուրգիայի տեղամաս՝ փոշու արտանետման չկազմակերպված աղբյուր,
- խտանյութի թրծման արտադրամաս՝ չորացման վառարաններից գազի այրման արգասիքներ, բեռնելու և բեռնաթափման ընթացքում անօրգանական փոշու արտանետում,
- ֆեռոմոլիբդենի պատրաստման արտադրամաս /հումքատեսակների գնդիկավոր աղացներ/՝ փոշու արտանետում, չորացում և հալեցում՝ բնական գազի այրման արգասիքների արտանետում, խառնիչների աշխատանքի ընթացք՝ փոշու արտանետում:

Համաձայն СН 245-71 / Химическая переработка руд редких металлов для получения солей молибдена, вольфрама и кобальта/ IV դաս է, ընկերության համար ընդունվել է 500մ սանիտարապաշտպանիչ գոտի, հաշվի առնելով մերձակայքում բնակելի տների հեռավորությունը՝ 2.6կմ, ընկերությունը լիովին ապահովում է:

Աղյուսակ 7: Ընկերության գործունեության արդյունքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի տեսական և քանակական ցանկը 2400տ/տարի հզորության ընթացքում:

Նյութի անվանումը	ՄԹԿ միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Քանակը, գ/վրկ և տ/տարի
1	2	3
Անօրգանական փոշի /SiO ₂ <20%/	0.5	0. 4465/3.272
Ծծմբի երկօքսիդ /SO ₂ /	0. 5	4. 368/125. 58
Ածխածնի մոնօքսիդ	5. 0	0. 272/3. 988
Ազոտի երկօքսիդ	0. 2	0. 046/0. 665

Գործունեության ընթացքում մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը նվազեցնելու նպատակով նախատեսվում և իրականացվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

1. Վառարանից գազաօդային խառնուրդի քառաստիճանային մաքրում, հետևյալ սարքավորումների կիրառմամբ՝
 - նստեցման և հովացման խուց /70% արդյունավետությամբ փոշու կլանում/,
 - թևքային գտիչ /98% արդյունավետությամբ փոշու կլանում/,
 - ջրային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է շրջանառու ջրային հոսքով, ապահովելով ծծմբական անհիդրիդի կլանում 99%, իսկ ծծմբային անհիդրիդը՝ 1%, ինչպես նաև փոշու կլանում՝ 50% արդյունավետությամբ,
 - հիմնական սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է կրակաթի թույլ լուծույթով ապահովելով ծծմբային անհիդրիդի կլանում 96%, իսկ ծծմբական անհիդրիդը գործնականում ամբողջությամբ, ինչպես նաև փոշու կլանում՝ 50% արդյունավետությամբ:
2. Թրծման վառարան՝ պինդ մասնիկների նստեցում մի շարք մաքրման հանգույցների օգնությամբ, որոնց արդյունավետությունը կազմում է համապատասխանաբար.
 - առաջնային խուց՝ 70%,
 - թևքային գտիչ՝ 98%,
 - ջրային սկրուբեր՝ 50%,
 - հիմնական սկրուբեր՝ 50%:

Թևքային գտիչներում, որպես ֆիլտրող նյութ օգտագործվում են հետևյալ մանրաթելից գործվածքներ-պոլիէսթեր (պոլիէսթեր, լավսան), նիտրոն (ակրիլ), պոլիպրոպիլեն, պոլիամիդ, բամբակ, բուրդ, ապակի, արսելոն: Ֆիլտրող գործվածքների աշխատանքային ռեժիմը կազմում է 15-30 օր: Օգտագործված ֆիլտրող գործվածքները որպես պինդ թափոն անձնագրավորված են որպես Ջտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ 58200200 01 01 3, տարեկան 5000տ կշռով: Ջտիչ գործվածքները և պարկերը՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ հավաքում են մոլիբդենի կոնցենտրատի բաղադրանյութեր, ուստի փոխարինումից հետո գործվածքների մանցորդները հավաքվում են մետաղյա տակառներում և տեղափոխվում հումքի աղացման տեղամաս և պարբերաբար հումքի հետ աղացվում են: Թափոնը աղբավայրում տեղադրելու ենթակա չէ:

Մթնոլորտային արտանետումները ընդլայնումից հետո

Կազմակերպության բնութագիրը, որպես մթնոլորտային օդն աղտոտող աղբյուր

Ընկերության տեխնոլոգիական պրոցեսները ուղեկցվում են դեպի մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումներով: Ընկերությունում մթնոլորտային արտանետումների աղբյուր են հանդիսանում տեխնոլոգիական գործընթացների տարբեր հանգույցների սարքավորումները և գործընթացները: Արտանետման աղբյուրների պարամետրերը որոշվել են գործիքային չափումների և հաշվարկային եղանակով, համաձայն օգտագործվող հումքի և վառելանյութի տեսակի, քանակի և տեխնոլոգիական ընթացակարգերի:

ա. Խտանյութի չորացման վառարան

Խտանյութի (4800 տ/տարի) չորացումը կատարվում է բնական գազով տաքացվող 2 չորացուցիչում: Բնական գազի այրման արդյունքում առաջանում են ածխածնի օքսիդի և ազոտի օքսիդների արտանետումներ: Առաջացող գազաօդային խառնուրդը արտանետվում է 2 հատ 11մ երկարությամբ և 0.4մ լայնությամբ ծխնելուզի միջոցով՝ որոնք միավորվում է որպես մեկ արտանետման աղբյուր, գազի ծախսը կազմում է՝ 100 մ³/ ժամ, 748800 մ³/տարի (աղբյուր Ա1):

Հումքի բեռնման և բեռնաթափման արդյունքում առաջանում են անօրգանական փոշու արտանետումներ, որոնք արտանետվում են շինության տանիքում տեղադրված դեֆլեկտորներով՝ աեռացիոն օդանցք (աղբյուր Ա2):

բ. Խտանյութի թրծման վառարաններ

Խտանյութի թրծման ընթացքում առաջացող գազաօդային խառնուրդը պարունակում է անօրգանական փոշի և ծծմբային անհիդրիդ:

Թրծման ժամանակ խտանյութի որոշ քանակություն արտանետվում է գազաօդային խառնուրդի հետ անօրգանական փոշու տեսքով, որոնք հիմնականում հանդիսանում են չթրծված կամ կիսաթրծված խտանյութի մասնիկներ: Մասնիկները վառարանից հետո անցնում են մի շարք մաքրման հանգույցներով, որոնց արդյունավետությունները կազմում են՝

- Առաջնային խուց՝ 70 %,
- Թևքային գոտի՝ 98 %,
- Ջրային սկրուբեր՝ 50 %,
- Հիմնային սկրուբեր՝ 50 %:

Թրծուման ժամանակ, մոլիբդենի սուլֆիդը, օքսիդացման արդյունքում, վերածվում է մոլիբդենի եռօքսիդի և առաջանում է ծծմբային անհիդրիդի, որը դուրս է բերվում գազաօդային խառնուրդի միջոցով:

Թրծումը կատարվում է էլեկտրական էներգիայի և ռեակցիայի ջերմության միջոցով:

Վառարանից գազաօդային խառնուրդը մղվում է դեպի գազամաքրման հանգույց, որը բաղկացած է հետևյալ սարքավորումներից.

- նստեցման և հովացման խուց 70 % արդյունավետությամբ (փոշու կլանում);
- թևքային գոտիչ 98 % արդյունավետությամբ (փոշու կլանում);
- ջրային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է շրջանառու ջրային հոսքով, ապահովելով ծծմբական անհիդրիդի կլանման 99 %, ծծմբային անհիդրիդի 1 % և փոշու կլանման 50 % արդյունավետություն;
- հիմնային սկրուբեր, որտեղ գազաօդային խառնուրդը լվացվում է կրակաթի թույլ լուծույթով, ապահովելով ծծմբային անհիդրիդի կլանման 96 %, իսկ ծծմբական անհիդրիդը գործնականում ամբողջությամբ, և փոշու կլանման 50 % արդյունավետություն;

Մաքրված գազաօդային խառնուրդը արտանետվում է մթնոլորտ՝ 47մ բարձրությամբ և 0.8 մ տրամագծով ծխնելույզի միջոցով (աղբյուր Ա3):

գ. Մոլիբդենի եռօքսիդի մանրացում

Թրծված խտանյութի 30% վառարանից հետո մանրացվում է գնդիկավոր աղացում, որի ընթացքում առաջանում են փոշու չկազմակերպված արտանետումներ: Աղացներից փոշին շենքի աեռացիոն օդանցքների և տանիքի դեֆլեկտորների միջոցով արտանետվում է մթնոլորտ (աղբյուր Ա4):

դ. Կրաքարի թրծում

Վառարան, որտեղ վերամշակվում է ամսեկան 74տ կրաքարը, աշխատում է օրեկան 8 ժամ աշխատանքային ռեժիմով, գազի այրման արգասիքները արտանետվում են 11մ բարձրության և 0.5մ տրամագծով ծխատար խողովակից, գազի ծախսը կազմում է՝ 50 մ³ / ժամ, 125000 մ³/տարի (աղբյուր Ա5).

ե. Հիդրոմետալուրգիական մաքրում

Հիդրոմետալուրգիական եղանակով մոլիբդենի խտանյություն առկա ուղեկցող մետաղների (Cu, Zn, Pb) կորզվում են ջրային լուծույթների միջոցով, օգտագործելով քիմիական ռեագենտներ: Տվյալ դեպքում ռեագենտներից ցնդող են ծծմբական թթվի գոլորշիները, որոնց քանակը հաշվարկվում է օգտագործվող թթվի քանակից, որը կազմում է 288 տ/տարի:

Լուծույթի տաքացման համար օգտագործվում է բնական գազ (50 մ³/ժամ): Գոլորշիները և բնական գազի այրման արգասիքները արտանետվում են 0.1 տրամագծով 8մ բարձրություն ծխատարով (աղբյուր Ա6):

գ. Ֆերոհամաձուլվածքների արտադրություն

Միլիկոթերմիկ եղանակով ֆերոհամաձուլվածքների՝ ֆերոմոլիբդենի, ֆերովոլֆրամի, ֆերովանադիումի արտադրության ժամանակ

- հումքային նյութերի չորացման ժամանակ արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ 8մ բարձրությամբ և 0.24մ տրամագծով խողովակից, գազի ծախսը կազմում է՝ 40 մ³/ ժամ, 100000 մ³/տարի (աղբյուր Ա7),
- հումքային նյութերի աղացման և խառնման գործողությունների արդյունքում առաջացող անօրգանական փոշի արտանետվում է տեղային օդաքարշ համակարգով

Ֆերոհամաձուլվածքների արտադրությունում ելանյութերը մանրացվում է աղացների վրա:

Ըստ մեթոդակարգի ջարդիչում 1 կգ հումքի մանրացման ընթացքում առաջանում է 0.1 մ³ աղտոտված օդային զանգված, որում փոշու կոնցենտրացիան կազմում է 2 գ/մ³, այստեղից՝

$$2,160,000 \times 2 = 4.32 \text{ տ/տարի}$$

Ջարդիչը տեղադրված է փակ շինության մեջ և համաձայն մեթոդակարգի փոշու արտանետումների 80-90 % նստում է շինության մեջ և արտանետվում՝ 0.864 տ/տարի:

(աղբյուր Ա8)

- Ֆերոհամաձուլվածքների ստացման վառարաններից գազաօդային խառնուրդը ջրային կլանիչներում խառնվելուց հետո արտանետվում են 32մ բարձրության և 0.8մ տրամագծով խողովակից: *Ֆերոհամաձուլվածքների արտադրությունում* առկա է 5 հանքահորային վառարանները, որոնք աշխատում են հաջորդաբար, հալման պրոցեսի ընթացքում առաջացած գազերի հեռացման նպատակով նախատեսված է գլխանոց: Առաջացած գազերը ուղղվում են փոշու մաքրման սարքավորում – թաց ցիկլոն-լվացման

խուց: Որսված փոշին վերադարձվում է արտադրություն: Փոշու բռնման արդյունավետությունը կազմում է 87-90% (աղբյուր Ա9):


- Կաթսայատուն, աղմինիստրատիվ շենքի ջեռուցման նպատակով տեղադրված են 3 հատ գազային ջեռուցման կաթսաներ յուրաքանչյուրը 32 կՎատտ հզորությամբ: Արտանետվում են բնական գազի այրման արգասիքներ (աղբյուր Ա10):

Արտանետումների բոլոր աղբյուրները հաստատուն են:

Վնասակար արտանետումների քանակական բաղադրությունների հաշվարկը կատարվել է գործող մեթոդակարգերի համաձայն [11-12]:

Վնասակար նյութերի արտանետումների տեղաբաշխումը ցույց է տրված ընկերության իրադրային հատակագծի վրա:

«Ալափմետ» ՓԲԸ իրադրային հատակագիծը մթնոլորտ վնասակար արտանետումների աղբյուրներով



«Ալափմետ» ՓԲԸ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը բերված է աղյուսակ 8-ում:

Մթնոլորտ վնասակար նյութերի արտանետումների ընդհանուր քանակը կազմում է 135,89 տ/տարի:

Զարկային արտանետումների բնութագիրը

Զարկային արտանետումները հաշվի են առնված միայն արտանետման չափաքանակներում տարեկան կտրվածքով: Դրանց համար չի իրականացվում ցրման հաշվարկ և դրանք չեն կարող ընդգրկվել տվյալ նյութի առավելագույն միանգամյա (գ/վրկ) արտանետման չափաքանակում:

Արտանետման աղբյուրների պարամետրերը որոշվել են գործիքային չափումներով, իսկ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակները՝ հաշվարկային, որոնք բերված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 8: Ալափմետ ՓԲԸ-ի Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ցանկը

N N	Նյութերի անվանումը	Մթն, միանգամյա առավելագույն, մգ/մ ³	Նյութերի արտանետումը, տ/տարի
1	Փոշի անօրգանական	0,5	4,48
2	Ածխածնի օքսիդ	5	14,23
3	Ազոտի օքսիդներ	0,2	2,5
4	Ծծմբային երկօքսիդ	0,5	111,58
5	Կրափոշի	0,5	0,2
6	Ծծմբական թթվի գոլորշիներ	0,3	2,9
7	Ընդամենը		135,89

Գումարային վնասակար ազդեցությամբ օժտված են ծծմբային երկօքսիդը, ազոտի օքսիդները և ծծմբային թթուն:

ՍԹԱ ՀԱՇՎԱՐԿԻ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՂՏՈՏՈՂ ԼՅՈՒԹԵՐԻ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԸ

Աղյուսակ 9.

Արտադրություն, արտադրամաս	Աղտոտող նյութերի առաջացման աղբյուրները	Տարեկան աշխատաժամը		Արտանետման աղբյուրների անվանումը		Աղբյուրների քանակը		Աղբյուրի կարգաթիվը			
		Անվանումը		Քանակը							
		ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ		
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Թրծման տեղամաս	Չորացման վառարան	1		7488		Խողովակ		1		Ա1	
Թրծման տեղամաս	Հումքի բեռնում և բեռնաթափում	1		8000		Աէռացիոն օդանցք		1		Ա2	
Թրծման տեղամաս	Խտանյութի թրծում	4		8000		Խողովակ		1		Ա3	
Թրծման տեղամաս	Մանրացում և աղում	1		8000		Աէռացիոն օդանցք		1		Ա4	
Թրծման տեղամաս	Կրաքարի թրծում	1		2500		Խողովակ		1		Ա5	
Թրծման տեղամաս	Հիդրոմետալուրգիա	1		8000		Խողովակ		1		Ա6	
Ֆերոհամաձուլված քների տեղամաս	Հումքի չորացում	1		2500		Խողովակ		1		Ա7	
Ֆերոհամաձուլված քների տեղամաս	Աղաց	1		2500		Աէռացիոն օդանցք		1		Ա8	
Ֆերոհամաձուլված քների տեղամաս	Ֆերոհամաձուլվածքն երի վառարան	1		2500		Խողովակ		1		Ա9	
Վարչական մասնաշենք	Կաթսայատուն	1		6240		Խողովակ		1		Ա10	

9-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Աղբյուրի բարձրությունը, մ		Տրամագիծը, մ		Գազատաօդային խառնուրդի պարամետրերը արտանետման աղբյուրի ելքում					
						Արագությունը մ/վրկ		ճավալը մ ³ /վրկ		ջերմաստիճանը	
11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ	ՆՎ	Հ
Ա1		11		0.4		16		2,0		110	
Ա2		8.2		1		3		2,355		20	
Ա3		47		0.8		15		7,53		25	
Ա4		8.2		1		3		2,355		20	
Ա5		11		0.5		15		2,94		120	
Ա6		8		0.1		25		0,196		90	
Ա7		8		0.24		16		0,72		100	
Ա8		8.2		1		3		2,355		20	
Ա9		32		0.8		20		10,048		40	
Ա10		3		0.1		15		0,118		50	

9-րդ աղյուսակի շարունակությունը

Աղբյուրի կարգաթիվը		Նյութի անվանումը	Ատոսող նյութերի արտանետումները						ՍԹԱ հանելու տարին
			ՆՎ			Հ ՍԹԱ			
ՆՎ	Հ		գ/լ	մգ/մ3	տ/տարի	գ/լ	մգ/մ3	տ/տարի	
11	12	33	34	35	36	37	38	39	40
1		Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ	0.358 0.06		9.66 1.61	0.358 0.06		9.66 1.61	2023
2		Անօրգանական փոշի	0.033		0.96	0.033		0.96	2023
3		Անօրգանական փոշի Ծծմբի երկօքսիդ	0.014 3.87		0.4 111.58	0.014 3.87		0.4 111.58	2023
4		Անօրգանական փոշի	0.0016		0.46	0.0016		0.46	2023
5		Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ Կրի փոշի	0.18 0.03 0.019		1.61 0.27 0.2	0.18 0.03 0.019		1.61 0.27 0.2	2023
6		Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ Ծծմբական թթվի գոլորշի	0.18 0.03 0.1		1.61 0.27 2.9	0.18 0.03 0.1		1.61 0.27 2.9	2023
7		Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ	0.14 0.024		1.29 0.215	0.14 0.024		1.29 0.215	2023
8		Անօրգանական փոշի	0.096		0.864	0.096		0.864	2023
9		Անօրգանական փոշի	0.2		1.8	0.2		1.8	2023
10		Ածխածնի օքսիդ Ազոտի օքսիդներ	0.0025 0.0058		0.056 0.13	0.0025 0.0058		0.056 0.13	2023

Մթնոլորտային օդի աղտոտվածության մակարդակը

Չարենցավան քաղաքի տարածքում մթնոլորտն աղտոտող նյութերի միջին տարեկան ֆոնային կոնցենտրացիաների արժեքները՝ մգ/մ³, վերցված են «ՀՀ տարածքում 2021թ. մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին» Ամփոփագրից /9/:

Միջին տարեկան ֆոնային կոնցենտրացիայի արժեքներն են.

- ծծմբի երկօքսիդ՝ 0.0204 մգ/մ³ (0,041 ՍԹԿ միավոր),

- ազոտի օքսիդներ 0.016 մգ/մ³ (0,08 ՍԹԿ միավոր):

Չարենցավան քաղաքում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցում սահմանված նորմերը:

Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

Մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկները կատարվել են համակարգչային՝ «Էկոլոգ 4.60», ծրագրով, ելակետային տվյալների հիման վրա, մեկ արտհրապարակի համար:

Վնասակար նյութերի մերձգետնյա կոնցենտրացիաները որոշվել են ինչպես հաշվարկային հարթակի մակերեսով, այնպես էլ հանձնարարված հաշվարկային կետերում, որոնք գտնվում են սանիտարապաշտպանիչ գոտու եզրագծին և մոտակա բնակելի տարածքում :

Հաշվարկների արդյունքները ամփոփ տեսքով բերված են 9 աղյուսակում:

Մերձգետնյա կոնցենտրացիաների համակարգչային հաշվարկների արդյունքների սխեմաները բերված է հավելվածում 9-ում:

Մթնոլորտում վնասակար նյութերի ցրման հաշվարկների արդյունքում հաստատված է, որ մերձգետնյա կոնցենտրացիաները գտնվում են սահմանված նորմերում:

Աղտոտվածության մակարդակը արտադրության գոտու եզրագծում կազմելու է 0,02÷0,5 ՍԹԿ միավոր, սանիտարա-պաշտպանիչ գոտու եզրագծին կազմելու է 0,07÷0,53 ՍԹԿ միավոր, իսկ մոտակա բնակելի գոտում՝ 0.0082÷0.12 ՍԹԿ միավոր:

Տեղանքի ռելիեֆի գործակցի հաշվարկը

Հաշվարկը կատարվել է համաձայն ՕՀԸ-86: Տեղանքի ռելիեֆի ուղղման գործակիցը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\eta = 1 + \varphi_1 (\eta_m - 1)$$

որտեղ՝ η_m - որոշվում է 4.1 աղյուսակի օգնությամբ՝ կախված ռելիեֆի ձևից:

H - արտանետման աղբյուրի առավելագույն բարձրությունն է, H = 47 մ;

h₀ - արգելքի (խոչընդոտի) բարձրությունը, h₀ = 140 մ;

a₀ - բլուրի (թումբ) կիսալայնությունը, a₀ = 300 մ;

X₀ - արգելքի կենտրոնից մինչև արտանետման աղբյուրը հեռավորությունը,

$$X_0 = 90 \text{ մ};$$

n₁, n₂ - անչափ (չափագուրկ) մեծություններ են, որոնք որոշվում են՝

$$n_1 = H/h_0 = 0.33 < 0.5$$

$$n_2 = a_0/h_0 = 2.14$$

ՕՀԸ-86, գլուխ 4, 4.1 աղյուսակից, էլնելով n₁ և n₂-ից որոշում ենք η_m -ը՝ $\eta_m = 3$:

φ_1 ֆունկցիայի արժեքը որոշվում է X₀/a₀ հարաբերությունից կախված՝ 4.1 գրաֆիկով:

$$X_0/a_0 = 0.3:$$

Համապատասխանաբար $\varphi_1 = 0.05$: Տեղանքի ռելիեֆի գործակիցը՝

$$\eta = 1 + \varphi_1 \cdot (\eta_m - 1) = 1 + 0.05 \cdot (3 - 1) = 1.1$$

$$\eta = 1.1:$$

Աղյուսակ 10; Մերձգետնյա կոնցենտրացիաների հաշվարկների արդյունքները

	Անվանումը	ՄԹԿ ա.մ. մգ/ մ ³	Մաքսիմալ մերձգետնյա կոնցենտրացիաները ՄԹԿ-ի մասով			
			առավելագույն կոնցենտրացիա և արտադրական հրապարակում	Արտադրության գոտու եզրագծին	Սանիտարա-պաշտպանիչ գոտու եզրագծին	մոտակա բնակելի գոտու եզրագծին
1.	Անօրգանական փոշի	0,5	0,38	0,38	0,32	0,02
2.	Ածխածնի օքսիդ	5	0,071	0,07	0,07	0,0082
3.	Ազոտի օքսիդներ	0,2	0,5	0,5	0,09	0,04
4.	Ծծմբային անհիդրիդ	0,5	0,24	0,2	0,18	0,11
5.	Ծծմբական թթու	0,3	0,49	0,43	0,49	0,02
Գումարային խումբ						
6.	Ծծմբի անհիդրիդ + ծծմբական թթու	1	0,56	0,46	0,53	0,12
7.	Ազոտի օքսիդներ + ծծմբի անհիդրիդ	1,6	0,33	0,33	0,23	0,09

*- Էլնելով «Էկոլոգ 4.60» մեքենայական հաշվարկից կրափոշու հաշվարկի կարիք չկա:

«Ալափմետ» ՓԲԸ առաջարկվող արտանետման չափաքանակները ընդլայնման արդյունքում ներկայացված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11: «Ալափմետ» ՓԲԸ անշարժ աղբյուրներից աղտոտող նյութեր մթնոլորտ արտանետելու չափաքանակներ /արտանետման թույլտվություններ

	Աղտոտող նյութեր	Ձեռնարկության արտանետում	
		գ/վրկ	տ/տարի
	1	2	3
1	Անօրգանական փոշի	0,35	4,48
2	Ածխածնի օքսիդ	0,86	14,23
3	Ազոտի օքսիդներ	0,15	2,5
4	Ծծմբային անհիդրիդ	3,87	111,58
5	Կրափոշի	0,019	0,2
6	Ծծմբական թթվի գոլորշիներ	0,1	2,9

Մթնոլորտային օդի տվյալները


Ընկերության գործունեության տարածքի մթնոլորտային օդի որակական և քանակական մոնիթորինգի տվյալները ներկայացված են ստորև՝ համաձայն ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրի:

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 դիտակետ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին տարեկան կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Նախորդ տարվա համեմատությամբ 11%-ով նվազել է ծծմբի երկօքսիդի, 1%-ով՝ ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաները:


Ծծմբի երկօքսիդ (SO₂)
Կոնց. (մգ/մ³)



Չարենցավան



Գծապատկերներ. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիայի փոփոխությունը

Ազոտի երկօքսիդ (NO₂)
Կոնց. (մգ/մ³)







Չարենցավան

Գծապատկեր. Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում աղտոտիչների միջին տարեկան կոնցենտրացիայի փոփոխությունը և անշարժ աղբյուրներից վնասակար նյութերի արտանետումները

Մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021 / ՉԱՐԵՆՑԱՎԱՆ



Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2) միջին տարեկան կոնցենտրացիոն բաշխվածություն 2021 / ՉԱՐԵՆՑԱՎԱՆ



Հողի որակի նորմեր

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության կողմից իրականացվող գործունեությունը նախատեսվում է արդեն իսկ գոյություն ունեցող և կառուցապատված տարածքում, իսկ նախատեսվող ընդլայնման արդյունքում նոր տարածքների օտարում կամ խախտում չի նախատեսվում, ուստի տարածաշրջանի հողային ռեսուրսներին հասցվող հնարավոր ազդեցությունը բացակայում է:

Ստորև ներկայացվում է տարածաշրջանում իրականացված հողային ծածկույթի աղտոտվածության ուսումնասիրության արդյունքները ըստ «Հիդրո օդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի:

Հողերի որակի գիտատույն իրականացվում է համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հունվարի 25-ի N 01-Ն հրամանի՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) կողմից, որն ամփոփված է Կազմակերպության 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրում:

Տվյալների ամփոփում - 2021 թվականի հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրման համար դիտարկումներն իրականացվել են Լոռի, Վայոց ձոր, Սյունիք, Շիրակ և Արմավիր մարզերում, ինչպես նաև՝ Երևան քաղաքում: Համաձայն վերը նշված տվյալների ՀՀ Կոտայքի մարզում հողային ծածկույթի ծանր մետաղներով աղտոտվածության ուսումնասիրություն չի իրականացվել:

Թափոնների կառավարում

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004թ.), սահմանում է երկրի պետական քաղաքականությունը թափոնների գործածության բնագավառում՝ նպատակ ունենալով կանխարգելելու դրանց վնասակար ազդեցությունը շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա և առավելագույնի հասցնելու դրանց օգտագործումը որպես երկրորդային հումք:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները

կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Գործունեության տարածքից թափոնները հեռացվում կամ տրվում են վնասազերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին /հավելված 2/, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

«ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ անձնագրավորել է թվով 10 թափոններ, որոնք հաստատվել են ՀՀ ՇՄ նախարարության կողմից: Թափոններից 6 պատկանում են 4-րդ դասի են (նվազ վտանգավոր) և 4 –ը վտանգավորության 3-րդ դասի են (չափավոր վտանգավոր):

Աղյուսակ 11; ընկերության գործունեության արդյունքում առաջացած թափոնների քանակական ցուցանիշները /ներկա իրավիճակում և հեռանկարային/

	Անվանումը	Ծածկագիրը	Քանակությունները ներկա/հեռակա տ/տարի
1	Յուղոտված լաթեր	58200600 01 01 4	0.350/0.400
2	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի)	91200400 01 00 4	11/15
3	Բանեցված կոմպրեսորային յուղեր	54100211 02 03 3	1.5/1.5
4	Ջտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ	58200200 01 01 3	5/10
5	Ջտման գործվածքներ, պարկեր, առանց վնասակար խառնուրդների	58200800 01 01 4	1.5/3.0
6	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի)	35131100 01 00 4	10.0/10.0

7	Շենքերի քանդումից առաջացած շինարարական աղբ	91200601 01 00 4	15.0/15.0
8	Ֆերոհամահալվածքների խարամ	31202500 01 01 3	2500/2500
9	Գիպսային շլամ՝ վնասակար խառնուկներով	31602000 04 00 4	2500/5000
10	Պղնձի շլամ	35700600 04 01 3	13/18.0

Պինդ կենցաղային թափոններին պատկանում են՝ թուղթը, ստվարաթուղթը, տեքստիլը, պլաստմասը և այլն: Թափոնների առաջացման նորման 0.3 մ³/տարի 1 մարդու համար: Տեսակարար կշիռը՝ 0.25տ/մ³: Հաշվի առնելով աշխատողների թվաքանակը առաջացվող կենցաղային աղբի քանակը կկազմի 15 տ/տարի:

Ընկերության գործունեությունից կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի) պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր 91200400 01 00 4:

Պինդ կենցաղային թափոնները կուտակվում են տարածքում առկա աղբամանների մեջ, որտեղից էլ պարբերաբար տեղափոխվում են համապատասխան աղբավայր՝ համաձայնեցված տեղական կառավարման մարմինների հետ:

Նախատեսվող արտադրության ընդլայնման արդյունքում կանխատեսվում է հետևյալ թափոնների տեսակի առաջացում, դրանք են.

- Ֆերոհամահալվածքների խարամ՝ 3120250001013,

Այս թափոնը իրենից ներկայացնում է սիլիկատային միացություն, որը բավականին կարծր է և կարող է օգտագործվել որպես լցանյութ խոռոչների, փոսերի լցման, ծածկման համար: Որպես հավելանյութ, կարող է օգտագործվել շինարարական նյութերի արտադրության մեջ:

- Գիպսային շլամ՝ վնասակար խառնուկներով 3160200004004,

Այս թափոնը իրենից ներկայացնում է գիպս, մետաղական խառնուրդներով: Որպես էլանյութ, կարող է օգտագործվել շինարարական նյութերի արտադրության մեջ, մասնավորապես գաջի կամ գիպսի: Այն ենթակա է տեղադրման համայնքային աղբավայրերում, թաղման եղանակով:

- Պղնձի շլամ՝ 3570060004013,

Այս թափոնը իրենից ներկայացնում է մոլիբդենի խտանյութի թրծման ծխագազերի կլանման արդյունքում առաջացած լուծույթային մնացորդ, մետաղների պարունակությամբ: Պղնձի 30գ/լ և ավելի պարունակության դեպքում թափոնն ենթարկվում է վերամշակման՝ պղնձի լուծահանման, իսկ ավելի քիչ պարունակության դեպքում վնասագերծվում է տեղում:

Ընկերության տարածքում թափոնները պահումը իրականացվում է թափոնների ժամանակավոր տեղադրում հատուկ հատկացված տեղերում տես հավելված 5՝ դրանց հետագա օգտահանման կամ հեռացման նպատակով:

Ընկերության տարածքում, գործունեության արդյունքում առաջացող թափոնների հետ կիրառվող միջոցառումները ըստ յուրաքանչյուր տեսակի ներկայացված է աղյուսակ 12:

Աղյուսակ 12

	Թափոնի անունը և ծածկագիրը	Վտանգ ավորության դասը	Նախատեսվող միջոցառումներ	Թափոնի գոյացման նորմատիվ քանակները
1.	Յուղոտված լաթեր 58200600 01 01 4	4	Ընկերության տարածքում, ձեռքերի, յուղոտված մակերեսների, սարքավորումների սրբման արդյունքում առաջացող թափոն: Յուղոտված լաթերը հավաքվում է ընկերության տարածքում տեղադրված յուղոտված լաթերի համար նախատեսված մետաղական տակառներում, որտեղից այն տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	350 կգ/տարի
2.	Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբխոշոր եզրաչափերի) 91200400 01 00 4	4	Ընկերության տարածքում, աշխատակիցների կենսագործունեությունից առաջացող, սպառողական հատկությունները և պիտանելիությունը կորցրած իրեր: Չտեսակավորված աղբը հավաքվում է ընկերության տարածքում տեղադրված աղբամաններում, որտեղից այն տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	11տ/տարի
3.	Բանեցված կոմպրեսորային յուղեր 54100211 02 03 3	3	Ընկերության տարածքում, կոմպրեսորային կայանների շահագործման արդյունքում առաջացող յուղեր: Բանեցված կոմպրեսորային յուղերը հավաքվում են մյուս թափոններից առանձին, մետաղյա կամ պլաստմասե յուղի համար նախատեսված	1.5 տ/տարի

			տակառնություն և օգտագործվում է ընկերության հաստոցների ու այլ տեխնիկական միջոցների հիդրավլիկ համակարգերում՝ յուղի համալրման համար և աղբավայրերում տեղադրման ենթակա չէ:	
4.	Զտիչ գործվածքներ և պարկեր՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ 58200200 01 01 3	3	Ընկերության տարածքում, թևքային ֆիլտրներում արտանետվող գազերի մեջ փոշու բռնման համար օգտագործվող գտիչ գործվածքներ, որոնք վնասվել են և պիտանի չեն հետագա օգտագործման համար: Զտիչ գործվածքները և պարկերը՝ վնասակար (անօրգանական) աղտոտվածությամբ հավաքում են մոլիբդենի կոնցենտրատի բաղադրանյութեր, ուստի փոխարինումից հետո գործվածքների մանցորդները հավաքվում են մետաղյա տակառններում և տեղափոխվում հումքի աղացման տեղամաս և պարբերաբար հումքի հետ աղացվում են: Թափոնը աղբավայրում տեղադրման ենթակա չէ:	5 տ/տարի
5.	Զտման գործվածքներ, պարկեր, առանց վնասակար խառնուրդների 58200800 01 01 4	4	Ընկերության տարածքում, գտման գործվածքներ, պարկեր, առանց վնասակար խառնուրդների, առաջանում են արտադրության համար անհրաժեշտ տարբերա սորուն նյութերի ստացման և տեղափոխման արդյունքում: Զտման գործվածքներ, պարկեր, առանց վնասակար խառնուրդների հավաքվում է ընկերության տարածքում տեղադրված աղբամաններում, որտեղից այն տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	1.5 տ/տարի
6.	Չտեսակավորված սև մետաղներ պարունակող թափոններ (այդ թվում՝ թուջի և/կամ պողպատի փոշի) 35131100 01 00 4	4	Ընկերության տարածքում, շարքից դուրս եկած սարքավորումների և հոսքագծերի մետաղական մասերը որպես սև մետաղի ջարդոն հավաքվում են արտադրական մասնաշենքում և պարբերաբար հանձնվում են մետաղաձուլական ընկերություններին, վերամշակման նպատակով:	10 տ/տարի
7.	Շենքերի քանդումից առաջացած	4	Ընկերության տարածքում, շինարարական աշխատանքների արդյունքում առաջացած շինարարական աղբը հավաքվում է	15 տ/տարի

	շինարարական աղբ 91200601 01 00 4		ընկերության տարածքում, որտեղից այն տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	
8.	Ֆերոհամահավ ածքների խարամ 31202500 01 01 3	3	Ընկերության տարածքում, ֆերոհամահավածքների ձուլման արդյունքում առաջացած խարամը սիլիկատային միացություն է որում պարունակվող մետաղները հանդես են գալիս օքսիդների տեսքով, սիլիկատային բյուրեղավանդակի մեջ: Որպես սիլիկատներ բավականին կարծր է և կարող է օգտագործվել որպես լցանյութ խոռոչների, փոսերի լցման, ծածկման համար: Որպես հավելանյութ, կարող է օգտագործվել շինարարական նյութերի արտադրության մեջ: Ֆերոհամահավածքների խարամը հավաքվում է արտադրական մասնաշենքում և պարբերաբար տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	2500 տ/տարի
9.	Գիպսային շլամ՝ վնասակար խառնուկներով 31602000 04 00 4	4	Ընկերության տարածքում, մոլիբդենի խտանյութի թրծման ժամանակ առաջացած ծծմբի օքսիդի կլանման արդյունքում ստացվում է գիպսային շլամ: Այս թափոնը իրենից ներկայացնում է գիպս, մետաղական խառնուրդներով: Որպես ելանյութ, կարող է օգտագործվել շինարարական նյութերի արտադրության մեջ, մասնավորապես գաջի կամ գիպսի: Գիպսային շլամը հավաքվում է արտադրական մասնաշենքում և պարբերաբար տեղափոխվում է Չարենցավան համայնքի ենթակայության տակ գտնվող աղբավայր, համայնքային կոմունալ ծառայության ուժերով:	5000 տ/տարի
10.	Պղնձի շլամ 35700600 04 01 3	3	Այս թափոնը իրենից ներկայացնում է մոլիբդենի խտանյութի թրծման ծխագազերի կլանման արդյունքում առաջացած լուծույթային մնացորդ, մետաղների պարունակությամբ: Որը պղնձի 30գ/լ և ավելի պարունակության դեպքում ենթարկվում է վերամշակման՝ պղնձի լուծահանման, իսկ ավելի քիչ պարունակության դեպքում վնասագերծվում է կրով, վերածվելով գիպսային շլամի:	1.3 տ/տարի

Թափոնների հեռացման վայրերի ուսումնասիրություն

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոտեղեկատվության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի («ՀՄԿ» ՊՈԱԿ) կողմից, ի աջակցություն թափոնների գոյացման, վերամշակման ու օգտահանման օբյեկտների և հեռացման վայրերի ռեեստրների ստեղծման, աղբավայրերի ներկա վիճակի ուսումնասիրման, ինչպես նաև այնտեղ կուտակվող աղբի ծավալների վերաբերյալ տեղեկություն հավաքագրելու նպատակով կատարվել են հետազոտություններ Ջերմուկ, Ստեփանավան, Իջևան, Մասիս, Արարատ, Արթիկ, Դիլիջան, Թալին, Հրազդան, Չարենցավան, Տաշիր համայնքներում: Տեղեկատվությունն ամփոփված է Կազմակերպության 2021 թվականի շրջակա միջավայրի մասին տարեկան տեղեկագրում:

Կազմակերպությունների գործունեությունից առաջացած թափոնների վիճակագրական տվյալների ուսումնասիրություն

Թափոնների պետական կադաստրի ստեղծման և վարման միջոցառումներին ի աջակցություն, կատարվել է ՀՀ տարածքում 2020 թվականին առաջացած թափոնների վերաբերյալ կազմակերպությունների կողմից ներկայացված վարչական վիճակագրական հաշվետվությունների ուսումնասիրում և վերլուծություն: 2020 թվականին հաշվետվություն ներկայացրած ձեռնարկությունների թիվը կազմում է 1244 ձեռնարկություն, որոնցից 1038-ը՝ մարզերում, 206-ը՝ Երևան քաղաքում:

Չարենցավան համայնք

Աղբավայրը գտնվում է Չարենցավան քաղաքի կենտրոնից 5.0կմ հեռավորության վրա և զբաղեցնում է 3.0հա տարածք: Չարենցավան համայնքի աղբավայրում տեղադրվում է նաև հարակից 5 համայնքների կողմից գոյացված կենցաղային թափոնները, որոնք տարեկան կազմում են 3200.0մ³: Չարենցավան համայնքի աղբահանությունը իրականացվում է «Բարմակ» ՍՊԸ-ի կողմից պայմանագրային հիմքերով, 2 հատ Գազ 53 հատուկ աղբատար, 2 հատ Զիլ և 3 հատ Գազ 53 ինքնաթափ տեխնիկայի



օգնությամբ: Աղբահանության սակագինը մեկ շնչի համար Չարենցավան համայնքում կազմում է 200 դրամ, իսկ գյուղերում 150 դրամ:

7. Շրջակա միջավայրի վրա հնարավոր վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր

Կենսաբազմազանություն

Ինչպես արդեն նշվել է նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Ընկերության սեփականությունը հանդիսացող տարածքում և նոր տարածքների ներգրավում չի նախատեսվում, իսկ գործունեությունն իրականացվում է մարդկային ակտիվ ազդեցություն ունեցող գոտում, ուստի անմիջական ազդեցություն տարածքի կենդանական ու բուսական աշխարհի վրա չի նախատեսվում:

Հիմք ընդունելով վերոգրյալը նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ կենսաբազմազանության վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Զգայուն կլանիչներ

Զգայուն կլանիչների՝ մասնավորապես բնակավայրերի, վրա նախատեսվող գործունեությունը հնարավոր ազդեցություն չունի, քանի որ մոտակա Ալափարս գյուղը և Չարենցավան քաղաքը գտնվում են համապատասխանաբար 2.6կմ և 2.2կմ հեռավորության վրա:

Բոլոր հումքատեսակների տեղափոխումն իրականացվում է փակ ծածքով ավտոտրանսպորտային միջոցներով, իսկ դրանց և արտադրական մնացորդների ընդունումը և պահեստավորումն իրականացվում են փակ շինությունների մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով փոշու հետևանքով տարածքի հնարավոր աղտոտումը:

Օդային ավազանի վրա հնարավոր ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է պահպանել Առողջապահության Նախարարի 2010թ-ի «Կազմակերպությունների

աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N 2.2.5-004-10 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 27 հրամանի պահանջները:

Աղմուկի և վիբրացիա

Արտադրական գործունեության ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը գտնվում է թույլատրելի սահմաններում: Նախագծային փուլում իրականացվել են շրջակա միջավայրի վրա և աշխատատեղերում աղմուկի և թրթռման մակարդակների գործիքային չափումներ, ըստ տվյալների և վերլուծության արդյունքների աղմուկի և թրթռման մակարդակները համապատասխանում են ՀՀ Առողջապահության նախարարության հրամանով 2002թ սահմանված թիվ 138 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի եվ հասարակական շենքերում եվ բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերին սահմանային չափերին:

Հրդեհային անվտանգություն

Արտադրությունում գտնվող բոլոր էլեկտրական ենթակայանները պետք է համալրված լինեն հրդեհային ավտոմոտ սարքերով, որոնք վերահսկվում են տարածքներում հրդեհի յուրաքանչյուր բռնկում և դրանց բացահայտման դեպքում ավտոմատ միացնում են հրդեհների մեկուսացման համակարգը:

Հրդեհի ժամանակ հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ դադարեցվում է գործարանի շահագործումը, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, միացվում է հակահրդեհային ջրի համակարգը, իսկ սպասարկող անձնակազմը տեղափոխվում է առավել անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան ծառայության՝ Չարենցավանի

ստորաբաժանման պատասխանատուները և տեղական ինքնակառավարման մարմինները:

Սոցիալական ներդրումներ

Ընկերությունը գործադիր մարմնի և հիմնադիրների համաձայնեցմամբ պլանավորում է 2023թ-ից իրականացնել սոցիալական ներդրումային ծրագրեր 10-15 մլն դրամի շրջանականերում: Սոցիալակն ծրագրերի ընտրության հարցում ընկերությունը անմիջական համագործակցելու է Չարենցավանի համայնքապետարանի և բնակիչների հետ: Ներդրումային ծրագրերը պետք է լինեն հրապարակային, լուսաբանվեն և ուղղված լինեն համայնքային խնդիրների լուծմանը: Ծրագրերի ընդունման, հաստատման և իրականացման ընթացքը կիրականացվի Կորպորատիվ Սոցիալակական Պատասխանատվության լավագույն փորձի օրինակներով:

Ծրագրերի իրականացման բնագավառները լինելու են

- Բնապահպանական
- Հանրային բարեկեցության
- Կրթական

Հողային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության՝ մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի, այնուհետև ֆերոմոլիբդենի ստացման արտադրության ընդլայնման, ինչպես նաև ենթակառուցվածքների իրականացման համար լրացուցիչ տարածքների կամ նոր հողային ռեսուրսների ներառում չի նախատեսվում: Գործունեությունն իրականացվելու է գոյություն ունեցող և արդեն կառուցապատված՝ Ընկերության սեփականությունը հանդիսացող, տարածքում:

Գործունեության տարածքում հողային ռեսուրսերի պահպանման հիմնական միջոցառում են հանդիսանում հումքի և արտադրական մնացորդների /թափոնների/ տեղակայման և պահեստավորման խնդիրները:

Բոլոր հումքատեսակները և արտադրական մնացորդները ընդունվում և պահեստավորվում են փակ շինության մեջ՝ դրանց համար նախատեսված համապատասխան բետոնապատ տեղամասերում, բացառելով հողածածք տարածքները հնարավոր աղտոտումից:

Գործունեության արդյունքում առաջացած թափոնները՝ ըստ իրենց վտանգավորության դասի, Ընկերությունում հավաքվում և պահեստավորվում են դրանց համար նախատեսված ժամանակավոր կուտակման վայրերում: Այդ տարածքները կահավորված են աշխատանքի անվտանգության պահանջներից ելնելով, ինչպես նաև բնապահպանական նորմերի և պահանջների համաձայն:

Տարածքից հեռացվում կամ տրվում են վնասագերծման /ոչնչացման/ համապատասխան լիցենզավորում ունեցող կազմակերպություններին, իսկ այն թափոնները որոնք հնարավոր է օգտագործել որպես երկրորդային հումք պահվում են ընկերությունում դրանց համար նախատեսված հատուկ տարածքներում՝ բացառելով հողային և ջրային ռեսուրսների հնարավոր աղտոտումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը և այն փաստն, որ նախատեսվող գործունեության իրականացման ժամանակ նոր տարածքներ չեն օտարվելու, արտադրական տարածքը մնում է անփոփոխ, ուստի հողային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցության մեղմանն ուղղված լրացուցիչ միջոցառումների ներգրավում չի նախատեսվում:

Ջրային ռեսուրսներ

Նախատեսվող գործունեության՝ մոլիբդենի խտանյութից մոլիբդենի օքսիդի, այնուհետև ֆերոմոլիբդենի ստացման արտադրության ընդլայնման, ինչպես նաև ենթակառուցվածքների իրականացման արդյունքում տարածաշրջանի ջրային ռեսուրսների վրա լրացուցիչ ազդեցության ավելացում չի ակնկալվում: Ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվում է համաձայն «Վեոլիա ջուր» ընկերության կողմից տրված տեխնիկական պայմանների համաձայն:

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման և տեղանքի ջրային ռեսուրսները հնարավոր աղտոտումից զերծ պահելու համար գործունեության արդյունքում նախատեսված են և իրականացվում են հետևյալ միջոցառումները, որոնք կշարունակեն գործել նաև ընդլայնումից հետո.

- ջրային սկրուբերում ծծմբական անհիդրիդի կլանումը իրականացնել փակ շրջանառու համակարգի օգնությամբ,

- հիմնական սկրուբերում ծծմբային անհիդրիդի կլանումը՝ հիմնային լուծույթի փակ շրջանառու համակարգով,

- հիդրոմետալուրգիայի վակուում գտիչի ջրային գտվածքի ուղղում դեպի ջրային սկրուբերի ավազան՝ կրկնակի օգտագործման նպատակով,

- գիպսի ստացման ժամանակ առաջացած լուծույթի ուղղում դեպի հիմնային սկրուբերի ավազաններ:

8. Շրջակա միջավայրի վրա ազդեցության տնտեսական վնասի գնահատում

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$V_S = ZU_G + \Omega U_G + OU_G,$$

որտեղ՝

V_S -ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ZU_G -ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ΩU_G -ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

OU_G -ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողածածկի և ջրային ռեսուրսների վրա որևէ ազդեցություն չի նախատեսվում, հաշվարկում ներառված է միայն ՕՍԳ-ն:

Տնտեսական վնասը դա շրջակա միջավայրին հասցված վնասի վերացման համար անհրաժեշտ միջոցառումների արժեքն է արտահայտած դրամական համարժեքով:

Տնտեսական վնասը հաշվի է առնում՝

- բնակչության առողջության վատթարացման հետ կապված ծախսերը,
- գյուղատնտեսությանը, անտառային և ձկնային տնտեսություններին հասցված վնասը,
- արդյունաբերությանը հասցված վնասը:

Տնտեսական վնասը հաշվարկվել է համաձայն ՀՀ կառավարության 25.01.2005թ. N 91-Ն որոշմամբ հաստատված “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ”-ի

Յուրաքանչյուր արտանետման աղբյուրի համար տնտեսությանը հասցված վնասը գնահատվում է 1-ին բանաձևով՝

$$U = \tau_q \Phi_g \sum \varphi_i \Phi_i, \text{ որտեղ}$$

U -ն ազդեցությունն է, արտահայտված Հայաստանի Հանրապետության դրամերով,

τ_q -ն աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու) բնութագիրն արտահայտող գործակիցն է, համաձայն նշված կարգի 9-րդ աղյուսակի արտադրական հրապարակների համար ընդունվում է 4:

Φ_g -ն փոխադրման ցուցանիշն է, հաստատուն է և ընտրվում է՝ ելնելով բնապահպանության գործընթացը խթանելու սկզբունքից: Սույն կարգի համաձայն

$$\Phi_g = 1000 \text{ դրամ:}$$

φ_i -ն i-րդ նյութի (փոշու տեսակի) համեմատական վնասակարությունն արտահայտող մեծությունն է:

Φ_i -ն տվյալ (i-րդ) նյութի արտանետումների քանակի հետ կապված գործակիցն է,

Φ_i գործակիցը որոշվում է 2-րդ բանաձևով՝

$$\Phi_i = q (3 S_{U_i} - 2 U_{\text{Թ}U_i}), S_{U_i} > U_{\text{Թ}U_i} (2)$$

որտեղ՝

ՄԹԱ_i -ն i-րդ նյութի սահմանային թույլատրելի տարեկան արտանետման քանակն է՝ տոննաներով:

S_{ui} -ն i նյութի տարեկան փաստացի արտանետումներն են՝ տոննաներով:

Հաշվի առնելով, որ ցրման հաշվարկով ցույց է տրվել, որ ՄԹԿ գերազանցումներ չկան՝
 $\Phi_i = S_{ui}$

q = 1՝ անշարժ աղբյուրների համար,

q = 3՝ շարժական աղբյուրների համար:

Այն նյութերի համար, որոնց նորմատիվային կոնցենտրացիան պետական ստանդարտով չի սահմանված, ազդեցությունը չի գնահատվում:

Մթնոլորտ վնասակար արտանետումների տարեկան քանակները և միանգամյա առավելագույն սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքները բերված են տեքստի աղյուսակ 10-ում: Մթնոլորտ արտանետվող նյութերի տարեկան քանակը կազմում է 135,89 տոննա: Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի պարամետրերը և քանակները ՄԹԱ-ի հաշվարկների համար բերված են աղյուսակ 9-ում: Մոտակա 5 տարիների ընթացքում ձեռնարկության արտադրողականության փոփոխություն չի նախատեսվում, այդ պատճառով աղյուսակ 3-ի հեռանկար սյունակը չի լրացվում:

Վնասակար նյութերի մթնոլորտ արտանետումների հետևանքով շրջակա միջավայրի հասցված տնտեսական վնասը գնահատվում է 8301,8 հազ. դրամ/տարի: Ստորև ներկայացված աղյուսակում բերված է տնտեսությանը հասցված վնասի հաշվարկը [2]:

Աղյուսակ 12; Տնտեսական վնասի հաշվարկը

Վնասակար արտանետումների անվանումը	Մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի քանակը, տ/տարի			Ψ_i	σ_q	Տնտեսական վնասը, ՀՀ դրամ
	S_i	q	$P_i = S_i \cdot q$			$U = 1000 \cdot \sigma_q \cdot \Psi_i \cdot P_i$
1	2	3	4	5	6	7
Անօրգանական փոշի	4,48	1	4,48	10	4	179200
Ածխածնի օքսիդ	14,23	1	14,23	1	4	56920
Ազոտի օքսիդներ	2,5	1	2,5	12,5	4	125000
Ծծմբային անհիդրիդ	111,58	1	111,58	16,5	4	7364280
Կրի փոշի	0,2	1	0,2	10	4	8000
Ծծմբական թթու	2,9	1	2,9	49	4	568400
ԸՆԴԱՄԵՆԸ						8301800

9. Անբարենպաստ օդերեվոլյուսիայի վնասակար պայմաններում եվ վթարային իրավիճակներում նախատեսվող միջոցառումները

Մոլիբդենի խտանյութի թրծման և ֆերոհամաձուլվածքների ձուլման ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար շահագործող ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է ստորև ներկայացված միջոցառումները.

Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութային պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա՝ Արգավանդի օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Նշված որոշման դեպքում պատասխանատու անձանց կողմից անձնակազմը հրահանգավորվում և տեղեկացվում է անբարենպաստ օդերևութաբանական պայմանների հնարավոր առաջացման մասին:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Բազաներում ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների մասին որոշում կայացնելու դեպքում նախատեսված իրականացնել միջոցառումներ՝

- I կատեգորիա՝ խստացվում է տեխնոլոգիական գործընթացների վերահսկողությունը,

- II կատեգորիա՝ վառարանների դադարեցվում է թափոնների տեղափոխումը վառարանային տեղամաս,

- III կատեգորիա՝ է դադարեցվում վառարանների բեռումը նոր թափոններով, ավարտվում է թափոնների հալումը, կաղապարումը և վառարանները անջատվում են:

Հրդեհային անվտանգություն

Ա. Արտադրությունում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինի հակահրդեհային ավտոմատ սարքով, որը վերահսկում է դրա տարածքում հրդեհի յուրաքանչյուր բռնկում:

Բ. Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:

գ. Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:

Դ. Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Արտակարգ և վթարային իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ բազաների գործունեությունը դադարեցվում է, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

10. Սոցիալական ազդեցության մեղման միջոցառումներ

Նախատեսվող գործունեության համար կպահանջվեն աշխատանքային ռեսուրսներ: Ընդհանուր առմամբ սպասարկող անձնակազմի թվաքանակը նախատեսվում է ավելացնել մինչև 50 մարդ: Անձնակազմի հավաքագրման ընթացքում առաջնապատվություն կտրվի տեղական բնակչությանը:

Սպասարկվող անձնակազմը կապահովվի անհրաժեշտ արտահագուստով, անձնական պաշտպանիչ միջոցներով: ՀՀ գործող օրենսդրության պահանջներին համապատասխան նրանց համար կապահովվեն նախատեսված սննդի ընդունման հնարավորություններ /ճաշարան/, սաննհանգույցներ, լոգարաններ, հանգստի պայմաններ և այլն:

11. Շրջակա միջավայրի վնասակար ազդեցության բացառմանը կամ նվազեցմանը ուղղված միջոցառումների ծրագիր

Հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը

Նախատեսվող գործունեության հիմնական ռիսկերը կապված են առաջացող թափոնների և վառարանների ջերմային ռեժիմի ազդեցության հետ: Թափոնների հետ աշխատանքը պարունակում է ռիսկեր սպասարկող անձնակազմի համար: Վառարանների շահագործման ընթացքում առաջանում են ծխազագեր, որոնք պարունակում են տոկսիկ նյութեր, մասնավորապես ազոտի, ածխածնի, ծծմբի օքսիդներ և պինդ մասնիկներ: Հումքի և արտադրատեսակների տեղափոխությունը նախատեսված է ավտոբանասպորտային միջոցներով, ինչը կհնտենսիվացնի ճանապարհային երթևեկությունը:

Նախատեսված մեղմացնող միջոցառումները

Բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի ծրագիր

Նախատեսվող գործունեությունը բառ փուլերի	Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող միջոցառումները	Մոնիթորինգի գործողություններ	Արտաքին վերահսկողություն
<p>Տարածքի նախապատրաստում, շինարարական աշխատանքներ</p>	<p>ա/Փոշու արտանետում բ/Հողերի աղբոտում և աղտոտում դիզ. վառելիքի և յուղերի արտահոսքից գ/մթնոլորտային օդի աղտոտում դ/աղմուկ</p>	<p>Չոր եղանակներին ջրել արտադրական հրապարակները և ներքին ճանապարհները:</p> <p>Տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է շահագործվեն սարքին վիճակում՝ բացառելու համար վառելիքի և յուղերի պատահական արտահոսքը և ենթարկվեն պլանային տեխնիկական ստուգումների:</p> <p>Շինանյութերը, ներկերը և այլ նյութերը պահպանել այնպիսի պահեստներում, որ բացառվի դրանց տարածումը անձրևաջրերի հետ</p> <p>Տեխնիկա-տրանսպորտային միջոցների շարժիչները պետք է պարբերաբար ստուգվեն, կարգաբերվեն: Դիզելային շարժիչները ցանկալի է ունենան կլանիչներ;</p>	<p>Փոշոտվածության արտաքին ստուգում Շինարարական տարածքների զննում Պահեստների պլանային ստուգում Ազոտի և ծծմբի օքսիդների նմուշառում և լիցենզավորված լաբորատորիայում որոշում</p>	<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին Չարենցավանի համայնքապետարան</p>

<i>Նախաստեղծող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
<p>Ձուլարանի շահագործում</p>	<p>ա/ Մթնոլորտային օդի աղտոտում</p> <p>բ/Թափոնների կառավարում</p>	<p>Հումքը տեղափոխել ծածկված թափքերով տրանսպորտային միջոցներով</p> <p>Թափոնները ժամանակավոր պահեստավորել փակ շինության մեջ</p> <p>Պարբերաբար ստուգել գազափոշեմաքրման համակարգի աշխատանքը</p> <p>Հնարավորության դեպքում թափոններից կրկնակի օգտագործում</p> <p>Կենցաղային աղբի առանձին հավաքման տեղի կահավորում, աղբամանների տեղադրում աշխատակիցների հանգստյան տեղերում և սննդի ընդունման կետերում: Կանոնավոր աղբահանում:</p> <p>Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և գուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>Գործարանի տարածքում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ:</p>	<p>Կազմակերպել տարածքի աղտոտվածության մոնիթորինգ, եռամսյակը մեկ չափելով ածխածնի և ազոտի օքսիդների պարունակությունը և տարածքի փոշոտվածությունը</p> <p>Տեսչական ստուգումներ</p>	<p>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին</p> <p>Չարենցավանի համայնքապետարան</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Մոնիթորինգի գործողություններ</i>	<i>Արտաքին վերահսկողություն</i>
	<p>գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p> <p>Գործարանի տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր և այլն,</p>		<p>ԱՆ առողջապահական տեսչական մարմին</p> <p>ԱԻՆ պետական հրդեհային և տեխնիկական անվտանգության տեսչություն</p>

Բնապահպանական միջոցառումները կիրականացվեն շահագործման ծախսերի հաշվին, մոնիթորինգի համար նախատեսված ծախսերը կկազմեն՝ 470000 դրամ, որը նախատեսված է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության մոնիթորինգի կենտրոնում անալիզների համար /եռամսյակային 8 նմուշառում պասիվ սամպլերներով և փոշու չափում/:

Օգտագործված գրականության ցանկ

1. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
2. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕП/ЕЕА
3. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
4. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности. Стройиздат. Москва. 1982г.
5. СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий
6. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
7. «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և ՀՀ Կառավարության 1999թ. մարտի 30-ի N 192 և 2008թ. օգոստոսի 21-ի N953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ Կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի N 1673-Ն որոշում:
8. «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը»՝ հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N91-Ն որոշմամբ:
9. Методика расчёта выбросов загрязняющих веществ в атмосферу от предприятий по производству строительных материалов. Казахстан 2008г.
10. Нормативные показатели удельных выбросов вредных веществ в атмосферу, г. Харьков 1991г.
11. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Ленинград, 1986г.
12. ՀՀ Բնապահպանության նախարարություն: Հրաման N 268-Ա առ 23 հոկտեմբերի 2012 թ.: Մինչև 5.8 ՄՎտ դրվածքային հզորությամբ պինդ, հեղուկ և գազային վառելիքով աշխատող կաթսայատների վնասակար նյութերի արտանետումների հաշվարկի մեթոդական ցուցումները հաստատելու մասին:
13. Санитарные нормы проектирования промышленных предприятий СН 245-71, М.1972 г.
14. Շինարարական կլիմայաբանության ՀՀՇՆ II-7.01-2011.
15. Ամփոփագիր ՀՀ Տարածքում 2021 թ. մթնոլորտային օդի աղտոտվածության վիճակի մասին:

Հավելված 1



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՍԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «31» Հունիսի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

«ԱԼՈՓՄԵՏ» ՓԲԸ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏԼՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Կոտայք, համայնք Չարենցավան գյուղ Ալափարս Չարենցավանի խճուղի 1-ին փակուղի թիվ 8 գործարան

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՍՍԻ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՅՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայական N 2848226 գչ. 19.12.2011թ., Համայնքի ղեկավարի որոշում 14.06.2018թ. N 471

4. ՀՈՂԱՍԱՍԻ ԲԼՈՒԹՎՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 07-008-0230-0010

Մակերեսի չափը (հա)՝ 1.6

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Արդյունաբերական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ Արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	07-008-0230-0010-001	Վարչական շենք	796.4 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	07-008-0230-0010-002	Արտադրամաս-1	1046.8 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	07-008-0230-0010-003	Պահեստ	129.4 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	07-008-0230-0010-004	Արտադրամաս-2	940.2 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	07-008-0230-0010-005	Կիսաքանդակ	228.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	07-008-0230-0010-006	Օժանդակ շինություն	54.1 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	07-008-0230-0010-007	Հոր	7.9 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	07-008-0230-0010-009	պարիսպ	39.3 ք.մ., 90.39 Խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	07-008-0230-0010-008	ծածկ	13.6 ք.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երացուցիչ նշումներ և տեղեկություններ

Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցված է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջների համաձայն պայմանով՝ գույքի հետագա օտարման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումը կկատարվի վճարման պահին գործող հողամասի կադաստրային արժեքի վճարման անդորրագիրը սերկայացվելու դեպքում:



Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Էդիտա Աբգարյան
 զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի ռեգիստր
 Կ.Տ.

Վկայական N 31072018-07-0074, գաղտնի րան՝ XJARXV9GUMSU

1 Հողամասի Առողիմամբեր

	X	Y	
1	4476140.80	8471595.96	6.75
2	4476144.51	8471590.32	22.27
3	4476156.75	8471571.71	24.24
4	4476170.06	8471551.45	1.99
5	4476171.15	8471549.79	5.81
6	4476173.46	8471544.46	1.50
7	4476174.73	8471545.26	29.70
8	4476189.93	8471519.75	5.90
9	4476193.34	8471514.93	6.10
10	4476196.96	8471510.02	27.10
11	4476219.81	8471524.58	12.65
12	4476230.48	8471531.38	12.65
13	4476241.15	8471538.17	72.33
14	4476301.11	8471578.62	12.25
15	4476311.27	8471585.47	24.73
16	4476327.36	8471604.24	18.40
17	4476341.72	8471615.75	4.70
18	4476346.28	8471616.89	17.55
19	4476358.73	8471629.26	102.78
20	4476272.22	8471684.75	126.00
21	4476194.78	8471585.36	48.93
22	4476156.28	8471615.55	6.53
23	4476152.32	8471610.36	13.46
24	4476143.91	8471599.85	4.98
1	4476140.80	8471595.96	

2 Արտադրամաս-1

	X	Y	
1	4476140.80	8471595.96	55.25
2	4476171.15	8471549.79	19.16
3	4476187.16	8471560.32	4.40
4	4476190.84	8471562.73	9.50
5	4476185.62	8471570.67	4.40
6	4476181.94	8471568.25	46.35
7	4476156.49	8471606.99	5.37
8	4476152.40	8471610.47	18.57
1	4476140.80	8471595.96	

3 Պլուխառ

	X	Y	
1	4476211.13	8471525.57	5.50
2	4476214.09	8471520.93	19.44
3	4476230.48	8471531.38	8.60
4	4476225.86	8471538.63	12.80
5	4476215.07	8471531.75	3.10
6	4476216.73	8471529.14	6.64
1	4476211.13	8471525.57	

4 Արտադրամաս-2

	X	Y	
1	4476232.52	8471549.97	12.50
2	4476239.55	8471539.63	36.00
3	4476269.31	8471559.89	2.25
4	4476270.57	8471558.02	36.50
5	4476300.83	8471578.43	14.90
6	4476292.46	8471590.75	72.50
1	4476232.52	8471549.97	

6 Օժանդակ շին.

	X	Y	
1	4476292.46	8471590.75	3.20
2	4476294.26	8471588.11	10.50
3	4476302.94	8471594.01	5.90
4	4476299.62	8471598.89	8.10
5	4476292.92	8471594.34	2.70
6	4476294.44	8471592.10	2.40
1	4476292.46	8471590.75	

7 Հող

	X	Y	
1	4476300.16	8471604.11	1.49
2	4476301.00	8471602.88	0.28
3	4476300.76	8471602.72	2.52
4	4476302.18	8471600.64	2.19
5	4476303.99	8471601.87	2.52
6	4476302.57	8471603.95	0.28
7	4476302.34	8471603.79	1.49
8	4476301.51	8471605.03	1.63
1	4476300.16	8471604.11	

8 Շածկ

	X	Y	
1	4476309.06	8471598.18	2.86
2	4476310.67	8471595.81	4.77
3	4476314.61	8471598.50	2.86
4	4476313.00	8471600.86	4.77
1	4476309.06	8471598.18	

5 Անավարտ շին.

	X	Y	
1	4476319.61	8471613.92	12.40
2	4476327.36	8471604.24	18.40
3	4476341.72	8471615.75	12.40
4	4476333.97	8471625.42	18.40
1	4476319.61	8471613.92	

Հավելված 2

Հավելված 1

<<14>> 07 2022թ. կնքված պայմանագրում
փոփոխություն կատարելու վերաբերյալ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ 1

ք. Չարենցավան

30.12.2022թ.

<<ԿՈՍՈՒՆԱԼ 1>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գևորգ Աբրահամյանի, մի կողմից(կատարող) և <<ԱԼԱՓՄԵՏ>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Արմեն Մելիքյանի, մյուս կողմից (պատվիրատու) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Փոխադարձ համաձայնությամբ կողմերը որոշեցին 14.07.2022թ. կնքված պայմանագրի թիվ 1.3 կետում կատարել փոփոխություն.14.07.2022թ-ից մինչև 30.12.2022թ-ը փոխարինել 14.07.2022թ.-ից մինչև 31.12.2023թ.:
2. Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 01.01.2023թ. -ից:
3. Համաձայնագիրը կնքված է 2 օրինակից, որոնք ունեն հավասար իրավական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

Պատվիրատու

"ԱԼԱՓՄԵՏ" ՓԲԸ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Չարենցավան,
Չարենցավանի խճ.1 փակ.8

(հասցե)

"ՎՏԲ Հայաստան բանկ"

(բանկի անվանում)

16028760001100

(բանկի հաշվեհամար)



(ստորագրություն)

Կատարող

"ԿՈՍՈՒՆԱԼ 1" ՍՊԸ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Չարենցավան, 7-րդ
թաղ. 5- 30 բն.

(հասցե)

"ՎՏԲ Հայաստան բանկ"

(բանկի անվանում)

16028028547100

(բանկի հաշվեհամար)



Գ. Աբրահամյան

Հավելված 3

Հավատարմագրված է՝ Հավատարմագրված է
«Հավատարմագրման Ազգային Մարմին» ՊՈԱԿ-ի
կողմից, № 005/Ի-010, 15.07.2019- 15.07.2023թթ.
Գտնվելու վայրը՝ ք. Երևան, Ազատության պող. 24
Հեռախոս՝ (010)20-37-39

Հաստատված է՝
«Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ՝
Տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի ղեկավար

Տնօրեն _____ Ա. Բեգլարյան



ԱՐՏԱՂՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕԲՅԵՎՏԻ ՆԱԽԱԳԾԱՑԻՆ
ՓԱՏՍԱԹՂԹԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ N Փ/28-23-1-1

ք. Երևան

31.01.2023թ.

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի «ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ տնօրենի և «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ՝ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի ղեկավարի միջև 27.01.2023թ-ին կնքված №Փ/28-23 պայմանագրի՝ «30»01.2023թ-ից մինչև «31»01.2023թ-ը «Տեխնիկական փորձաքննությունների կենտրոն» ՍՊԸ՝ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի փորձագետ Ա.Բաբայանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց «ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ-ին պատկանող՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ալափարս, Չարենցավանի խճ. 1-ին փակ. թիվ 8 հասցեում գտնվող մոլիբդենային հումքի խտանյութի նախապատրաստման արտադրամաս (4 վառարան, գույք/համ Ս1-Ս4) ԱՎՕ 8/1-12897, արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնոլոգիական մասի վերազինման նախագծային փաստաթղթերը:

Վերազինմամբ նախատեսվում է արտադրական վտանգավոր օբյեկտում՝ մոլիբդենային հումքի խտանյութի նախապատրաստման արտադրամաս (4 վառարան, գույք/համ Ս1-Ս4) ավելացնել մեկ հատ վառարան, գույք/համ Ս-5:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված՝ ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ալափարս, Չարենցավանի խճ. 1-ին փակ. թիվ 8 հասցեում գտնվող «ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող գտնվող մոլիբդենային հումքի խտանյութի նախապատրաստման արտադրամաս արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնոլոգիական մասի վերազինման նախագծային փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ Կառավարության որոշում №2399 «Անվտանգության կանոնները գազի տնտեսությունում» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:


Այսպիսով, «ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ-ի կողմից շահագործվող մոլիբդենային հումքի խտանյութի նախապատրաստման արտադրամաս՝ ԱՎՕ 8/1-12897, արտադրական վտանգավոր օբյեկտի տեխնոլոգիական մասի վերազինման նախագծային փաստաթղթերը համապատասխանում են տեխնիկական անվտանգության ոլորտի օրենսդրության պահանջներին և նախագծային փաստաթղթերին տրվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության դրական եզրակացություն:

Փորձագետ _____ Ա.Բաբայան (վկայական №1475)
ստորագրություն

Հավելված 4



Հավելված 5



Հավելված 6



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՅԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ.Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, Էլ. փոստ՝ charentsavan.kotayq@mta.gov.am

N 1775-22
11 հոկտեմբեր 2022թ.

«ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մելիքյան,


Ի պատասխան Ձեր 03.10.2022թ. թիվ 5145/04 գրության հայտնում ենք,
որ Ձեր կողմից նշված արտադրամատում Նոր վառարաններ տեղադրելու համար
շինարարության թույլտվություն չի պահանջվում:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՀԱԿՈՒ ԸՆԴՊԱԼԴՅԱՆ

Կար՝ րաժնի պեր Բ. Բալթարյան

ՃԱԿԱՏ 1-9 Մ 1:200



Հավելված 7

[ALAPMETCJSC_D3]-BANK

<https://bc.vtb.am/Popup.php?print=0&page=DOCUMENT&uid=7781...>

Փաստաթուղթ

Նոր հաղորդագրություն

Վճարման հանձնարարական 230317073277028 - 0-34768162 Տպված 17/03/23 15:31:41		
Բանկ AM16000 ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ "Բանկ հաճախորդ" համակարգով		
Ամսաթիվ 17/03/23 (7118)		
Վճարողի հաշիվ	16028760001100	Գումարը
Բանկի անվանումը	AM16000 ՎՏԲ-Հայաստան Բանկ ՓԲԸ	500,000.00 AMD
Անունը կամ անվանումը	ԱԼԱՓՍԵՏ ՓԲԸ ԶԿԲ02801437 Չարենցավանի խճ.1 փակ.8 Չարենցավան ՀԱՅԱՍՏԱՆ	
Հարկային կոդ	6402801437	
Ստացողի հաշիվ	900005000196	
Ստացողի բանկը	AM90000 Կենտրոնական գանձապետարան	
Ստացող	1/ՀՀ Ֆինանսների նախարարություն գանձ 1/ապ	
Գումարը տառերով	Յիկ հարյուր հազար AMD 00	
Նպատակը	Ալգափետ ՓԲԸ, ԶԿԲ 02801437, ՇՄԱԳ փո րճաքննության տուլք	
Ստորագրություն 1		Ստորագրություն 2
Հաստատված է բանկի կողմից Entered 3b-34-33-86-00-00-00-18-b1: Confirmed		

Հավելված 8



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Կոտայքի մարզ, ք. Չարենցավան 2501,
Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1,
Հեռ.՝ (226) 43434, Էլ. փոստ՝ charentsavan.kotayq@mta.gov.am

N 1155-22
07 հուլիս 2022թ.

«ԱԼԱՓՄԵՏ» ՓԲԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Հարգելի պարոն Մելիքյան

Ի պատասխան Ձեր 2022 թվականի հուլիսի 4-ի թիվ 21 գրության հայտնում ենք, որ «Ալափմետ» ՓԲԸ-ի տարածքից դուրս 500 մետր շառավղով գոյություն ունեցող հողատարածքները ըստ նպատակային նշանակության հանդիսանում են՝

1. Բնակավայրերի

2. Գյուղատնտեսական,

3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների,

4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների:

Հարգանքով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱԿՈՒ ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

Կապ. բաժնի պետ՝ Բ. Բալբաբյան

Հեռ.՝ 094113375

Հավելված 9